
ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՆ

ԵՒ

ԻՆՉ Է ՉԱՐԸ



**ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ
ՈՒՂԻՆ
ԵՒ
ԻՆՉ Է ՉԱՐԸ
ՎԱՀԷ ՍՎԱՃԵԱՆ**



**ԹՈՐՈՆԹՕ
ՄԻԴ
- 2024 -**

Ստանալու Համար դիմել՝

Հեղինակին

Vahe Sivacian
sivacian@sympatico.ca

**Ազատ զգացեք ձեր շրջանակին զրկել, բազմացնել,
սպել ու բաժնել ձրիաբար:**

**Գրութիւնը որեւէ փոփոխութեան ենթարկել կամ
սպագրուած օրինակները ծախել
բացարձակապէս արգիւրուած է:**

Տպագրուած - Printed



THE RELIABLE PRINTER
PRINT ASSURED

15 – 2200 Markham Rd. Scarborough ON M1B2W4
Tel : 416-292-9394

STORE HOURS

MONDAY • FRIDAY: 9^{AM} – 5^{PM}



ՀՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Իմ խորին եւ սրտաբուխ շնորհակալութիւնները, ինչպէս
նաեւ երախտագիտութեան զգացումները
կը յայտնեմ այս աշխատանքի պատրաստութեան
ընթացքին իրենց խորհուրդներով, ուղղումներով
եւ թելադրութիւններով գործս դիւրացնող
կարգ մը բարեկամներու:

Աղօթարար եմ, որ Աստուած իրենց պարգեւէ
աւուղջութիւն եւ արեւշատութիւն:

*

Շնորհակալութիւն կը յայտնեմ նաեւ բոլոր անոնց,
որոնք գիրքիս մէջ գործածուած լուսանկարները
հայթայթած են:

Աղօթարար եմ, որ Աստուծոյ օրհնութիւնները
անոնց վրայէն անպակաս ըլլայ:



ՀԵՂԻՆԱԿԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

<i>Լոյս 'ի Լուսոյ (Ա)</i>	2013
<i>Լոյս 'ի Լուսոյ «Բ» - Զարթօնք</i>	2015
<i>Լոյս 'ի Լուսոյ «Գ» -</i>	
<i>Տիեզերական Օրէնքները</i>	2017
<i>Խոկում</i>	2017
<i>Աւետարանի խորհուրդները - Հատոր Ա.</i>	
<i>Յիսուսի կեանքէն դրուագներ</i>	2018
<i>Աւետարանի խորհուրդները - Հատոր Բ.</i>	
<i>Յիսուսի առակները</i>	2018
<i>Աւետարանի խորհուրդները - Հատոր Գ.</i>	
<i>Յիսուս Քրիստոսի խօսքերը</i>	2020
<i>Աւետարանի խորհուրդները - Հատոր Դ.</i>	
<i>Յովհաննոս և Թովմասի Աւետարանները</i>	2020
<i>Խորհրդածութիւններ</i>	2019
<i>«ԵՄ ԵՄ» - Ճանչնալ Աստուած</i>	2022
<i>Առաւօտ Լուսոյ</i>	2023
<i>Մահական Երանութիւնը</i>	2023
<i>Կատարելութեան Ուղին եւ Ի՞նչ է Չարը</i>	2024

ՈՏԱՆԱԲՈՐՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԾՈՅ

<i>Կենցաղալոյս</i>	2014
<i>Կենցաղալոյս (Ա, Բ, Գ)</i>	2019

Հեղինակին բոլոր հրատարակութիւնները մատչելի են համացանցային դրութեամբ:

Զանոնք ներբերման հասցէ.

<http://www.luysiluso.ca>

Հեղինակին ե-փոստի հասցէն.

sivacian@sympatico.ca

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

*Աստուածաշունչէն գրաբար, աշխարհաբար,
նաեւ եկեղեցական ժամերգութիւններէ
մէջբերումները առնուած են
հետեւեալ աղբիւրներէ.*

ՄԱՏՈՒՎԾԱՇՈՒՆԷՆՉ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՄԱՅ

ԸՍՏ

**ՃՇԿԻՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵԱՅ ՄԵՐՈՅ Դ ԶԵՎԵԱԿԱՆ
ՀԱՄԱՏԱՐՄԱՌՈՅՆ ԲԱԳՐԷ Դ ՀԱՅԿԱՄԱ ԲԱՐԲԱՌ
1805 Դ ՎԵՆԵՏԻԿ. ՈՄԾԴԻ
Դ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԵՐՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ**



ՀԱՄԱՅԱՆՅԱՅԻՆ ՄԱՏՈՒՎԾԱՇՈՒՆԷՆՉ ՀԻՆ ԵՒՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԱՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ



**ԱՂՕԹԱՄԱՏԵԱՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆԷՐ
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆԷՐ
ՇԱՐԱԿԱՆԷ
ԱՂՕԹԷ
ՏԱՂԷ
ՏՊԱՐԱՆ Յ. Գ. ՓԱԼԱԿԱՇԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ
1929**



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


- Էջ
 3- Շնորհակալություն
 4- Հեղինակին Հրատարակությունները
 5- Ծանոթություն
 6- Բովանդակություն
 7- Կենսագրական
 8- Ծնողացս
 9- Ձօն Այտային
 11- - Յառաջաբան
 15- Ա - Ի՞նչ է Կատարելություն Ուղին
 23- Բ - Ի՞նչու Կատարելություն Ուղի
 33- Գ - Աստուածաբանություն
 -Հաւատք, Յոյս եւ Սէր
 45- Դ - Ձերբադատում
 57- Ե - Իմաստություն ու Գիտություն
 75- Ջ - Յառաջացում
 92- - Ո՞վ - ոտանաւոր
 93- Ե - Երանություն
 99- Ը - Ի՞նչ է Չարը
 113- - Վերջաբան
 117- Թ Յաւելուածական
 119- - Գէորգ Զ. Կաթողիկոս
 125- - Հոգիս կ'աճապարէ
 127- - Կատարելությունը
 128- - Գիծը

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆ

Հեղինակը ծնած է Կ. Պոլսոյ արուարձաններէն Գատրգիւղի մէջ: Նախակրթարանի ուսումը ստացած է տեղւոյն Արամեան-Ունճեան Ազգ. Վարժարանէն, իսկ միջնակարգի ուսումը՝ Սէն Ժօզէֆ ֆրանսական վարժարանէն: Ընտանեօք գաղթած են Թորոնթօ-Գանատա, ուր աւարտած է իր երկրորդական ուսումը: **1968**ին վկայուած է որպէս պսակաւոր գիտութեանց՝ Թորոնթոյի Համալսարանէն: Ապա հետեւած է բժշկական ճիւղին ու մասնագիտացած ներքին Հիւանդութեանց ու սրտաբանական մարզերու մէջ: Պաշտօնավարած է Թորոնթոյի Սէն Ժօզէֆ եւ Սէն Մայքըլ Հիւանդանոցներէն ներս: Ստացած է օգնական ուսուցչապետի տիտղոս իր շրջանաւարտ եղած Համալսարանէն: Դասախօսած է թէ՛ տեղական եւ թէ՛ միջազգային բեմերու վրայ: Յօդուածներ հրատարակած է՝ արդիւնք իր Հետազոտութիւններուն եւ **2007**ին ալ դասադիրք մը՝ սիրտը քննելու նոր Հասկացողութեամբ եւ ֆիզիքական նշաններուն բնախօսական եւ ախտաբնախօսական պատճառներու բացատրութեամբ:

Դպրութեան սկսած է Գատրգիւղի Ս. Թադաւոր Եկեղեցւոյ մէջ, եօթ տարեկանին, ապա, իր ծառայութիւնը շարունակած է Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ: Ուրար կրելու իրաւունք ստացած է Սիօն Արքեպիսկոպոսէն **1960**-ներու վերջերը: Սարկաւազ ձեռնադրուած է Սէնդ Գաղերինսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Արիս Եպս. Շիրվանեանի: Եկեղեցւոյ ծառայութիւնը շարունակած է Ս. Խաչ եւ յետոյ, դարձեալ, Ս. Երրորդութիւն Եկեղեցիներուն մէջ: Մաս կազմած է Թորոնթոյի Ս. Խաչ Ազգ. Ամենօրեայ Վարժարանի Հաստատման եւ անոր Հոգաբարձութեան, որոշ շրջան մըն ալ ատենապետելով այդ կազմին: Իր Հետաքրքիր եւ քննախնդիր բնութիւնը զինք մղած է Հետազոտութեան՝ ոչ միայն բժշկական, այլ նաեւ կրօնական գեանի վրայ:





1911-1985



1904-1994



ՍԻՐԵԼԻ ԾՆՈՂԱՅՍ
ԺԻՐԱՅԻՐ ԵՒ ԻՍԿՈՒՀԻ
ՍՎԱՃԵԱՆՆԵՐՈՒ
ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ
ՍԷՐ ԵՒ ՅԱՐԳԱՆՔ



«Դուք աղեղն եղաք, ուրիշ Ձեր շահագնեւոր իբր աղբորդ նեճեր
դուրս արձակուիճան:

Աղեղնաւորը աւշուխի ձաւթուի իր թրեւաւ ԿԵ ՏԵԱՆԷ ԵՒ Աղեղն
շօրաւոր ԿԵՐՈՒԹԿ ԿԵ ԴՈՐԷ, ՈՐՈՒԷՍԺԻ ԻՐ ԱԵՏԵ ԱՐԵԳ ԵՒ ՀԵՄՈՒՄ
ԵՐԹԱՅ:

Աղեղնաւորը Ձեռքին՝ Ձեր ԴՈՐԿՈՒՄԸ ՈՐԱՆՈՒԹԵԱՐ Եղաւ
ՈՐԵԱՆ ՈՐ ԱՆ ԱԼԱՅՈՐ ԱԵՏԵ ԿԵ ՍԻՐԷ, ՆՈՅՆԵԱՆ ԱՂ ՀԱՏԱՏԱՏ Աղեղն:»
(յարատուած - Խալիլ Ճիպրան-ի «Մարգարէն» գրքէն)




1955-2010



**ՄՈՂԱ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ ԿՐ ԶՕՆԵՄ
ՎԱՂԱՄԵՌԻԿ ԿՈՂԱԿԻԾԻՄ՝
ԱՅՏԱ ՍՎԱՃԵԱՆ-Ի
ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ:**





ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ա

Այս գիրքին պարունակութեան մեծ մասը նոր տեղեկութիւններ չեն: Անոնք նախորդ հրատարակած գիրքերու զանազան նիւթերուն մէջ հոս-ու-հոս «ցանուած» էին: Նկատի ունենալով Յիսուս Քրիստոսի հետեւեալ խօսքը.

«Լըրդ՝ եղբորո՛ւնդ դո՛ւն կ'ապարեալի, որպէս է-

Հայրն Յէր Երկնաւոր կ'ապարեալ է:» (Մատթէոս 17:48)

«Ուրեմն դուք կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրն ալ կատարեալ է:»

որոշեցի այդ բոլոր տեղեկութիւնները հաւաքել՝ ամփոփել եւ քիչ մըն ալ աւելցնել ու միասնաբար ներկայացնել այս գիրքով իբրեւ մէկ նիւթ:

Դժբախտաբար համայն մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը կը հաւատայ եւ կը հետեւի իր ստեղծած կրօնքին: Ինք այդ կրօնքները ստեղծած է յենելով որոշ տուեալներու վրայ, որ իրեն տրուած են սուրբերու, մարգարէներու, իսկ մեր պարագային ալ, Յիսուս Քրիստոսի կողմէ: Շատ հաւանական է, թէ սկզբնական շրջանին մարդիկ հասկցած ըլլային այդ տուեալներուն բուն իմաստները: Բայց ժամանակի ընթացքին այդ իմաստները մոռցուած եւ անոնց մակերեսային հասկացողութեամբ ալ կրօնքներ հիմնուած են: Կարելի է աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել, թէ մարդիկ այդ տեղեկութիւնները յարմարցուցած են իրենց վատ կենցաղներուն, քան թէ իրենք իրենց կենցաղը յարմարցնեն անոնց: Աւետարանին մէջ բացայայտ գրուած է, թէ Յիսուս Հրեայ կրօնքին կը պատկանէր եւ չէր եկած օրէնքը փոխելու այլ միայն զայն իրագործելու, քանի որ Հրեայ կրօնքին առաջնորդները խեղաթիւրած էին իրենց կրօնքին տուեալները եւ ոչ իրենք կը

գործադրէին եւ ոչ ալ ժողովուրդին ճշմարտութիւնը կ'ըսէին: Միթէ Յիսուս չէ՞ ըսած:

«Մի Լամարի՛ն էլէ եկի լո՛ւծանել զօրէնս Կամ
զմարգարէս. ոչ եկի լո՛ւծանել այլ լնո՛ւ:»
(Մարգէնոս Ե:17)

«Մի կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարգարէները
աւրելու: Աւրելու չեկայ, Հապա՛ կատարելու:»:

«Վա՛յ յեզ զարայ եւ յարխեցոց կեղծաոգրայ.
Կի իսկէ՛ն զարխայո՛ւնն երկնից առաջն մարդկան.
Դո՛ւ՛ ո՛չ միանէ՛ն, եւ որոց միանէն՝ չգա՛յն լնոյլ
միանել:» (Մարգէնոս ԻԳ:13)

«Վա՛յ ձեզի, կեղծաւո՛ր դպիրներ եւ Փարիսեցիներ, որ
կը գոցէք երկինքի թագաւորութիւնը մարդոց առջեւ.
Դո՛ւ՛ք չէք մտներ, ու մտնողներուն ալ թոյլ չէք տալ՝ որ
մտնեն:»:

Ուրեմն ո՞ւրկէ ծագում առաւ Քրիստոնեայ
կրօնքը: Պօղոս էր, որ առաջին անգամ Անտիոքի մէջ
Քրիստոնեայ բառը գործածեց եւ Յ.Ք. 325 թուականին
գումարուած տիեզերական ժողովին ալ պաշտօնապէս
Քրիստոնեայ կրօնքը հիմնուեցաւ: Եթէ ժողովին պատ-
մութիւնը կարգանք պիտի «տեսնենք» եպիսկոպոսնե-
րու միջեւ եղած անհամաձայնութիւնները եւ Կոստան-
դիանոս կայսրին իշխանութիւնը: Ուրեմն Յիսուս Քրիս-
տոսի սորվեցուցած տուեալներուն խեղաթիւրումները՝
զանազան հաւատալիքները արդէն սկսած էին: Յիսուս
իր աշակերտներուն չպատուիրեց նոր կրօնք մը հիմ-
նել, այլ միայն «փրկութեան ճամբան»՝ կատարելու-
թեան ուղին քարոզել ու սորվեցնել:

«Թո՛ւյլ դո՛ւ դո՛ւ զնոսա, կո՛յրէ եմ՝ կո՛րայ
առաջնո՛րդէ: Աոյր կո՛րի յորժամ առաջնորդէ՝
սխալէ՛, եւ երկո՛ւնն ՚ի խորխորայ անկանին»:
(Մարգէնոսի ԺԵ:14)

«Թողուցե՛ք զանոնք, իրենք կոյր են, ու կոյրերու առաջնորդ: Եթէ կոյրը առաջնորդէ կոյրը, երկուքն ալ փոսը պիտի խնան»:

«... Իսկ որդի մարդո՛ւ եկեալ, Գրանիցե՛

արդեւի՜ Հաւա՛րս յերկրի»: (Ղուկաս ԺԷ:8)

«... բայց երբ մարդու որդին գայ՝ արդեօք Հաւատք պիտի գտնե՞րկրի վրայ»:

Միթէ կացութիւնը նոյնը չէ՞ր Յիսուս Քրիստոսէ 600 տարի առաջ Պոլստտայի օրով ալ: Պոլստտա բացա- յայտ ըսած է, թէ Ինք նոր կրօնք մը չէր քարոզեր, այլ միայն՝ տառապանքէ ազատում՝ «փրկութեան ճամբան»: Ինք Հնդկական կրօնքին կը պատկանէր: Բայց իրեն յաջորդող հետեւորդները Պոլստտական կրօնքը հիմ- նեցին, որ ան ալ այսօր նման Քրիստոնեայ կրօնքին բազմաթիւ յարանուանութիւններ ունի: Միթէ կացու- թիւնը նոյնը չեղա՞ւ Յիսուս Քրիստոսէ 600 տարի վերջ եւս: Մահմետական կրօնքն ալ բաժնուեցաւ երեք զատ յարանուանութիւններու՝ «Սունի», «Շիի» եւ «Սուփի» (Սուֆի):

Վերադառնալով մենք մեր նիւթին ու հարցին, եթէ կը հաւատանք Յիսուս Քրիստոսի սորվեցուցած- ներուն, պէտք չէ՞ նախ զանոնք սորվինք, հասկնանք, իւրացնենք եւ մեր կեանքերուն մէջ ալ կիրարկենք: Իսկ, եթէ այդ չենք ըներ մեր բոլոր պաշտամունքները փուճ են:

«Ո՛չ ամենայն որ ասէ ցիս՝ Տէ՛ր Տէ՛ր, մոցէ

յարգայտութիւն երկնից, այլ որ ասեւ պէամս Ըօր իմոյ որ յերկնսն է»: (Մարգեհոս Է:21)

«Ո՛չ թէ ո՛վ որ ինծի՝ Տէ՛ր, Տէ՛ր կ'ըսէ, պիտի մտնէ երկինքի թագաւորութիւնը, հապա ան՝ որ կը գործադրէ իմ երկնաւոր Հօրս կամբը»:



Երբ այս գիրքին վերոյիշեալ նիւթին համար գրածներս վերջանալու մօտ էր, միանգամայն նաեւ կէսական ժամ տեւող երեսուն եւ վեց դասախօսութիւններ մօտիկ ընելս վերջացուցի: Դասախօսութիւններուն նիւթը «Ի՞նչ է չարը»ն էր: Դասախօսը տեսակէտներ ներկայացուց սկսեալ Բաբելոնեան ժամանակներէ, հին Հրեաներէ, Յոյն փիլիսոփաներէ, հին Հրովմէական չաստուածներէ, Քրիստոնէութեան սկզբնական շրջաններէ, միջնադարեան եւ յետոյ ալ զարթօնքի ժամանակներու փիլիսոփաներէ եւ մինչեւ այսօր: Դժբախտութիւնը հոն էր, որ ինք որեւէ եզրակացութեան մը չի հանգեցաւ եւ տասնըութը ժամ խօսելով հանդերձ, ոչ մէկ հասկացողութիւն տուաւ: Նախ վատնած ժամանակիս համար զղջացի, բայց յետոյ ուրախացայ, որովհետեւ ինծի գաղափարը տուաւ, որ այդ նիւթին մասին ալ գրեմ: Պատշաճ նկատեցի այդ նիւթն ալ այս գիրքին մէջ ներկայացնել, որովհետեւ, կամ կ'ընթանանք կատարելութեան ուղիէն, կամ կը հետեւինք «չար»ին:



Բ

Գլուխ Թ - «Յաւելուածական» բաժնի մէջ տեղադրուած գրութիւնները իմս չեն, համացանցէն առնուած ոմանք հայերէնի թարգմանուած գրութիւններ են, անոնց մէկ մասին հեղինակները յայտնի չեն:





Ա

ԻՆՉ Է

ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ՈՒՐԻՆ



ԻՆՉ Է ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ՈՒՐԻՆ

Բոլոր հոգեւոր գրութիւններուն մէջ, ներառեալ Ս. Գիրքը, «կատարելութեան ուղին» զանազան ուրիշ անուններով եւս ներկայացուած է, ինչպէս են. «փրկութեան ճամբայ», «հոգեւոր ճանապարհ», «նեղ ճամբայ», «ճշմարտութեան ուղի», «Աստուածայայտնութեան ճանապարհ», «Աստուածպաշտութիւն» եւայլն:

Ամէն մարդ, որ այս աշխարհի վրայ կը ծնի, իրեն տրուած կատարելիք պարտականութիւն մը եւ պատասխանատուութիւն մը ունի: Տարբեր անձերու տրուած են տարբեր պարտականութիւններ: Տրուած պարտականութիւններէն մէկը միւսէն աւելի կարեւոր կամ վեհ է: Բոլոր պարտականութիւնները միասնաբար կը ծառայեն ընկերութեան բարելաման եւ դրական ուղիութեամբ բարեշրջման: Դժբախտաբար մարդիկ կատարուած գործերը յաճախ կը դասաւորեն եւ զանազան մակարդակի կարեւորութիւններ կուտան: Այս հիման վրայ, մարդիկ ալ կը դասաւորեն զանազան դասակարգերու: Պարզ օրինակ մըն է բաղդատել վիրաբոյժի մը ըրած գործողութիւնը որ հիւանդին կեանքը կ'ապահովէ եւ կոյուղիները մաքրող մարդու մը ըրած գործը: Շատեր առաջինը կը նկատեն շատ աւելի կարեւոր գործքան թէ երկրորդը: Այս դասաւորումը իր ծայրահեղութեան հասած է Հնդկաստանի մէջ ուր ժողովուրդը բաժնած են չորս գլխաւոր մակարդակներու (cast system): Իրենց քով, ամենաբարձր դասակարգը «պրահմին»ներն են, որոնք կարելի է բաղդատել մեր կղերականաց դասակարգին հետ, երկրորդը «թագաւոր կամ կառավարական պաշտօնեայ ինչպէս նաեւ զինուոր»ներու դասակարգն է, իսկ երրորդ դասակարգը՝ «վաճառականներու»նը: Ամենէն ցաւալի դասակարգը չորրորդն է, որ «անըզչելիներ»ու դասակարգն է: Ներկայիս, նման դատողական հայեացք մը շատ աւելի մեծ դժբախտութիւն

մըն է, որովհետեւ ան անհատին արժանաւորութեան կամ ըրած գործէն ալ կախեալ չէ, ապա՝ միայն ժառանգականութենէ: Վստահաբար անցեալին անոնք անհատին արժանաւորութեան հետ կապ ունէին, բայց ժամանակի ընթացքին խեղաթիւրուած եւ ներկայ վիճակին հասած են: Նման դատողական հայեացքը սխալ է: Ամէն գործ իր տեղը եւ կարեւորութիւնը ունի: Վերադառնալով վերեւ ներկայացուած վիրաբոյժի եւ կոյուղիները մաքրողին ըրած գործերուն բաղդատականին, եթէ կոյուղիները պատշաճ կերպով չի գործեն ամէն տուն աղտոտութիւն կը լեցուի եւ զանազան հիւանդութիւններու համաճարակներու պատճառով ալ շատ մը մահեր կրնան պատահիլ: Հետեւաբար ամէն տեսակի պարտականութիւն, որ տրուած է ոեւէ անձի, կարեւոր է եւ անձը պարտ է զայն լաւագոյնս ընել:

Քիչ մը վերեւ գրուած եզրակացութեան ճշմարտութիւնը ստուգելու եւ քիչ մըն ալ երգիծական մըթոնոլորտ մը ստեղծելու նպատակաւ այս հանգրուանին կարճ պատմութիւն մը ներկայացնել պատշաճ կը նկատուի: Շատ հաւանական է շատեր տեղեակ ըլլան այս պատմութեան:

Մարդ մը հանդարտ նստած երաժշտութիւն մտիկ ըրած ատեն ինք կարծէք կէս քունի մէջ էր: Այդ միջոցին իր մարմնի գործարաններէն ամենէն բարձրագոյնը, որ գանկին մէջ կը գտնուի՝ մարդուն ուղեղը յանկարծ հպարտութեամբ իր կարեւորութիւնը կը բացազանչէ մարմնին միւս բոլոր գործարաններուն: Ան կ'ըսէ, թէ առանց իր գործունէութեան մարդը ոչ կրնայ խորհիլ, ոչ կրնայ որոշում տալ, ոչ մէկ բանէ տեղեակ կ'ըլլայ եւ ոչ ալ իր հինգ զգայարանքներէ որեւէ տեղեկութիւն կրնայ ստանալ: Ան նաեւ կը շեշտէ, թէ մնացեալ գործարաններէն

ոչ մէկը բան մը կրնայ ընել առանց իրեն միջամտութեան եւ օգնութեան: Յանկարծ վարէն բարձրաձայն խնդալու ձայներ կու գան: Յայտնի կ'ըլլայ թէ սիրտն է որ կը խօսի ու ան կ'ըսէ. «տխմա՛ր, եթէ ես չգործեմ եւ արիւնը չչըջմ քեզի ալ թթուածին չի գար եւ դուն ալ ոչինչ կրնաս ընել, իմ գործս քու ըրած գործէդ շատ աւելի կարեւոր է»: Անմիջապէս թոքերը կը միջամտեն սրտին ըսելով. «եղբայր ի՞նչ կ'ըսես. եթէ մենք թթուածինը արիւնին մէջ չդնենք, քու գործունէութիւնդ փուճ է»: Այս բոլորին մօտիկ ընող ստամոքսը եւ աղիքները կ'որոշեն միասնաբար այս վիճաբանութեան մասնակցիլ ու կ'ըսեն. «բարեկամներ ինչո՞ւ աւելորդ պակաս կը վիճաբանիք: Զ՞էք գիտեր, որ մենք ենք ձեզի զօրութիւն հայթայթողները: Մենք ենք, որ մարդուն կերածները կը մարսենք, անոնց քիմիական զօրութիւնները կը քաղենք եւ համայն մարմնին կը բաժնենք»: Լեարդը անմիջապէս կը միջամտէ ըսելով, թէ աղիքները ոչինչ կարող են ընել առանց իր հայթայթած մարսողութիւն յառաջացնող հիւթերուն: Անմիջապէս երկու երիկամունքները միաձայն իրենց խօսքը կ'ուղղեն թէ՛ լեարդին եւ թէ՛ ալ աղիքներուն ըսելով. «ձիշդ է թէ բոլորին զօրութիւնը դուք կը բաժնէք, բայց ձեր այդ մարսողութեամբ նաեւ շատ թոյն յառաջ կը բերէք, եթէ մենք այդ թոյնները չառնենք եւ մարմինէն դուրս չհանենք, բոլորդ ալ կը թունաւորուիք ու կը մեռնիք: Վերջապէս մարմնին բոլոր մկաններն ալ կ'ուզեն երկու խօսք ըսել ու կը յայտնեն, թէ առանց իրենց մարդը ոչ կրնայ ուտելիք առնելու երթալ, ոչ անոնք եփել եւ ոչ ալ ծամել ու ուտել: Դուք ստամոքս եւ աղիքներ

ալ լեարդերն շնորհած հիւթերով առանց մարդուն կերած ճաշին ոչ մի գորութիւն կրնաք որեւէ տեղ տարածել: Երբ բոլոր այս գործարաններուն միջեւ վիճաբանութիւնը կը շարունակէր, շատ աւելի վարէն, մարմինն խորքերէն պզտիկ ձայն մը կու գայ, որ կ'ըսէր. «Ես ալ կարեւոր եմ»: Նախ չեն հասկնար թէ ձայնը ուրկէ կու գայ, բայց յետոյ կ'անդրադառնան, թէ ան սրբանէն (ժողովուրդային բարբառով երբեմն «վորի ծակ» կ'ըսուի) կու գար: Բոլոր գործարանները նախ կը լռեն, յետոյ յանկարծ բոլորն ալ կը սկսին ծաղրել ու բարձրաձայն խնդալ: Ան ալ նեղուած ու բարկացած կը սրդողի եւ իր դռները կը գոցէ եւ կը կղպէ: Քիչ ժամանկ ետք աղիքները կը սկսին տառապիլ եւ չեն կրնար իրենց պարտականութիւնը կատարել: Շատ չի տեւեր, սիրտը կը սկսի անկանոն եւ արագ զարնել, թոքերը կը սկսին հեւալ, ուղեղը կը պղտորի, մկաններն ալ կը տկարանան: Բոլորը միասին կ'որոշեն «վորին ծակը» հռչակել ամենակարեւոր գործարանը եւ անոր կ'երկրպագեն: Ան ալ «դուռը» կը բանայ:

Այս պատմութիւնը բացայայտ կ'ընէ, թէ բոլոր մարդկային գործունէութիւնները կարեւոր են եւ մէկը միւսէն վեհ չէ, հոգ չէ թէ մարդ որքան պնդէ թէ անոնք համահաւասար չեն:

Ուրեմն ետ գալով մեր բուն նիւթին, «ի՞նչ է կատարելութեան ուղին»: Հակառակ առաջին պարբերակին մէջ նշուած բառերուն. «ուղի», «ճամբայ», «ճանապարհ» ..., երթալիք տեղ մը չկայ: Ան պարզապէս հայեացք մըն է, ան ապրելակերպ մըն է, ան կենցաղ մըն է: Անտարակոյս վերոյիշեալ ֆիզիքական աշխարհի մէջ մեզի տրուած պարտականութիւնը եւ պատասխանատուութիւնը ընկերութեան օգտին համար պատշաճ կեր-

պով կատարել մաս կը կազմէ կատարելութեան ուղիին: Բայց ան շատ աւելին է: Ան նաեւ հոգեկան գետնի վրայ մեզի տրուած պարտականութիւնը եւ պատասխանատուութիւնը պատշաճ կերպով կատարելն է: Ֆիզիքականը եւ հոգեկանը իրարմէ զատել ու բաժնել անկարելի է: Ան ֆիզիքական միջոցառումներով հոգեկանը հասկնալ եւ անոր հասնիլն է: Ան պարզապէս անդրադարձ մըն է այն ճշմարտութեան, որ ներկայիս մեր գիտակցութենէն կը խուսափի: Ան Յիսուս Քրիստոսի ապրած եւ մեզի սորվեցուցած կենցաղը ապրիլն է:

Կատարելութեան ուղին շատ մը «հանգրուաններ» ունի, որոնց մասին յաջորդ գլուխներուն մէջ տեղեկութիւններ եւ բացատրութիւններ պիտի տրուին: Ինչպէս այս գիրքին կողքին վրայի պատկերը փոխաբերաբար կատարելութեան ուղին կը ներկայացնէ իբրեւ սանդուղի մը, որ անհատը կ'առաջնորդէ դէպի իր Ստեղծիչին: Կատարելութեան ուղին ալ, հարկաւ եթէ անձը հաւատքով, համբերութեամբ եւ յարատեւութեամբ իր կեանքին մէջ զայն կիրարկէ, աստիճան առ աստիճան սանդուղէն դէպի վեր՝ դէպի Աստուծոյ կը մօտեցնէ: Կատարելութեան ուղիին ամէն մի հանգրուանը ներկայացուած է սանդուղին ամէն մէկ աստիճանովը: Կատարելութեան ուղին մարդուն միտքին ուշադրութեան ուղղութիւնն է, եւ ահա՛, աս է Յիսուս Քրիստոսի Նիկողեմոսին ըսած «վերստին ծնունդին» բուն իմաստը եւ ան չէ՛ դարձեալ մկրտուիլ եւ վերստին ծնունդ ունեցած եմ ըսելը:

Կատարելութեան ուղին Քրիստոսի աշակերտը ըլլալն է եւ այդ աշակերտութիւնը իր յաջող աւարտին բերելու միջոցն է: Միթէ Յիսուս Քրիստոս չըսա՞ւ.

«Ո՛չ է աշակերտ լա՛ւ – չան սլաւոտապէս իւր, ամենայն կարարեալն՝ եղիցի իբրեւ սլաւոտապէ՛րս իւր»: (Դու-կաս 9:4)

«Աշակերտը իր վարդապետէն գերիվեր չէ՝ բայց ամէն կատարեալ աշակերտ՝ իր վարդապետին պէս պիտի ըլլայ»:

Կատարելութեան ուղին կատարեալ աշակերտ ըլլալու եւ Յիսուս Քրիստոսի պէս ըլլալու միջոցառումն է:

Կատարելութեան ուղին Յիսուս Քրիստոսի բոլոր սորվեցուցածները ընդունել, իւրացնել եւ մեր կեանքին մէջ կիրարկելն է:

Կատարելութեան ուղին նպատակի մը հասնելու համոզումը ունենալն է:

Կատարելութեան ուղին վերոյիշեալ նպատակին հասնելու համար հաւատք, համբերութիւն եւ յարատեւութիւն ունենալն է:

Կատարելութեան ուղին անհատին իր ճշմարիտ էութիւնը գտնելու փափաքը իրականացնելու միջոցն է: Միթէ ճիշդ ասոր համար չէ՞, որ հնադարեան առածը կ'ըսէ. «Մանիր գքեզ»:

Կատարելութեան ուղին անձին իր մէջ Քրիստոսի յայտնութիւնը իրականացնելու միջոցառումն է:

Կատարելութեան ուղին Աստուծոյ թագաւորութեան փորձառութիւնը ունենալու միջոցառումն է:

Կատարելութեան ուղին Աստուածահաճոյ կենցաղն է: Միթէ Յիսուսի մկրտութեան չիմացուեցաւ. «Ահա Իմ Որդիս որուն հաճեցայ»: Յիսուսի կենցաղը Հայր Աստուծոյ հաճելի էր, իսկ մերը՝ չէ: Բայց, պէտք չէ՞ մեր կենցաղն ալ Աստուծոյ հաճելի ըլլայ:

«Եւ ահա յայն յերկնից՝ որ ասէր. Դա է ըրդի

իմ «իբեւի, ընդ ըր Հաճեցայ»: (Մարգէն Գ:17)

«Եւ ահա՛ ձայն մը եկաւ երկինքէն՝ որ կ'ըսէր. «Այս է իմ սիրելի որդիս՝ որուն հաճեցայ»:





Բ

ԻՆՉՈՒ
ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ՈՒՐԻ



ԻՆՉՈՒ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ՈՒՂԻ

Վերեւ կատարելութեան ուղիին նպատակին մասին տեղեկութիւն մը տրուեցաւ: Բայց մարդ ի՞նչ պէտք ունի Յիսուս Քրիստոսի աշակերտ ըլլալու: Արդեօք բաւարար չէ՞ պարզապէս Իրեն հաւատալ, թէ Ինք Աստուծոյ Որդին է եւ մեր մեղքերուն համար մեռաւ, որպէսզի մենք փրկուինք: Եթէ աս է Իր աշակերտը ըլլալ, ինչո՞ւ պէտք ունինք կատարելութեան ուղիին: Վստահաբար, կան անձեր, որ կ'ըսեն թէ Յիսուս Աստուծոյ Որդի էր եւ Ան շատ մը գերմարդկային կարողութիւններ ունէր, մենք, պարզ մահկանացուներ, չենք կրնար Իրեն պէս ըլլալ: Միթէ նման խորհելակերպ մը չի՞ հակասեր նախորդ գլուխին վերջաւորութեան Աւետարանէն մէջբերուած Յիսուսի ըսածին: Ըստ Յիսուս Քրիստոսի, մենք ալ կարողութիւնը ունինք Իրեն նմանելու, Իր մակարդակին հասնելու: Ի՞նչ պէտք է հասկնանք ասկէ:

Նախորդ էջերուն մէջ մարդուն աշխարհիկ կեանքին համար տրուած պարտականութեան եւ պատասխանատուութեան մասին զրուցեցինք, որոնք կը ներկայացնէին ընկերութեան բարելաման համար իր կատարած գործունէութիւնը: Արդեօք բաւարար չէ՞ լաւ աշխատիլ, սիրով աշխատիլ, վնաս չհասցնել, բարի ըլլալ եւ Յիսուս Քրիստոսի հաւատալ եւ Զինք պաշտել: Միթէ աս է՞ կատարելութեան ուղին: Անտարակոյս այս բոլորը մաս կը կազմեն կատարելութեան ուղիին: Բայց ասոնց բոլորը կը ներկայացնեն կատարելութեան ուղիին միայն սկիզբը՝ «սանդուխին սկզբնական աստիճանները»: Ուրեմն ի՞նչ են նպատակները մնացեալ «աստիճան»ներուն: Այս հիման վրայ մարդ նաեւ պէտք է ունենայ շատ աւելի վեհ եւ բարձր նպատակ՝ պատասխանատուութիւն եւ պարտականութիւն մը եւս, որ տակաւին իր գիտակցութենէն կը խուսափի:

Մարդ Աստուծոյ գոյութեան կը հաւատայ, բայց

ընդհանուր առմամբ այս հաւատալը պարզապէս հաւատալիք (belief) մըն է եւ ոչ հաւատք (faith): Որովհետեւ մարդ կարող չէ իր հինգ զգայարանքներով Աստուծոյ փորձառութիւնը ունենալ: Մարդուն համար Աստուած անտեսանելի, անհասկնալի, անըմբռնելի, անհասանելի, անհուն, ամէնուրեք եւ ամենակարող Միականութիւն մըն է: Հակառակ այս բոլորին մարդ կը հաւատայ, թէ Աստուած գոյութիւն ունի, պարզապէս որովհետեւ իրեն ըսուած է, թէ Աստուած կայ: Հարկաւ կան ոմանք, որ չեն բաւարարուիր միայն ուրիշին ըսածով որեւէ բանի մը հաւատալ, որովհետեւ անձնական փորձառութեամբ ստացուած փաստ մը չունին, չեն հաւատար թէ Աստուած գոյութիւն ունի: Անոնք միայն իրենց ունեցած փորձառական գիտութիւններուն կը հաւատան: Նոյնիսկ հաւատացողներուն մէկ մասն անգամ կ'ըսեն թէ կը հաւատան, բայց իրենց կենցաղը չի համապատասխաներ իրենց հաւատացածին եւ անոնց մէկ մասն ալ հաւատալով հանդերձ երբեմն կը տարակուսին: Կան նաեւ ուրիշներ որ սրտանց եւ բացարձակ վճռականութեամբ կը հաւատան առանց գիտնալու թէ ինչի կամ Որու կը հաւատան: Անոնք կը հաւատան իրենց միտքերուն մէջ իրենց ստեղծած մտապատկերի մը: Կատարելութեան ուղիին նպատակը մարդուն տալ է այդ անձնական փորձառութիւնը, որպէսզի «հաւատալիք»ը փոխուի «հաւատք»ի:

Վերեւ մատնանշուեցաւ մարդուն իր աշխարհիկ՝ ընկերութեան բարելաւման համար, տրուած պարտականութիւն ու պատասխանատուութենէն ալ աւելի վեհ պարտականութիւն եւ պատասխանատուութիւն մը եւս: Ի՞նչ է այս պարտականութիւնը: Այս հարցումին պատասխանը գտնելու համար պարտ ենք նախ հասկնալ ստեղծագործութեան նպատակը:

Ստեղծագործութեան նպատակը Աստուածայայտ-

նութիւնն է: Եթէ կը հաւատանք մեր վարդապետին՝ Քրիստոսի, որ ըսած է. «Ես եմ Ճշմարտութիւնը», պէտք է նաեւ դիւրութեամբ հասկնանք ստեղծագործութեան նպատակը:

«Ե՛» Է՛մ ճանապարհն՝ Է՛մ ճշմարտութիւնն Է՛մ
Կէ՛անէ՛: (Յովհաննոս ԺԴ:6)

«Ես եմ ճամբան՝ ճշմարտութիւնն ու կեանքը»:

Շատեր յաճախ կը կրկնեն. «Միակ ճշմարտութիւնը Աստուածն է» ասացուածքը առանց հասկնալու թէ ի՞նչ է անոր բուն իմաստը: Եթէ միակ ճշմարտութիւնը Աստուածն է, ի՞նչ են այն բոլորը, որ ստեղծագործութեան մէջ գոյութիւն ունին եւ ամէն մարդու փորձառութեան մաս կը կազմեն: Այս հարցումին իբրեւ պատասխան երկու հաւանականութիւններ կան: Եթէ միակ ճշմարտութիւնը Աստուածն է, այս երկու հաւանական պատասխաններէն առաջինը այն է, թէ անոնք ճշմարտութիւն չեն եւ միայն պատրանքային երազ մըն են, իսկ երկրորդն ալ՝ անոնք միայն նոյն եւ մէկ Աստուծոյ զանազան երեւոյթներն են: Իսկութեան մէջ երկու պատասխաններն ալ ճիշդ են եւ անոնց ճշգրտութիւնը կախում ունի, թէ որ տեսանկիւնէ զայն կը դիտենք: Աստուծոյ տեսանկիւնէ անոնք պարզապէս «երազ» մը՝ պատրանքային են: Բայց մարդկային տեսանկիւնէ անոնք Աստուծոյ զանազան արտայայտութիւններն են: Այս երկու տեսակէտները միասին զուգահեռ կ'ընթանան: Երբ մենք ալ կը քննանք ու կ'երազենք, մենք ալ մեր երազներուն մէջ չե՞նք, մեր երազին մէջ ամէն բանի չե՞նք թափանցած: Բայց մենք մեր երազին մէջ ըլլալով հանդերձ, ամէն բանէ տեղեակ ըլլալով հանդերձ եւ ամէն տեսակ փորձառութիւն ունենալով հանդերձ, մենք հոն չենք տեսնուիր: Երագողը տեսնելու համար պարտ ենք արթննալ: Նոյն-իսկ եթէ երազին մէջ արկածի հետեւանք մեր ոտքը

կորսնցնենք, երբ արթննանք կը տեսնենք թէ երազողը չէ ազդուած եւ երկու ոտքերն ալ «ողջ ու առողջ» են: Նմանապէս ստեղծագործութիւնը Հայր Աստուծոյ երազն է եւ ինք ընդհանուր երազին մէջ թափանցած է: Միթէ չե՞նք ըսեր. «Աստուած ամէնուրեք է»: Ինք երազին մէջի պատահարներէն չազդուիր: Իսկ ամէն մի անհատի կեանքն ալ անձին իր ներքին Քրիստոսի երազն է: Քրիստոս ալ մեր կեանքի պատահարներէն չազդուիր: Եթէ կ'ուզենք երազողը՝ Քրիստոս տեսնել, պարտ ենք քունէն արթննալ: Ահա աս է նպատակը կատարելութեան ուղիին, մենք զմեզ արժանի ընել Աստուծոյ շնորհքին, որ մեզի տայ աւելի բարձր գիտակցութիւն, որպէսզի կարողանանք ճշմարտութիւնը տեսնել ու անոր փորձառութիւնը ունենալ:

Վերեւ գրուած էր, թէ ստեղծագործութեան նպատակը Աստուածայայտնութիւնն է: Աստուած Ինք Ձինք կը տեսնէ մարդոց աչքերով, Ինք Ձինք կը լսէ մարդոց ականջներով, Ինք Ձինք կը շօշափէ մարդոց ձեռքերով, կը հոտոտէ եւ կը համտեսէ մարդոց քիթերով եւ լեզուներով: Աստուծոյ ստեղծագործութիւնը՝ Իր Փիզիքական երեւոյթը Աստուծոյ Որդին՝ Քրիստոսն է: Միթէ չե՞ գրուած. «ձեր մարմինները Աստուծոյ տաճարներն են», ինչպէս նաեւ. «Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի»: Միթէ Քրիստոս չըսա՞ւ. «Ես եմ Որթատունկը, դուք ալ ճիւղերը»:

«Եթէ ո՞չ Գիտէի, զի մարմին չէր Կաճար Էն Ըոգոյն որ է 'ի չեզ' զոր ունիէն յԼսոյոս: Է- շէի անշանց Կէր ... փառա-որ արարէի զԼսոյոս 'ի մարմինս չէր է- յոգիս չէր»: (Լ Կորնթացիս .2:19-20)

«Ձե՞ք գիտեր որ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգիին, որ ձեր մէջն է, որ Աստուծոյն առած էք ու դուք ձեր անձին տէրը չէք. ... ուստի փառաւորեցէ՛ք

Աստուած ձեր մարմիններուն ու հոգիներուն մէջ, որոնք
Աստուծոյ կը պատկանին»:

«Ո՛չ Գրիգէի եղէր Կաթար էի Լադոն-ժոյ, Է-
Լոգի Լադոն-ժոյ Բնակեալ է 'ի Յէս': (Լ. Կորնթացիս
Գ:16)

«Ձե՞ք զխտեր թէ Աստուծոյ տաճար էք զուք եւ
Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի»:

«Ե՛ս եմ ո՛րքն ճշմարիտ՝ Է- Հայր իմ մշակէ՛ » :
(Յովհաննոս ԺԵ:1)

«Ե՛ս եմ ճշմարիտ որթատունկը, եւ իմ Հայրս՝ մշակն է»:

«Ե՛ս եմ որք՝ Է- դո՛ւ չես որ Հասարակեալ է
յիս՝ Է- Էս 'ի նա, նա՛ թերէ պարտ- յոյժ. զի
առա՛նց իմ ո՛չինչ կարէի առնել» : (Յովհաննոս
ԺԵ:5)

«Ես որթատունկն եմ, եւ զուք ճիւղերն էք. ա՛ն որ իմ
մէջս կը մնայ, ու ես՝ անոր մէջ, անիկա՛ շատ պտուղ
պիտի բերէ, որովհետեւ առանց ինծի ոչինչ կրնաք ընել»:

*Նաեւ պէտք չէ մոռնալ, թէ Որթատունկը
խնամողն ալ Հայր Աստուած է: Որթատունկը մէկ է,
բայց ճիւղերը բազմաթիւ: Քրիստոս մէկ է, բայց իր
յայտնութիւնը իբրեւ ստեղծագործութեան զանազա-
նութիւնները՝ բազմաթիւ:*

*Ամէն անհատի ճշմարիտ էութիւնը Քրիստոսն է:
Քրիստոսն է, որ մարդուն կեանք եւ գիտակցութիւն կու
տայ: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ Կեանքը» եւ
դարձեալ «Ես եմ աշխարհի Լոյսը»:*

«Ե՛ս եմ ճանապարհն՝ Է- ճշմարտութիւնն Է-
կեա՛նք» : (Յովհաննոս ԺԴ:6)

«Ե՛ս եմ ճամբան՝ ճշմարտութիւնն ու կեանքը»:

«Ե՛ս եմ լո՛յս աշխարհի» : (Յովհաննոս Ը:12)

«Ե՛ս եմ աշխարհի Լոյսը»:

*Ուրեմն ինչպէս վերեւ գրուած էր, եթէ ստեղծա-
գործութեան նպատակը Աստուածայայտնութիւնն է,*

չե՞նք խորհիր, թէ մարդուն տրուած, դարձեալ վերեւ յիշուած, վեհ պարտականութիւնը եւ պատասխանատուութիւնը այդ Աստուածայայտնութիւնը իրականացնելն է: Աստուածայայտնութիւնն ալ մարդուն իր մէջ Քրիստոս յայտնաբերելը չէ՞: Կատարելութեան ուղին ալ մարդուն մէջ Քրիստոսի յայտնութիւնը իրականացնելու միջոցառումն է: Յիսուս յաջողեցաւ Քրիստոս իր մէջ յայտնաբերել եւ մեզի ալ յանձնարարեց իրեն պէս ընել ու ըլլալ: Ինչո՞ւ չենք ըներ: Այս հարցումին պատասխանը յայտնի է ընդհանուր մարդկութեան բռնած ընթացքէն: Համայն մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը, ներառեալ անոնք, որոնք ինքզինքնին քրիստոնեայ կը կոչեն, չեն հաւատար Յիսուս Քրիստոսի սորվեցուցածներուն, հետեւաբար նաեւ չեն գործադրեր Անոր սորվեցուցածները: Անոնք կը նախընտրեն հետեւիլ իրենց ստեղծած կրօնքին, որ ընդհանուր առմամբ կը համապատասխանէ իրենց կենցաղին եւ շատ հեռու է Յիսուսի սորվեցուցած կատարելութեան ուղիէն: Անոնք բերնի ծամոց ըլլալով կ'ըսեն թէ Աստուծոյ կը հաւատան եւ Զինք կը պաշտեն, բայց ճշմարտութիւնը այն է, թէ իրենց «Ես»ին կապուած զայն է, որ կը պաշտեն եւ զայն կը նստեցնեն «Աստուծոյ տաճար»ին մէջի գահին վրայ, քան թէ այդ գահին վրայ նստեցնեն իրենց ճշմարիտ էութիւնը՝ Աստուծոյ Որդին՝ Քրիստոս:

«Ո՛չ ամենայն որ ասէ ցիս՝ Տէ՛ր Տէ՛ր, մոցէ

յարգայտութիւն երկնից, այլ որ ասնէ պէամս Ըօր

իմոյ որ յերկնսն է»: (Մարգէնոս Է: 21)

«Ո՛չ թէ ո՛վ որ ինծի՝ «Տէ՛ր, Տէ՛ր կ'ըսէ, պիտի մտնէ երկինքի թագաւորութիւնը, հապա ան՝ որ կը գործադրէ իմ երկնաւոր Հօրս կամբը»:

«Զիս՞որ անկա՝ յերկնից արոսեակն՝ որ ընդ

առաւօրն ծագէր. անկա՛ն յերկիր, խորհալեցա՛ն՝
որ առաւելէր առ ամենայն աշգո: Դո՛ւս ասէր ՚ի
մորի խո՛մ. ելից յերկինս, ՚ի վերոյ խան զապրեղս
երկնից արկնից զառոր իմ...» (Եսայի ԺԴ: 12-13)

«Ով առտուանց ծագող Արուսեակ, Ի՞նչպէս երկնքէն
ինկար Ու մինչեւ գետինը կործանեցար, Դու՛ն որ
ազգերը նկուռն կ'ընէիր: Դու՛ն սրտիդ մէջ ըսած էիր.
«Երկինք ելլեմ Ու իմ ամթոռս Աստուծոյ աստղերէն վեր
բարձրացնեմ» ...»

**Ծիրշդ ասոր համար անոնք յաճախ կը կրկնեն. «Ես
Յիսուս Քրիստոսի կը հաւատամ, հետեւաբար փրկուած
եմ»: Ի՞նչ բան է, որ պիտի փրկուի: Ամէն անհատի,
հաւատայ կամ չհաւատայ, հոգին Քրիստոսն է եւ անմահ
է: Հետեւաբար անոնք կ'ուզեն իրենց «Ես»ը փրկել: Աս
ալ նշան մըն է, որ անոնք տակաւին իրենց «Ես»երուն
կապուած են եւ իրենց «Ես»ն է, որ կը նստի իրենց
մարմինի՝ Աստուծոյ տաճարին մէջի գահին վրայ: Ծիրշդ
ասոր համար Յիսուս ըսաւ. «Ան որ փրկուիլ կ'ուզէ
պիտի չփրկուի»:**

«Զի որ կամիցի զանձն իւր կեցոոցանել,
կորոսցէ՛ զնա. եւ որ կորոսցէ զանձն իւր
վասն իմ՝ կեցոոցէ՛ զնա»: (Ղուկաս Թ: 24)

«որովհետեւ ո՛վ որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի
կորսնցնէ զայն, իսկ ո՛վ որ կորսնցնէ իր անձը՝ ինծի
համար, պիտի փրկէ զայն»:

«Որ խնդրիցէ զանձն իւր ասրեցոոցանել,
կորոսցէ զնա. եւ որ կորոսցէ, ասրեցոոցէ
զնա»: (Ղուկաս ԺԷ: 33)

«Ով որ ջանայ փրկել իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն.
իսկ ով որ կորսնցնէ իր անձը՝ պիտի ապրեցնէ զայն»:

**Փրկութիւնը պարզեւ մըն է, որ Աստուած կուտայ
անոնց որոնք կը յաջողին իրենց թէ՛ ֆիզիքական եւ թէ՛
ալ հոգեւոր պարտականութեանց մէջ: Ահա՛, աս է**

Իմաստը հետեւեալ համարին առնուած Յայտնութեան գիրքէն.

«Ո՞ր յաղթէ՝ արարից զնա ինչն Կաճարի
Լապտաշոյ իմոյ, եւ արդա՞ն աշլ մի եւս
եւցէ. եւ Գրեցից ՚ի վերայ նորա զանոն
Լապտաշոյ իմոյ, ...» (Յայտնութիւն Գ:12)

«Ան որ կը յաղթէ, գանիկա իմ Աստուծոյ տաճարին
մէջ սիւն մը պիտի ընեմ ու ալ դուրս պիտի չելլէ:
Անոր վրայ իմ Աստուծոյ անունը պիտի գրեմ ...»

Յաղթելը «Ես»ին յաղթելն է եւ զայն անտեսելն է:



Գիտութիւնը ճիշդ պատասխանը
ունենան է:

Ուշիմութիւնը ճիշդ Հարցումը
Հարցնէն է:

Իմաստութիւնը ճիշդ Հարցումը
Էրբ Հարցնելը գիտնան է:



Գ

ԱՍՏՈՒԱԾՊԱՀՏՈՒԹԻՒՆ
ՀԱՒԱՏՔ, ՅՈՅՍ ԵՒ ՍԷՐ



ԱՍՏՈՒԱԾՊԱՀՏՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՔ, ՅՈՅՍ ԷՒ ՍԷՐ

Շատ դժուարին եւ պարզ է կատարելութեան ուղիին՝ «սանդուխ»ին, առաջին աստիճանը: Շատ մարդիկ փորձած են եւ կը շարունակեն այս աստիճանի վրայ մնալ: Այս հանգրուանին, նոյնիսկ կարելի է գտնել անոնք որոնք Աստուծոյ չեն հաւատար: Իսկութեան մէջ կատարելութեան ուղին կը սկսի մեր մանկութեան, երբ մեր ծնողքները մեզ կ'առաջնորդեն դէպի եկեղեցի: Շատեր եկեղեցի կ'երթան, նոյնիսկ անոնք որոնք Աստուծոյ չեն հաւատար: Անձնապէս ճանչցած եմ անձ մը, որ նոյնիսկ եկեղեցւոյ մէջ ծառայած է իբրեւ սարկաւազ եւ ըսած է, թէ Աստուծոյ գոյութեան չի հաւատար:

Անտարակոյս, իսկական եկեղեցին հաւատացեալներու հաւաքական Աստուածպաշտութիւնն է: Շատեր այս չափով կը բաւարարուին: Բայց ան շատ աւելին է: Եթէ ժամերգութիւններուն եւ Ս. Պատարագին բուն իմաստը հասկնանք, եկեղեցական արարողութիւնները մեզ աստիճան առ աստիճան կ'առաջնորդեն կատարելութեան ուղիին մէջ յառաջանալ:

Եթէ անհատը իսկապէս կը հաւատայ Յիսուս Քրիստոսի, կը հաւատայ նաեւ Յիսուսի սորվեցուցածներուն եւ իսկապէս կը փափաքի զանոնք կիրարկել իր կեանքին մէջ: Ան չի բաւարարուիր միայն հաւատալով Անոր Աստուծոյ Որդին ըլլալուն եւ մեր մեղքերուն համար մեռնելուն:

«... Ըմէն ամէն ասէ՛մ թէ որ Լաւ-ասրա՛յն
յի՞ս զԴորժ» զոր էս Դորժե՛մ, էս նա՛
Դորժե՛սցէ էս մեծամեծա՛ն է՛ս ինչ զնոյնս
Դորժե՛սցէ ... »: (Յովհաննէս ԺԳ:12)

«Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի:

Ա՛ն որ կը հաւատայ ինծի, ի՛նք ալ պիտի ընէ այն
գործերը՝ որ ես կ'ընեմ, եւ անոնցմէ աւելի՛ մեծ գործեր
պիտի ընէ, ...»:

Ուրեմն առաջին հանգրուանը ճշմարիտ հա-
ւատքն է: Հոգ չէ, թէ այս հանգրուանին ան տակաւին
պարզապէս հաւատալիք (belief) մը ըլլայ: Հաւատքէն կը
ծագի սէր, պաշտամունք եւ երախտագիտութիւն:
Մանուկ մը, որ իր ծնողքին խնամքին կը կարօտի,
միթէ չի՞ սիրեր իր մայրը, միթէ երախտապարտ չէ՞ եւ
չի՞ պաշտեր զայն, եթէ ոչ, ինչու երբոր շուկան իր
մայրը կորսնցնէ կը սկսի լալ: Առանց հաւատքի սէր
կարելի չէ, առանց սիրոյ պաշտել կարելի չէ եւ առանց
պաշտելու երախտագիտութիւն կարելի չէ: Դժուար է
հաւատք արծարծել «մէկու» մը, որ չենք տեսած եւ չենք
ճանչնար: Միթէ չենք ըսեր. «Աստուած անհասանելի,
աներեւոյթ, անըմբռնելի եւ անհասկնալի է»: Զիշդ
ասոր համար Քրիստոս յայտնուեցաւ Յիսուսի մէջ եւ
Յիսուսով Ան եղաւ տեսանելի, հասկնալի եւ հասանելի:
Տեսանելիութիւնը մեզի տուաւ հաւատքը: Հասկնալին
մեզի տուաւ երախտագիտութիւն եւ սէր եւ սէրէն ալ
կը ծագի իսկական պաշտամունքը: Յիսուս երբոր ըսաւ.
«աշակերտը պէտք է վարդապետին նմանի»,

«Ո՛չ է աշակերտ լա՛ւ չան զվարդապետի ինք,
ամենայն կարարեալն՝ եղիցի իբրեւ զվարդապետի
ինք»: (Դոմէան 2:4)

«Աշակերտը իր վարդապետին գերիվեր չէ. բայց ամէն
կատարեալ աշակերտ՝ իր վարդապետին պէս պիտի ըլլայ»:
մեզի նաեւ տուաւ հասանելիութեան գաղափարը, որ
յոյսն է: Միթէ Պօղոս չէ՞ր, որ ըսաւ երեք կարեւոր
յատկութիւնները՝ հաւատքը, յոյսը եւ սէրը:

«Ի՛նչ արդ՝ մնան հաւատի, յոյս, սէր, սո՛վ
երբե՛կեան. եւ մեծ չան զսոսա՛ն սէր է»: (Լ.
Կորնթացիս ԺԳ:13)

«Իսկ հիմա սա՛ երեքը կը մնան՝ հաւատքը՝ յոյսը՝ սէրը․
բայց սէ՛րն է ասոնց մեծագոյնը»:

Այս հանգրուանին պաշտամունքը ամենակարեւոր արարքն է, որովհետեւ ան կը յայտնէ եւ կը յայտարարէ անհատին ունեցած հաւատքը ու սէրը: Բայց ի՞նչ կը հասկնանք պաշտամունք կամ Աստուած պաշտել ըսելով: Պաշտելը պարզապէս եկեղեցի երթալ աղօթել եւ շարական երգել չէ: Անտարակոյս ասոնք ամենանախնական քայլերն են պաշտամունքին: Բայց եթէ կը հաւատանք, որ միակ ճշմարտութիւնը Աստուածն է, նաեւ պէտք է հաւատանք թէ ստեղծագործութեան մէջ ամէն ինչ Աստուծոյ զանազան արտայայտութիւններն են: Այս հիման վրայ պէտք չէ՞ ամէն ինչ սիրենք ու պաշտենք: Մարդ իր սիրածին եւ պաշտածին հետ վատ չի վարուիր: Զիշդ ասոր համար չէ՞ր, որ Յիսուս ըսաւ սիրել մեր թշնամիները:

«Լուսարուի աղապէսն զի ասացաւ․ Սիրեացէս
զննէր ին, եւ աղեացէս զԴնամին ին: Եւ եւ
ասեմ Սիրեցէի զԴնամին յեր․ օրհնեցէի
զանիշիշս յեր․ Թարի արարէի աղեւտաց յերոց․
եւ աղօթս ՚ի վերայ այֆոցիկ՝ որ լլկեան զՅեւ եւ
Հալաթեան»: (Մատթէոս Ե:43-44)

«Լսեր էք թէ ըսուեցաւ․ «Սիրէ՛ ընկերդ եւ ասէ՛
թշնամիդ»: Բայց ես կը յայտարարեմ ձեզի․ «Սիրեցէ՛ք
ձեր թշնամիները՝ օրհնեցէ՛ք ձեզ անիծողները՝ բարիք
ըրէք անոնց՝ որ կ'ատեն ձեզ՝ եւ աղօթեցէ՛ք անոնց
համար՝ որ կը պախարակեն ու կը հալածեն ձեզ»:

Իսկ մարդ արարած ի՞նչ կ'ընէ: Քիչ մը շահի համար անտառներու ծառերը անխնայ կը կտրէ, խեղճ անասունները կը չարչարէ, օդը ջուրը կ'ապականէ, կարծէք ան բնութեան դէմ պատերազմ հռչակած է: Նման հայեացքով ան Աստուծոյ դէմ պատերազմ հռչակած կ'ըլլայ: Մարդ, Ծննդոց Ա:26-ի մէջ գրուած․ «Աստուած

մարդուն իշխանութիւն տուաւ բոլոր անասուններուն վրայ»-ին սխալ հասկացողութեամբ, իր անձնական շահին համար զանոնք կը գործածէ, կը մեռցնէ, կը չար-չարէ ...: Աստուած մարդուն տուաւ յաւելեալ իմացակա-նութիւն եւ անհատականութիւն, որպէսզի ան իշխանու-թիւն ունենայ եւ զսպէ իր անասնական բնոյթը, որպէս-զի կարողանայ յայտնաբերել իր Աստուածային բնոյ-թը, ան ինչ, որ Յիսուս ըրաւ: Ըստ մեր Հաւատամքին կ'ըսենք, թէ Յիսուս կատարեալ մարդ էր: Այսինքն ան մարդկային բնոյթ ունէր: Բայց Յիսուս նաեւ ունէր Աս-տուածային բնոյթ: Մենք ալ ունինք երկու զատ բնոյթ-ներ՝ մարդկային եւ անասնական: Անասունները կ'ուտեն, կը խմեն, կը քնանան, կը կռուին, կը բազմանան, իրենց ուտելիքին համար կ'աշխատին՝ կ'որսան ...: Իսկ մարդ-կութեան մեծ մասը ի՞նչ կ'ընէ: Միթէ անասուններուն ըրածին նոյնը չ'ընե՞ր: Ճիշդ է, թէ մարդ նաեւ կ'ու-սանի, երբեմն կարեկից կ'ըլլայ, երբեմն օգնող, որոնք ծագում կ'առնեն իր մարդկային բնոյթէն: Բայց Յիսուս մեզի սորվեցունց, թէ մարդ չի կրնար երկու տէրոջ ծա-ռայել:

«Ոչ ոք կարէ երկուց տէրանց ծառայել. կամ
 զմին ապրիցէ եւ զմեւսն տիրիցէ՞ կամ զմին մեծա-
 րիցէ՝ եւ զմեւսն արհամարիցէ. ոչ կարէ՛ Մա-
 րոշոյ ծառայել եւ մամոնայի» (Մատթէոսի .9:24)
 «Ոչ մէկը կրնայ ծառայել երկու տէրոջ. որովհետեւ
 կամ պիտի ստէ մէկը եւ սիրէ միւսը. կամ պիտի յարի
 մէկուն ու արհամարէ միւսը: Չէք կրնար ծառայել
 Աստուծոյ եւ մամոնային»:

Հետեւաբար չի կրնար իր Աստուածային բնոյթը
 յայտնաբերել առանց իր անասնական բնոյթը ամբող-
 ջութեամբ անտեսելու: Կատարելութեան ուղին նաեւ
 այս փոփոխութիւնը իրականացնելու միջոցն է:

Երբ մարդ կը յաջողի յառաջանալ կատարելու-

Թեան ուղիին մէջ, կամաց-կամաց իր հաւատքը, որ նախ պարզ հաւատալիք (belief) մըն էր, կը փոխուի անխախտելի հաւատքի (faith): Այդ հանգրուանին իր կեանքն ալ՝ կենցաղը կ'ըլլայ շարունակական Աստուած-պաշտութիւն մը, ինչպէս նաեւ այդ կեանքը կը վերածուի շարունակական աղօթքի մը: Ինք կը «տեսնէ» Աստուած՝ Քրիստոս ամէն անհատի, ամէն անասունի, ամէն բոյսի եւ ամէն ինչի մէջ եւ բոլորին հետ իր յարաբերութիւնը կ'ըլլայ այն ինչ, որ պիտի ըլլար եթէ ինք Քրիստոսի ներկայութեանը, իր հետ դէմ-առ-դէմ գտնուէր:

Նման մակարդակի մը հասնելու համար, նախ անհատը պէտք է անդրադառնայ, թէ ինք խաւարամիտ է եւ իմաստութեան կը կարօտի, որպէսզի կարողանայ ճշմարտութիւնը աւելի լաւ հասկնալ: Ինք նաեւ պէտք է անդրադառնայ, թէ ինք իր մէջ՝ ներքին գանձ մը ունի: Այդ գանձը իր մէջ Քրիստոսի ներկայութիւնն է, որ ինք իբրեւ մարդ, իր ազատ կամքով Զայն յայտնաբերելու կարողութիւնը ունի:

Գանձդ ողորմութեան,

Գանձիդ ծածկելոյ,

Գլտող զիս արա:

Առաւօտ Լուսոյ երգէն

«Լերանի աղէպարայ Ըոգ-ո՛վ, պի նոցայ է

արէպար-բիւն Երկնից»: (Մարգէն Լ:3)

«Երանի՛ հոգևով աղքատներուն, վասն զի երկնքի թագաւորութիւնը անոնցն է»:

Անհատին ունեցած իր ներքին գանձին անդրադարձը կը ներկայացնէ իր անդրադարձը նկատմամբ իր հոգեկան «աղքատութեան», որովհետեւ այդ գանձը իրեն չէ յայտնուած: Այդ հոգեկան աղքատութիւնն ալ կը ներկայացնէ նաեւ իր խաւարամտութիւնը:

Անհատը իր մէջ Քրիստոսի գոյութեան փորձա-

ռութիւնը չունենալուն համար ինք ո՞րքան կը տխրի: Մարդիկ պարզապէս ընտանեկան անդամ մը երբ կը կորսնցնեն գետի չափ արցունք կը թափեն: Իսկ Քրիստոսի ներկայութեան գիտակցութեան կորուստին համար արդեօք քանի՞ կաթիլ արցունք կը թափեն: Միթէ Յիսուս Իր լերան քարոզով աս չէ՞ր, որ մեզի սորվեցուց:

«Երանի ագաւորաց, զի նո՛ւա մխիթարեալցին»:

«Երանի խաղցելեալ եւ շարաւի իցեն արդարո՛ւ-

լեան, զի նո՛ւա յագեցին» : (Մատթէոսի Ե:4 եւ 6)

«Երանի՛ սգաւորներուն, վասն զի անոնք պիտի մխիթարուին»:

«Երանի՛ անոնց որ անօթի ու ծարաւ են արդարութեան, վասն զի անոնք պիտի կշտանան»:

Եթէ անհատը իսկապէս սուգ կը բռնէ իր անդրադարձած կորուստին՝ Իր մէջ Քրիստոսի ներկայութեան փորձառութեան կորուստին համար, այն ատեն ինք պիտի մխիթարուի: Այս մխիթարանքը կամաց-կամաց Քրիստոսի յայտնութիւնն է իր մէջ: Այս յայտնութիւնը անհատին յայտնաբերած գիտակցութեան մակարդակին բարձրացումն է, որ անոր կու տայ յաւելեալ իմաստութիւն եւ ճշմարտութիւնը «տեսնելու»՝ հասկնալու կարողութիւնը: Միթէ մարդուն կեանքը եւ իր ունեցած գիտակցութիւնը Աստուծոյ ներկայութիւնը չէ՞ իր մէջ: Որպէսզի այս յայտնութիւնը իրականանայ անձը պէտք է իր ամբողջ էութեամբ ցանկայ զայն իրականացնել անտեսելով բոլոր միւս բազմաթիւ ցանկութիւնները, որոնք ընդհանուր առմամբ յաճախ կը գրաւեն մարդուն գիտակցութիւնը: Այս ցանկութեան որակը պարտ է համապատասխան ըլլալ «անօթի ու ծարաւ»ի մը պատառ մը հացէն ու գաւաթ մը ջուրէն ուրիշ ոչինչի ցանկալուն: Միակ արդարը Աստուածն է: Հետեւաբար ցանկալ արդարութիւն, կը նշանակէ ցանկալ Աստուած:

Միթէ պէտք չէ՞ մեր կեանքի բոլոր պատահարները, լաւ ու վատ, ընդունինք իբրեւ Աստուծոյ կամքը, որովհետեւ Աստուած արդար է: Ճիշդ ասոր համար Յիսուս ըսած է. «Սուրբ Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են»:

«Ամէն ասեմ չեւ, պիտի մեռնայն թողցի որդեայ մարդկան մեղք՝ եւ Հայհոյութիւնն՝ որչափ եւ Հայհոյեացեն, թայց որ Հայհոյեացեւ զՀոգին առբի, ոչ ոնկիցի թողոտիւն յաւիտեան, այլ պարտապան լիցի յաւիտեանցն մեղաց:» (Մարկոս Գ:28-29)

«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ՛ ամէն մեղք պիտի ներուի մարդոց որդիներուն եւ Հայհոյութիւնները՝ որչափ որ Հայհոյեն. Բայց ով որ Սուրբ Հոգիին դէմ Հայհոյէ, յաւիտեան թողութիւն պիտի չունենայ, Հապա յաւիտեանական դատատանին պարտաւոր պիտի ըլլայ:»

«Եւ ամէնայն որ ասէ թան զորդեայ մարդոց, թողցի նա. Բայց որ զՀոգին առբի Հայհոյեացեւ, մի թողցի նա:» (Գալատ ԺԲ:10)

«Ամէն ով որ Որդի մարդոց դէմ բան ըսէ, պիտի ներուի անոր, բայց ան որ Սուրբ Հոգիին դէմ Հայհոյութիւն ընէ, պիտի չներուի անոր:»

«... ամէնայն մեղք եւ Հայհոյութիւնն թողցի մարդկան, Բայց զՀոգեայն Հայհոյութիւնն մի թողցի:» (Մարկոս ԺԲ:31)

«... Ամէն մեղք ու Հայհոյութիւն պիտի ներուի մարդոց. բայց Սուրբ Հոգեայն դէմ եղած Հայհոյութիւնը պիտի չներուի մարդոց:»

Աստուած ամենեւին անարդար չէ: Աստուած սէր է, ներողամիտ է, ողորմած է ու նաեւ արդար է: Քանի Քրիստոսի յայտնութիւնը կ'աւելնայ անհատին մէջ, անհատն ալ նոյն չափով կը յայտնաբերէ այդ արդարութիւնը իր կենցաղին մէջ: Քրիստոսի յայտնու-

Թիւնը ցանկալ ներկայացուած է նաեւ Հին Կտակարանին մէջի «Երգ Երգոց» գլուխին մէջ: Մակերեսային հասկացողութեամբ այդ գլուխը կը թուի մարդու մը եւ կնոջ միջեւ տեղի ունեցած սիրաբանութեան պատմութիւն մը ըլլալ: Ճշմարտութիւնը այն է թէ ան իր վերացական իմաստով Աստուծոյ եւ մարդու միջեւ գոյութիւն ունեցող սէրը կը ներկայացնէ: Անտարակոյս Աստուծոյ ունեցած սէրը անհուն է եւ ան հոն պատշաճ որակով ներկայացուած է, իբրեւ մարդուն ունեցած սէրը հանդէպ կնոջ: Բայց մարդուն՝ այսինքն մեր, Քրիստոսի հանդէպ ունեցած սէրը արդեօք կը համապատասխանէ՞ հոն ներկայացուած կնոջ յայտնաբերած սիրոյ որակին: Ս. Գիւրգին մէջ, մարդ յաճախ ներկայացուած է իբրեւ Քրիստոսի հարսը եւ Քրիստոս ալ Փեսան: Մի-թէ Յիսուս տասը կոյսերու առակով նոյն գաղափարը չէ՞ որ կը ներկայացնէր: Հինգ յիմար կոյսերը խաւարամիտ մարդը կը ներկայացնեն, իսկ իմաստուն կոյսերն ալ զարթօնք ունեցողները: Շատ հաւանական է, որ Ս. Ներսէս Շնորհալի իր յօրինած «Նորաստեղծեալ» երգին վերջին տունին «Սիօնի Որդիք»ի պարունակութեան գաղափարը «Երգ Երգոց»ի ճիշդ հասկացողութեան հենելով գրած ըլլայ (տես «Առաւօտ Լուսոյ» խորագրեալ գիրքս): «Երգ Երգոց»ին մէջի պատմութեան մէջ սիրահարուած կինը երբ իր սիրահարը կը կորսնցնէ գիշերուան մութին փողոց կ'իյնայ զայն փնտռելու: Նման կացութիւն կը պատահի երկու անգամ: Առաջին անգամին ան կը յաջողի իր սիրահարը գտնել: Գիշերուայ մթութիւնը կը ներկայացնէ մարդուն խաւարամտութիւնը: Ուրեմն կանուխէն մարդ պէտք է սկսի իր ներքին Քրիստոսը՝ իր Փեսան փնտռել: Երկրորդ անգամին իր սիրահարը չի գտներ եւ նոյնիսկ գինք փողոցը կը ծեծեն ու կը վիրաւորեն: Աս ալ կը համապատասխանէ Յիսուսի ըսած յաջորդ խօսքին:

«Երանի որ Հալածելի իցեն Վասն արդարութեան,
 զի նոցա է արժայութիւն երկնից: Երանի է Յեզ'
 յորժամ նախարարիցեն զՅեզ էւ Հալածեացեն, էւ
 ասիցեն զամենայն Բան շար զՅենջ սոոր՝ Վասն
 իմ: ցնծացել էւ ուրախ լերուի. զի վարձի Յեր
 Բազում էն յերկնս. ...» (Մարբէտի Ե:II-12)

«Երանի՛ անոնց՝ որ Հալածուած են արդարութեան
 Համար, Վասն զի երկնքի թաղաւորութիւնը անոնցն է:
 Երանի՛ է ձեզի, երբ կը նախատեն ձեզ ու կը Հալածեն
 եւ սուտ տեղը ամէն կերպ գէշ խօսքեր կը խօսին ձեր
 վրայ ինծի Համար: Յնծացէք եւ ուրախ եղէք, Վասն զի
 ձեր վարձքը շատ է երկինքը. ...»:

Ուրեմն, կատարելութեան ուղիին մէջ յառաջանալու Համար պարտ ենք ունենալ նպատակ, որ է Աստուածայայտնութիւնը մեր մէջ իրականացնել: Նաեւ պէտք է ունենանք հաւատք եւ յոյս, թէ պիտի յաջողինք այդ Աստուածայայտնութիւնը իրականացնել:

«Լմէն ամէն ասեմ Յեզ, Եւ որ Հաւարայն
 յիս, զԳործս զոր էս Գործեմ, էւ նա
 Գործեացէ, էւ մեծամեծս էս իան զնոյնս
 Գործեացէ. զի էս աս Հայր երթամ:»
 (ՅովՀաննոս ԺԴ:12)

«Ան որ ինծի կը Հաւատայ, այն գործերը որոնք ես կը
 գործեմ, ինք ալ պիտի գործէ եւ անոնցմէ աւելի մեծ
 գործեր պիտի գործէ: Վասն զի ես Հօրս քով կ'երթամ:»

Այս հաւատքը կը ծագի սէրէ եւ յոյսն ալ՝ համբերութեանէ եւ յարատեւութեանէ: Իսկ աս վերջիններն ալ կը սերին անհատին ճշմարտութեան փորձառութիւնը ունենալու ցանկութեան որակէն: Ոչ պարզ հաւատալը (belief), այլ իսկական զօրաւոր անհուն հաւատքը (faith) ինքնին արդէն աստուածապաշտութիւնն է: Եթէ հաւատքը աստուածապաշտութիւնն է, ուրեմն աստուածապաշտու-

Թիւնն ալ կարելի կ'ըլլայ բացարձակ անձնատուութեամբ: Անձնատուութիւնը վստահիլ է Աստուծոյ հետեւաբար չչեղիլ կատարելութեան ուղիէն, որովհետեւ այդ ուղին ըստ Աստուծոյ կամքին խորհիլ, խօսիլ ու գործելն է: Նման հայեացք կամ կենցաղ մը կը բանայ անհատին միտքը ու ան կ'ամբարէ գիտութիւն եւ կը գիտակցի, թէ ինչպէս պէտք է յաջող կերպով յառաջանայ կատարելութեան ուղիի յաջորդող աստիճաններէն:

Մարդուն նպատակը պէտք է ըլլայ ինքզինք իբրեւ սուրբ մը ձեւացնելով Աստուած տպաւորել, այլ՝ պարզապէս իր կենցաղով Զայն պաշտել:

Գիտութեան մասին յաւելեալ տեղեկութիւն պիտի տրուի այս գիրքին Ե. գլուխին մէջ:





Ն

ՉԵՐԲԱԶԱՏԻՈՒՄ



ՉԵՐԲԱԶԱՏԻՈՒՄ

Աստուած մարդը ստեղծեց ազատ կամքով: Բաղդատմամբ միևս բոլոր անասուններուն, յաւելեալ ըլլալով, մարդ ունի անհատականութիւն մը, ազատ կամք ինչպէս նաեւ դատելու ու զատելու կարողութիւնը շնորհիւ իրեն տրուած յաւելեալ իմացականութեան: Մարդ կը կարծէ, թէ ինք իր ազատ կամքով որոշումներ կ'առնէ եւ զանոնք կը գործադրէ: Պարզ օրինակ ըլլալով նկատողութեան առնենք անոր հագուելիք հագուստը: Ան կ'որոշէ երեք զանազան հագուստներէն մին հագուիլ: Կամ շուկայ կ'երթայ կօշիկ գնելու եւ երկու կամ երեք զատ գոյգ կօշիկներէն կը զատէ մին: Ինք կը կարծէ, թէ այս որոշումները, ինչպէս նաեւ իր առօրեայ կեանքին մէջ առած բոլոր որոշումները, ինք իր ազատ կամքով առած է: Այսօր, ուղեղային ելեկտրականութեան գործունէութիւնները արձանագրելով, փաստուած է, թէ անհատը տակաւին իր որոշումը չտուած, մօտաւորապէս 0,3 երկվայրկեան (300 msec.) առաջ ուղեղը արդէն սկսած է այդ որոշումը գործադրել: Եթէ որոշումը տուողը անհատը ինք չէ, ուրեմն ո՞վ է, որ այդ որոշումները տուած է: Կը թուի անհատը ազատ կամք չունենալ: Մարդուն առած այդ որոշումներուն բոլորը կը համապատասխանեն անհատին ենթագիտակցութեան մէջի տեղեկութիւններուն, այսինքն կը համապատասխանեն իր բնոյթին: Անհատը կը կարծէ թէ ինք իր ազատ կամքով որոշած է, բայց ճշմարտութիւնը ան է, թէ իր բոլոր որոշումները կը պատկանին իր բնոյթին: Կը թուի մարդ ազատ կամք չունենալ: Ուրեմն, ո՞ւր մնաց մարդուն ազատ կամքը: Ինչի՞ կը ծառայէ ան: Այս հարցումին պատասխանը ստորեւ նկատողութեան պիտի առնուի եւ պատշաճ տեղեկութիւն պիտի տրուի: Որովհետեւ հարցը բաւականին բարդ է, պատշաճ է նախ նկատողութեան առնել հետեւեալը:

Ի՞նչ է մարդուն բնոյթը:

Մարդուն բնոյթը սերտ կապ ունի մարդուն միտքին հետ: Մարդուն միտքին որակը, ինչպէս նաեւ անոր մարմնի կազմը, արդիւնքն են իր ճակատագրական «յիշողութեան», որ իր ոգիին նախկին մարմնացումներէն մնացած իր խորհուրդ, խօսք ու արարքներուն հոգիին մէջ տեղադրած տեղեկութիւններուն հետեւանքն է: Մարդուն բնոյթը իր միտքի որակէն զատ նաեւ մասամբ կազմուած է, ընդհանուր առմամբ, ուրիշներու կողմէ իրեն տրուած տեղեկութիւններու, հաւատալիքներու ... հետեւանք, որոնք իր ենթագիտակցութեան մէջ տեղաւորուած մաս կը կազմեն իր բնոյթին: Անտարակոյս, այն բոլոր տեղեկութիւնները՝ մարդուն հաւատացածները (beliefs), իր ենթագիտակցութեան մէջ տեղաւորուած են ըստ «իր» կամքին: Բայց ըստ վերեւ տրուած տեղեկութեան, մարդ կը թուի ազատ կամք չունենալ: Եթէ մարդուն անհատականութիւնը իրեն տրուած ազատ կամքով չէ որոշած իր բնոյթը, ուրեմն որո՞ւն կամքն է, որ որոշած է անոր բնոյթը: Մարդուն բնոյթը նաեւ կախում ունի թէ ո՞վ կամ ի՞նչն է, որ կը կառավարէ իր միտքը եւ իր իմացականութիւնը: Մարդուն բնոյթն ալ կը համապատասխանէ այդ կառավարողին կամքին:

Նախ քան մարդուն միտքը կառավարողին ո՞վ կամ ի՞նչ ըլլալը ուսումնասիրելէ, հասկնանք, թէ մարդ քանի բնոյթներ ունի:

Ընդհանուր ստեղծագործութիւնը կը յառաջանայ ըստ Աստուծոյ դրած բարեշրջումի օրէնքին: Ճիշդ ասոր համար մօրը արգանդին մէջ աճող սաղմը նախ կը նմանի ձուկի, յետոյ թռչունի, յետոյ չորքոտանիի եւ վերջապէս, մօտաւորապէս երբ երեք ամսուայ է, կը նմանի մարդու: Ուրեմն իր բարեշրջումէն մնացած մարդ նաեւ ունի անասնական բնոյթ մը: Անտարակոյս

ան նաեւ ունի մարդկային բնոյթ մը եւս: Որովհետեւ մարդուն ճշմարիտ էութիւնը իր Հոգին՝ Քրիստոսն է, մարդ նաեւ կարողութիւնը ունի իր մէջ յայտնաբերել Աստուածային բնոյթ մը եւս՝ ան ինչ որ Յիսուս ըրաւ եւ մեզի ալ ըսաւ նոյնը ընել: Ահա՛, աս է իմաստը կրօնքին եւ Յիսուսի կեանքին ու իր սորվեցուցածներուն: Դժբախտաբար այսօր համայն մարդկութիւնը լուր անգամ չունի, թէ ինք նման կարողութեան տէր է, հետեւաբար ջանք անգամ չընեն այդ ուղղութեամբ:

Աւելի տեղեկութիւն տալէ առաջ նկատողութեան առնենք Յիսուսի մի քանի յատկանշական խօսքերը՝ տուած տեղեկութիւնները՝ ճշմարտութիւնները:

- «Ձեր մարմինները Աստուծոյ տաճարներ են»:
- «Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսիդին է»:
- «Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի»:
- «Դուք բոլորդ Աստուծոյ որդիներ էք»:

«Եթէ ո՞չ Գեղէի, զի մարմին չէր դաճար էն Ընդոյն որ է 'ի յեզ' զոր ունիէն յԼսրո-ծոյ: Եւ չէի անշանց դէր ... փառաւոր արարէի զԼսրո-ած 'ի մարմինս յէր էւ յԳրն յէր»: (Լ Կորնթայն .9:19-20)

«Ձէք գիտեր որ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգիին, որ ձեր մէջն է, որ Աստուծմէ առած էք ու դուք ձեր անձին տէրը չէք. ... ուստի փառաւորեցէ՛ք Աստուած ձեր մարմիններուն ու Հոգիներուն մէջ, որոնք Աստուծոյ կը պատկանին»:

«... ոչ Գայ արեւոյն-Երն Լսրո-ծոյ խորանօղ. Եւ շասիցէն Եւ աւա-ասիկ ասդ է՝ կամ անդ, զի աւա արեւոյն-Երն Լսրո-ծոյ 'ի ներդ' 'ի յեզ է: (Ղուկաս .1:20-21)

«... Աստուծոյ թագաւորութիւնը դուին երեւցած բաներով չի գար: Օր մըն ալ պիտի չըսեն թէ 'Ահա Հոս է', կամ 'Ահա' Հոն', վասն զի Աստուծոյ

Թագաւորութիւնը ձեր ներսի դիւն է»

«Ո՛չ Գրիգէի եղէ Կաճար էի Լադոն-ժոյ, Է-
Լոգի Լադոն-ժոյ Բնակեալ է ի յէջ»։ (Լ. Կարնիսյան
Գ։16)

«Ձե՞ք դիտեր թէ Աստուծոյ տաճար էք դուք եւ
Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի»։

«Տե՛ւէ՛ի՛ որպէսի՛ սեր շնորհեաց մեզ Լադոն, պի
որդի՛ի՛ Լադոն-ժոյ Կոչեացո՛ւի մէ՛ի»։ (Լ.
Յովհաննէս Գ։1)

«Ձեռնէ՛ք թէ Հայրը ինչպիսի՛ սեր շնորհեց մեզի,
որպէսզի մենք Աստուծոյ զաւակներ կոչուինք. ...»։

Եթէ մեր մարմինները Աստուծոյ տաճարներն են,
պէտք չէ՞ Աստուած ալ իր տաճարին մէջ ըլլայ։
Աստուած նաեւ իր Թագաւորութեան մէջ է եւ այդ
Թագաւորութիւնն ալ մեր մէջն է։ Միթէ ամէն մարդու
ճշմարիտ էութիւնը իր ներքին Քրիստոսը չէ՞։ Ճիշդ
ասոր համար ալ Յիսուս ըսած է. «Աստուծոյ Հոգին ձեր
մէջ կը բնակի»։ Իսկ Աստուծոյ Որդին ալ Քրիստոսը չէ՞։

Ուրեմն ո՞րը կամ ի՞նչ է մեր եւ Յիսուսի միջեւ
եղած տարբերութիւնը։ Յիսուս Հայր Աստուծոյ հաճելի
որդին էր, իսկ մենք՝ իր որդիները ըլլալով հանդերձ,
մեր կենցաղով Հայր Աստուծոյ հաճելի չենք։ Յիսուս իր
մէջ Քրիստոսը յայտնաբերեց, իսկ Քրիստոս մեր ճշմար-
իտ էութիւնը ըլլալով հանդերձ Ձայն կ'անտեսենք ու
չենք յայտնաբերեր։

Յիսուսի եւ մեր միջեւ եղած տարբերութեան
պատճառը ի՞նչ է։

Ընդհանուր ստեղծագործութիւնը հիմնուած է
երկուութեան վրայ, որովհետեւ ան ճշմարտութիւն մը
չէ, այլ՝ պատրանդային երազ մը։ Աստուած միակեանու-
թիւն է եւ Ժամանակի ենթակայ չէ։ Ժամանակն ալ ունի
անցեալ եւ ապագայ։ Աստուած միայն ներկային մէջն է։
Ներկան յաւիտենական է։ Մարդուն անհատականու-

Թիւնն ալ մաս կը կազմէ ստեղծագործութեան, հետեւաբար ենթակայ է երկուութեան եւ ունի երկու բեւեռներ: Անհատականութեան ժխտական բեւեռը կը ներկայացնէ մարդուն «Ես»ը: Իսկ անոր դրական բեւեռը հաղորդութեան մէջ է իր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի հետ: Հակառակ, որ մարդ իր Ֆիզիքական կեանքը կ'ապրի միայն ներկային մէջ, ան իր մտային կեանքը կ'ապրի այդ երկուութեան շուքին տակ: Անոր միտքը անընդհատ զբաղ է անցեալի յուշերով կամ ապագայի յոյսերով եւ ան կ'անտեսէ յաւիտենական ներկան:

Այս հանգրուանին, նկատողութեան առնենք վերեւ ներկայացուած երկու հարցումները եւ ջանանք անոնց բացատրութիւնները տալ:

Նախ հասկնանք թէ որո՞ւն կամքովն է, որ մարդու բնոյթը կը կազմուի: Մարդ իր մանկութեան կանուխէն կը գիտակցի իր «Ես»ին ներկայութեան: Ընդհանրապէս այդ անդրադարձը կ'ըլլայ երկու տարեկանին: Շուտով «Ես»ը «կառքին սանձը ձեռք կ'առնէ»: Հետեւաբար յաջորդող բոլոր տարիներուն մարդուն բնոյթը կը կազմուի ըստ իր «Ես»ին կամքին եւ ոչ իր ազատ կամքին: Մարդը առանց անդրադառնալու, իր իմացականութիւնը եւ տրամաբանելու կարողութիւնը տակաւին լրիւ չկազմուած, կը գատէ իր «Ես»ը որ զինք կառավարէ: Ան իր «Ես»ը կը նստեցնէ Աստուծոյ տաճարին մէջի Աստուծոյ գահին վրայ: Ահա՛, «Լուսաբեր հրեշտակին» Աստուծոյ գահին վրայ նստիլ ուզելուն իմաստն ալ աս է: «Ես»ը եսասէր է եւ կը յառաջացնէ ամէն տեսակի եսասիրական գաղափարներ, հակումներ, ինչպէս նաեւ այն յատկութիւնները որոնք կը ճանչնանք իբրեւ եօթը մահացու մեղքերը:

Այս հանգրուանին պատշաճ է պատասխանել առաջին հարցումին՝ եթէ մարդուն բոլոր որոշումները կ'ըլլան ըստ իր բնոյթին, հետեւաբար ըստ իր «Ես»ին կամ-

քին, ի՞նչի կը ծառայէ իր ունեցած ազատ կամքը: Մարդ իր ազատ կամքով կ'որոշէ, թէ ո՞վ պիտի նստի Աստուծոյ գահին վրայ, իր «Ես»ը՝ սատանան, թէ իր ճշմարիտ էութիւնը Քրիստոս՝ Աստուած: Նման որոշում մը պարզ արարք մը չէ եւ երկարատեւ եւ յարատեւ պայքարի կը կարօտի: «Ես»ը թէ՛ խորամանկ եւ թէ՛ ալ ճարպիկ է: Ան չ'ուզեր Աստուծոյ գահէն վար իջնել եւ մարդուն անհատականութեան վրայ ունեցած իշխանութիւնը կորսնցնել: Հետեւաբար մարդ պարտ է արթուն ու աշխոյժ ըլլալ եւ ծուղակը չիյնալ: Բայց երբ ան կը յաջողի իր «Ես»ը անտեսել, իր անհատականութիւնն ալ անոր ճիրաններէն կ'ազատի: Երբ անհատը կ'անտեսէ իր անհատականութեան ժխտական բեւեռը ան ինքզինք ձերբազատած կ'ըլլայ իր «Ես»էն: Այն ատեն իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս կը նստի Աստուծոյ գահին վրայ Աստուծոյ տաճարին մէջ: Աստուած ամենակարող ըլլալով հանդերձ չի պարտադրեր իր կամքը մարդուն վրայ, ան ինչ որ «Ես»ը կ'ընէ: Այլ, Աստուած կը սպասէ, որ մարդը իր ազատ կամքով իր որոշումը տայ ու գործադրէ: Երբ անհատը կ'որոշէ ու կը յաջողի, իր բնոյթն ալ կը կազմուի ըստ Աստուծոյ կամքին ու իր որոշումներն ալ կ'ըլլան ըստ իր նոր բնոյթին, հետեւաբար՝ ըստ Աստուծոյ կամքին: Մարդը իր ազատ կամքով նաեւ պարտականութիւն մը եւս ունի: Այն բոլոր սխալ տեղեկութիւնները՝ հաւատալիքները, մահացու մեղքերը՝ ծուլութիւն, բղջախոհութիւն, բարկութիւն, նախանձ, որկրամոլութիւն, ազահութիւն եւ հպարտութիւն պարտ են անհետանալ եւ անոնք փոխարինուիլ առաքինութիւններով՝ ժրջանութիւն, ողջախոհութիւն, ներողամտութիւն, եղբայրսիրութիւն, ժուժկալութիւն, ողորմածութիւն եւ հեզութիւն: Որպէսզի անհատը յաջողի, ան կը կարօտի Աստուծոյ շնորհքին: Երբ Քրիստոս է նստած Աստուծոյ

զահին վրայ, Աստուծոյ՝ Ս. Հոգիի շնորհներն ալ առատօրէն կը տեղան անհատին վրայ: Միթէ՞ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ դուռը»:

«Է» եմ դուռն. ընդ իս թէ ո՛չ հրանիցէ,
կեցցէ՛. հրցցէ՛ եւ ելցէ, եւ ճարա՛կ գրցէ»:
(Յովհաննոս Ժ:9)

«Ես եմ դուռը. եթէ մէկը ներս մտնէ ինձմէ՛ պիտի փրկուի. պիտի մտնէ ու ելլէ՛ եւ արօտ գտնէ»:

Այդ շնորհներն են՝ հաւատք, իմաստութիւն, գիտութիւն, բարեպաշտութիւն, վճռականութիւն, երկիւղածութիւն եւ խոհեմութիւն: Մարդ պէտք չէ կարծէ, թէ տարիներով զինք կառավարող բնոյթը փոխել, դիւրին է: Ան կը կարօտի երկարատեւ յարատեւութեան եւ համբերութեան: Ան կարելի կ'ըլլայ շարունակական Աստուածապաշտութեամբ: Միթէ՞ հաւատքը եւ երկիւղածութիւնը Աստուածապաշտութիւն չեն:

Ազատ կամքին երկրորդ պարտականութիւնը անտեսել է անհատին անասնական բնոյթը եւ յարիւ է դէպի իր Աստուածային բնոյթին, որպէսզի յաջողի զայն յայտնաբերել իր մէջ, այն ինչ, որ Յիսուս ըրաւ: Մարդ ընդհանրապէս կը ճօճի իր երկուն՝ մարդկային եւ անասնական, բնոյթներուն միջեւ: Անասնական բնոյթը կը կառավարուի իր «Ես»ին կողմէ: Հետեւաբար, եթէ անձը յաջողած է ինքզինք իր «Ես»էն ձերբազատել, պարտ է նաեւ անտեսել իր անասնական բնոյթը: Ճիշդ աս էր, որ Յիսուս մեզի սորվեցունց անապատին մէջ իր փորձութիւններուն տոկալով եւ դիմադրելով ու իր «Ես»ին յաղթելով: Միթէ՞ Յիսուս չէ՞ ըսած. «մարդ երկու տէրոջ չի կրնար ծառայել»: Մարդ չի կրնար թէ՛ իր «Ես»ին ծառայել եւ միանգամայն չի կրնար նաեւ Աստուծոյ՝ իր ներքին Քրիստոսի ծառայել: Մարդ առանց իր անասնական բնոյթը ամբողջութեամբ անտեսելու նաեւ չի կրնար իր Աստուածային բնոյթը իր մէջ

յայտնաբերել: Այս ուղղութեամբ ձեռք բերուած յաջողութիւն կը ներկայացնէ ամբողջութեամբ կենցաղի մը փոփոխութիւնը եւ որոշ չափով ալ Քրիստոսի յայտնութիւնը անհատին մէջ: Ինք իր հաւասարակշռութիւնը գտնելով, ամէն ինչ կ'ընդունի իբրեւ Աստուծոյ կամքը:

Ազատ կամքին երրորդ նպատակն ալ հասկնալ է, թէ իր հինգ զգայարանքներէ ստացած բոլոր տեղեկութիւնները կը պատկանին պատրանքին եւ չեն ներկայացներ ճշմարտութիւնը: Միթէ Քրիստոս չէր ըսած. «Ես եմ ճշմարտութիւնը»: Ուրեմն, աշխարհիկ կեանքը պատրանքային երազ մըն է եւ անհատը պէտք է ձգտի «զարթօնք»ի, որպէսզի տեսնէ իր «կեանքը» երազողը՝ Քրիստոս: Մարդ կարծելով, թէ այս պատրանքը ճշմարտութիւն մըն է, ան կապուած է անոր եւ կը հետապնդէ աշխարհիկ ցանկութիւնները ու հաճոյքները, որովհետեւ անոնք իրեն կուտան արժամեայ երջանկութիւն մը: Մարդ տակաւին յաւիտենականութեան տուած երանութեան փորձառութիւնը չէ ունեցած, չ'ուզեր ինքզինք ձերբազատել վերոյիշեալ աշխարհիկ հետապնդումներէ: Նման ձերբազատում մը կարելի է միայն Աստուծոյ պարգեւած գիտութեան շնորհքով: Գիտութիւնը իրեն կը յայտնէ ճշմարտութիւնը: Այսօր, նոյնիսկ ամբողջական բնագիտութեան գիտունները եւս կ'ըսեն, թէ տիեզերքը, ներառեալ աշխարհը ճշմարտութիւն մը չեն այլ միայն ողջագիր (holograph) մը: Երբ անհատը աշխարհի մէջ ապրելով հանդերձ, իր բոլոր պարտականութիւնները լիովին կատարելով հանդերձ, առանց անոնց արդիւնքները իւրացնելու, կ'անտեսէ պատրանքը ինք կը ստանայ Աստուածային գիտութիւն, որ է իմաստութիւն եւ աւելի բարձր գիտակցութիւն: Բարձր գիտակցութիւնը իրեն պատրանքը ճշմարտութենէն զանազանելու կարողութիւնը կուտայ: Աս կարելի կ'ըլլայ երբ իր անհատականութիւնը կը հաղորդուի

Քրիստոսի հետ երբ երկուքը կ'ըլլան մէկ: Այն ատեն ինք փորձառութիւնը կ'ունենայ ամէն ինչի միականութեան եւ կը հասկնայ, թէ այդ միականութիւնը միակ ճշմարտութիւնն է: Վերոյիշեալ աշխարհիկ հաճոյք եւ ցանկութիւններուն կապուածութիւնը եւ փրկութիւնը իրար կը հակասեն: Դժբախտաբար կան աղանդներ, որոնց անդամները յաճախ կը կրկնեն թէ փրկուած են: Բայց անոնց կենցաղը յայտնի կ'ընէ, թէ անոնք տակաւին կապուած են իրենց «Ես»ին (Հին Կտակարանին մէջ գրուած «ուրիշ աստուած» մը, որ պէտք չէ որ զայն պաշտենք): Անոնք տակաւին կը հետապնդեն աշխարհիկ ցանկութիւններ՝ նիւթական հարստութիւն, ըստացւածքներ (Հին Կտակարանին մէջ գրուած մեզի «կուռք» մը չչինեմ):

«Մի եղիցին չեւ այլ ասորոսաժէ Բայ յինէն: Մի արասցէս դոս չեւ կոսոս ըսոր ամենայն նմանութեան. որ ինչ յերկինս 'ի վեր, որ ինչ յերկիր 'ի խնարհ, եւ որ ինչ 'ի ջոսոս 'ի ներշնչ երկրի»: (Ելից Ի:3-4)

«Ինձմէ վատ ուրիշ աստուածներ մի՛ ունենար: "ոչ մէկ կուռք չինէ դուն քեզի՝ "ոչ ալ որեւէ կերպարանք բանի մը որ վերը՝ երկինքի մէջ է՝ վարը՝ երկրի վրայ է՝ կամ ջուրերուն մէջ է՝ երկրի տակ»:

Իսկ Յիսուս ըսած էր հետեւեալը.

«Չի որ կամիցի պանշն իւր կեցոցանել, կորոսցէ՝ պնա. եւ որ կորոսցէ պանշն իւր վան իմ՝ կեցոցանել՝ պնա»: (Ղուկաս Թ:24)

«որովհետեւ ո՛վ որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, իսկ ո՛վ որ կորսնցնէ իր անձը՝ ինձի համար, պիտի փրկէ զայն»:

«Որ խնդրիցէ պանշն իւր ասորեցոցանել, կորոսցէ պնա. եւ որ կորոսցէ, ասորեցոսցէ

պնա» : (Ղուկասոս ԺԷ:33)

«Ով որ ջանայ փրկել իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն։
Իսկ ով որ կորսնցնէ իր անձը՝ պիտի ապրեցնէ զայն»:

Ուրեմն իբրեւ ամփոփում, կատարելութեան ուղի-
ին մէջ յաջող կերպով յառաջանալու համար մարդ
պարտ է պատշաճ կերպով օգտագործէ իրեն շնորհուած
ազատ կամքը:

Ազատ կամքին նպատակն է իրականացնել
հետեւեալ չորս անհրաժեշտութիւնները.

- Ձերբազատուիլ իր «Ես»էն:

- Ձերբազատուիլ իր անասնական բնոյթէն:

- Պատշաճ կերպով փոխել իր մարդկային բնոյթը:

- Ձերբազատուիլ պատրանքէն՝ աշխարհի կապուած-
ծութենէ:

Իսկ հետեւեալ երկուքին մասին յաջորդական
գլուխներուն մէջ պատշաճ տեղեկութիւն պիտի տրուի:

- Ձերբազատուիլ բոլոր խորհուրդներէն:

- Ձերբազատուիլ բոլոր զգացումներէն:



Ասցեալը քեզի տրուած

Դաս մըն է:

Ներկան քեզի տրուած

Նուէր մըն է:

Ապագան քեզի տրուած

Հարժառիթ մըն է:



Ե

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՈՒ
ԳԻՏՈՒԹԻՒՆ



ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ու ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ըստ Հին Կտակարանի Առակաց գիրքին, Աստուած տակալին ստեղծագործութեան չսկսած, առաջին ըլլալով իմաստութիւնը գոյութիւն ունեցած է, նոյնիսկ ժամանակի եւ միջոցի գոյութենէն առաջ:

«Եւ իմաստութիւնն բնակեցայ 'ի խորագիտութեան, զխորհուրդս եւ զգիտութիւնն կոչեցի յիս»:
(Լուսկաց Բ:12)

«Եւ իմաստութիւնը, խորագիտութեան հետ կը բնակիմ, եւ մտախորհութեան գիտութիւնը կը յայտնաբերեմ»:

«Տէր Հասարակաց զիս 'ի սկիզբն ճանապարհաց իւրոց 'ի Գործս իւր. յառաջ ձան զյաւիտեանս Հասարակաց զիս: Իսկզբանէ յառաջ ձան զէրկիրսս»:
(Լուսկաց Բ:22-23)

«Տէրը զիս ստեղծեց իր ճանապարհին սկիզբը՝ իր գործերուն համար, յաւիտեանականութենէն ալ առաջ ստեղծեց զիս: Ան զիս ծնաւ սկիզբին, երկրին ստեղծումէն ալ առաջ»:

Հետեւաբար ընդհանուր ստեղծագործութիւնը իմաստութեամբ ի յայտ եկած է: Իմաստութիւնը Աստուծոյ գիտակցութեան (consciousness) արդիւնքն է: Ընդհանուր տիեզերքի մէջ միայն մէկ գիտակցութիւն կայ, որ Աստուծոյ անհուն գիտակցութիւնն է: Ստեղծագործութեան մէջ ամէն ինչ՝ նիւթ, բոյս, անասուն ու մարդ, զայն կը յայտնաբերէ զանազան մակարդակներով եւ ըստ այնմ կը գիտակցի ու կը հասկնայ իր «միջավայրը» եւ «կեանքը»: Մարդոցմէ զատ, նիւթ, բոյս ու անասուններու յայտնաբերած գիտակցութեան մակարդակները առաջուց որոշուած են ու անփոփոխ: Մարդիկ կարողութիւնը ունին իրենց գիտակցութեան մակարդակը իրենց յայտնաբերած ներկայ մակարդակէն, որ «արթուն» մակարդակ կը կոչուի, շատ աւելի բարձր մակարդակներու փոխելու, այն ինչ որ Յիսուս յաջողած

էր ընել: Նոյնիսկ, խորունկ քունի եւ երազի գիտակցութեան մակարդակներէն աւելի բարձր մակարդակը, որ «արթուն» մակարդակ կը կոչենք, մանր չափերով փոփոխութեան կենդարկուի օրուայ մէջ, նաեւ մանր չափերով կը տարբերի զանազան անհատներու մէջ: Մարդուն յայտնաբերած գիտակցութիւնը որքան բարձր ըլլայ, անհատն ալ աւելի իմաստուն կ'ըլլայ: Իմաստութիւնը անհատին կու տայ ճշմարտութիւնը հասկնալու կարողութիւնը, ինչպէս նաեւ ճիշդ դատելու ու զատելու կարողութիւնը: Կատարելութեան ուղիին մէջ պատշաճ կերպով յառաջանալու համար իմաստութիւնը անհրաժեշտ է: Անհատի մը համար պարզապէս ուզելով իմաստութեան տէր ըլլալ կարելի չէ: Անտարակոյս խոր ծերութեան մէջ կեանքի փորձառութիւններէն որոշ դասեր սորված անձեր այդ դասերուն տուած պատշաճ գիտութեան հետեւանք աւելի իմաստուն կ'ըլլան: Բայց բարձր որակով իմաստութիւնը, անձին մէջ Աստուածային բարձր գիտակցութեան յայտնութիւնը, Ս. Հոգիի շնորհներէն մին է: Անհատը պարտ է զայն ստանալու համար ինքզինք արժանի ընել: Այս արժանեւորութեան միջոցառումները ներկայացուած են այս գիրքին նախորդական գլուխներուն մէջ: Մեր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոսն է «դուռը», որմէ կարելի է ստանալ Ս. Հոգիի շնորհները: Միթէ չէ՞ գրուած.

«Եւ եմ դռնն. ընդ իս թէ ո՛վ մօռնիցէ,
կեցցէ՛. մօրցէ՛ եւ ելցէ, եւ ճարա՛կ գորցէ»:
(Յովհաննոս Ժ:9)

«Ե՛ս եմ դուռը. եթէ մէկը ներս մտնէ ինձմէ՛ պիտի փրկուի. պիտի մտնէ ու ելլէ՛ եւ արօտ գտնէ»:

Երբ մեր այս աշխարհիկ կեանքի ընթացքին կ'անտեսենք մեր ճշմարիտ էութիւնը եւ կը փարինք մեր «Ես»-ին, արդե՞օք կարելի է, որ ստանանք Ս. Հոգիի պարգեւները: Իսկ եթէ մենք զմեզ արժանի կ'ընենք, Քրիստոս

ալ, որ մեր միակ ու ճշմարիտ ուսուցիչն է,

«Բայց դու՛ն է՛ մի գո՛տ կոչե՛լ վարդապետ գլխին
 չէր ուսուցիչ... Եւ՝ մի կոչեցի՛ն ուսուցիչ, գլխին
 ուսուցիչ չէր Բրիտանիան է» : (Մարտին ԻԳ : 8, 10)
 «Բայց դուք Ռաբբի մի՛ կոչուիք՝ վասն զի ձեր
 Ուսուցիչը մեկ է՝ այսինքն Քրիստոս : ... Եւ դուք
 ուսուցիչներ մի՛ կոչուիք՝ վասն զի ձեր Ուսուցիչը մեկ
 է՝ այսինքն Քրիստոս» :

մեզի կու տայ հասկացողութիւն եւ հոգեւոր կեանքի
 նկատմամբ պատշաճ գիտութիւն, որպէսզի յաջողինք
 մեր կեանքին բուն նպատակը՝ իր յայտնութիւնը մեր
 մէջ, իրականացնել :

«... ո՛րչափ է՝ ուսուցիչ Ընդհանր չէր յերկնից
 ցացել Բարձր աշխարհ, որ խնդրեանն ի նմանէ» :
 (Ղուկասոս ԺԷ : 13)

«... ո՛րչափ աւելի ձեր Հայրը երկինքէն Սուրբ Հոգին
 պիտի տայ անոնց՝ որ կը խնդրեն իրմէ» :

«Բայց յորժամ եկեացէ մեծօրինակ, գործ է
 անաշխարհ չէլ ի Հօրէ պաշտօնն ճշմարտութեան
 որ է Հօրէ եւանջելն ձա՛կնայեացէ վասն իմ» :
 (Յովհաննէս ԺԵ : 26)

«Բայց երբ Միտիթարիչը գայ՝ որ ես Հօրմէն պիտի
 դրկեմ ձեզի, ճշմարտութեան Հոգին՝ որ կը բխի
 Հօրմէն, անիկա՛ պիտի վկայէ իմ մասին» :

«Լյուսնակեան որ անարգէ ո՛չ պարտաւոր անարգէ
 այլ պարտաւոր որ է՝ երբ պաշտօնն ուսուցիչ ի
 չէլ» : (Լ. Թեոֆանիէս Դ : 8)

«Ուստի ան որ կ'անարգէ՝ կ'անարգէ ո՛չ թէ մարդ մը,
 հապա Աստուած՝ որ իր Սուրբ Հոգին ալ տուաւ մեզի» :

Մարդ արարած յաճախ կ'ըսէ, թէ Աստուած կը
 փնտռէ : Ան Աստուածային գիտութեան տէր ըլլալ կը
 փափաքի ու ինք իր վրայ ունեցած վստահութեամբ կը
 հետեւի զանազան կրօնքներու, կ'անդամակցի զանազան

կազմակերպութիւններու, կ'այցելէ սրբավայրեր, բայց աւա՛ղ, իր ուզածը գտնելու անկարող կ'ըլլայ: Մարդ պէտք է ինք իրեն վստահի: Յաջողութեան համար ան պէտք ունի վարդապետի մը: Իսկ պատշաճ վարդապետ մը գտնելու համար ալ, կ'երթայ մինչեւ Հիմալաեաները, ան է հասկսած Յիսուս Քրիստոսի ըսածներուն բուն իմաստները: Ըստ Աւետարանին, իր փնտռած վարդապետը իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոսն է, որ ինք իր «Ես»ին փարելով, Ջայն ամբողջովին կ'անտեսէ: Իր փնտռած գիտութիւնը Աստուածային շնորհք մըն է, որ իրեն կը տրուի Քրիստոսի կողմէ երբ ինքզինք արժանի կ'ընէ զայն ստանալու: Տիեզերական ճշմարտութիւն մըն է, որ Աստուած ամենուրեք է, հետեւաբար, ինչո՞ւ նաեւ իր մէջ ալ չ'ըլլայ: Մինչեւ որ ինք իր մէջ «Սուրբ սիրտ» չկերտէ անկարելի է, որ յաջողի:

«Երանի այնոցիկ՝ որ սուրբ էն սրբիւմ, պի նո՛ւս

պէսսոսա՞ծ յեացեն»: (Մարգէնի Ե: 8)

«Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են, վասն զի անոնք պիտի տեսնեն Աստուած»:

Մարդ կարող է շատ մը տեսակ գիտութիւններու տէր ըլլալ: Ան դպրոց կ'երթայ, իր զատած որոշ նիւթերու նկատմամբ ամբարած գիտութեամբ կարելի է հանճար մը ըլլալ: Ջանազան գիրքեր կարդալով շատ մը գիտութիւններու տէր կարելի է ըլլալ: Բայց հոգեւոր կեանքի մէջ յառաջացման համար, պատշաճ գիտութեան տէր ըլլալու համար, ան կը կարօտի իր Վարդապետին օրհնութեան եւ պարգեւած շնորհքին: Միայն անոնք, որոնք լրիւ՝ մարմնապէս, մտային եւ իմացականօրէն, կը յանձնուին իրենց Վարդապետին՝ Քրիստոսի, կ'արժանանան ստանալ բարձր գիտակցութիւն ու իմաստութիւն, որոնք իրեն կու տան հասկացողութիւն հետեւաբար բարձր գիտութիւն: Այս բոլորը անկարելի կ'ըլլայ եթէ անհատը ամբողջութեամբ էջ անտեսած իր

«Ես»ը ու բացարձակ հաւատք չէ ունեցած իր Վարդապետին վրայ: Իսկ երբ անհատը ամբողջութեամբ կը վստահի իր Վարդապետին, ինչ որ փափաքի կ'իրականանայ: Ծիշդ աս էր Յիսուս Քրիստոսի ըսածը.

«Ես ցոր ինչ խնդրիցէ՛լ յանձն իմ, արարից ցայն».

«Ի փառաւորեացի Հայր յորդի»: (Յովհաննոս ԺԴ:13)

«Ի՛նչ որ խնդրէք իմ անունովս՝ պիտի ընեմ զայն՝ որպէսզի Հայրը փառաւորուի Որդիով»:

Բայց ընդհանուր առմամբ մարդիկ ի՞նչ կ'ընեն. կ'աղօթեն խնդրելով իրենց «Ես»երուն փափաքները եւ աղօթքը կ'աւարտեն ըսելով. «Յիսուս Քրիստոսի անունով կը խնդրեմ» եւ կը կարծեն թէ իրենց փափաքներուն բոլորն ալ պիտի իրականանան: Աս ալ սխալ հասկացողութեան եւ ինքնախաբէութեան օրինակ մըն է:

Մեր Վարդապետը՝ Քրիստոս մեզ յաճախ կը փորձէ: Ան կը փորձէ մեր հաւատքը, մեր Իր վրայ ունեցած վստահութիւնը, մեր համբերութիւնը եւ նաեւ մեր յարատեւութիւնը: Քրիստոս ոչ մէկ գիտութիւն կու տայ նկատմամբ հոգեւոր ճանապարհին մէջ վերջնական յաջողութեան համար մինչեւ որ անհատին կողմէ «Ես»ը ամբողջովին չէ անտեսուած: Անհատը ուշիմ պէտք է ըլլայ եւ հսկող: «Ես»ը սոսկալի խորամանկ ու ճարպիկ է: Անհատը, միայն երբ իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս, տեսնէ, ինք այն ատեն յաջողած կ'ըլլայ:

«Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրբիւմ, քի նո՛ւս

«Լապտաթ Գեպէն»: (Մարգէնոս Ե:8)

«Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են, վասն զի անոնք պիտի տեսնեն Աստուած»:

Աս ալ հնադարեան առածին՝ «Ծանիր զքեզ»ին իրականացումն է: Մարդ ինչպէս կը կարողանայ ինքզինք հայելիին մէջ տեսնել եթէ հայելին ազտոտ ու մըրրտած ու սեւցած է: Նախ պէտք է հայելին մաքրել, որպէսզի անձը կարենայ ինքզինք տեսնել: Հայելին մար-

զիտենք թէ երբ ինք երեւնայ՝ իրեն պէս պիտի ըլլանք՝
որովհետեւ պիտի տեսնենք զինք՝ ինչպէս որ է»:

Գիտութեան մասին յաւելեալ տեղեկութիւն տալու համար յարմար նկատուած է նախորդ գիրքերէս «Աւետարանի Խորհուրդները Դ» գիրքիս վերջաբանը հոս մէջբերել:

Նկատմամբ կատարելութեան ուղիին, նկատողութեան առնուելիք կէտերը հետեւեալներն են.

ա- Հասկնալ գիտութիւնը եւ անոր կարեւորութիւնը:
բ- Հասկնալ «Աստուծոյ կամքը»:

գ- Հասկնալ աղօթքը եւ անոր կարեւորութիւնը:

Աստուածաշունչի թէ՛ Հին Կտակարանին, թէ՛ ալ Նոր Կտակարանին մէջ, թէ՛ գիտութեան թէ՛ ալ իմաստութեան մասին բազմաթիւ համարներ կան: Սակայն անոնցմէ ոմանք կը թուին հակասական ըլլալ: Այս պատճառով պատշաճ է երկու համարներ ներկայացնել, որոնք կը թուին հակասական ըլլալ: Հին Կտակարանէն առնուած հետեւեալ երկու մէջբերումները կը թուին իրարու բացալայտօրէն հակասական ըլլալ:

«Եւ պարտաւորեաց Տէր Աստուած Արամայ՝ Եւ ասէ. Յամենայն Ժառոց որ է ՚ի դրախդիդդ ուրբելով կերիցես: Բայց ՚ի Ժառոցն Գիտութեան Բարոց է- շարի՝ մի ուրիցէի, զի յորոմ ասոր ուրիցէի ՚ի նմանէ մահո մեռանիցի»: (Մանգո Բ:16-17)
«Տէր Աստուած մարդուն պատուիրեց. «Պարտէզին բոլոր ծառերէն Համարձակ կեր, բայց բարիին ու հարին զիտութեան ծառէն մի՛ ուտեր. որովհետեւ այն օրը երբ անկէ ուտես, անշուշտ պիտի մեռնիս»:

«Իօսեցաւ Տէր ընդ Մովսիսի Եւ ասէ. ... Եւ լցոյցից զնա աստուածեղէն Ըոգոսի իմաստութեան Եւ Հանճարոյ Եւ Գիտութեան ամենայն Գործոյ»: (Ելից ԼԼ:1-3)

«Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. ... Եւ Աստուծոյ

Հոգիով լեցուցի զայն՝ իմաստութեամբ, հանճարով ու
գիտութեամբ, ամէն տեսակ գործի համար»:

**Վերեւի Ծննդոց գիրքի մէջբերումը բացայայտ-
օրէն մարդը կը զգուշացնէ գիտութեան դէմ, թէ
գիտութիւնը զինք մահ պիտի տանի: Իսկ Ելից գիրքէն
մէջբերումը ցոյց կու տայ թէ Տէրը ինք գիտութիւն
կու տայ մարդուն: Նման հակասական համարներ կան
նաեւ Նոր կտակարանին մէջ:**

«Յայնմ Ժամանակի պապասխանի Եր Յիսուս՝ Ե-
սակ. Գոհանամ զէւն Հայր՝ որէր երկնի՝ Ե- երկ-
րի. զի Ժափէցէր զայս յիմաստոյնց Ե- ՚ի Գիտոյ
Ե- յայրնէցէ՛ր որչայոց»: (Մարգէնոս ԺԷ:25)

«Այդ ատեն Յիսուս ըսաւ. «Կը ներբողեմ քեզ, ո՛վ
Հայր, Տէր երկինքի ու երկրի, որ այս բաները ծածկեցիր
իմաստուններէն եւ խելացիներէն, ու յայտնեցիր
երախաներո՛ւն»:

(Տես նաեւ Ղուկաս Ժ:21)

«Ումեմն ՚ի Հոգւոյն Կուտալ Է Բա՛ն
իմաստոյնեան այլոմ Բա՛ն Գիտոյնեան ըսոր
նմին Հոգւոյ»: (Լ. Կորնթացիս ԺԲ:8)

«Մէկուն տրուած է իմաստութեան խօսք՝ Հոգիով.
ուրիշին՝ գիտութեան խօսք, նոյն Հոգիով»:

**Այս վերեւի Նոր կտակարանի մէջբերումներն ալ
կը թուին իրարու հակասական ըլլալ: Առաջինին մէջ
Յիսուս Հայր Աստուծմէ կը գոհանայ, թէ ան յաւիտե-
նական կեանքի զաղտնիքները իմաստուններէ եւ գի-
տուններէ պահած է ու յայտնած «տղայոց»: Իսկ երկ-
րորդ մէջբերումին մէջ թէ՛ իմաստութիւն եւ թէ՛ գի-
տութիւն Աստուծմէ՝ Ս. Հոգիէն տրուած շնորհքներ են:
Եթէ գիտութիւնը օգտակար եւ լաւ բան մը չէ եւ մար-
դը յաւիտենական կեանքէն կը հեռացնէ եւ մահուան կը
տանի, Աստուած ինչո՞ւ մարդուն կը շնորհէ գիտու-
թիւն: Նախքան, այս հարցումին պատասխանելու պէտք**

է հասկնանք, թէ սերտ կապ մը կայ թէ՛ իմաստութեան եւ թէ՛ գիտութեան միջեւ:

Ս. Գիրքին մէջ կան նման շատ համարներ, որոնք կը թուին գիրար հակասել: Ս. Գիրքին մէջ ոչինչ հակասական է: Հետեւաբար, պարտ ենք հասկնալ թէ օգտագործուած «գիտութիւն» բառը պէտք է ունենայ գոնէ երկու տարբեր իմաստներ, կամ աւելի ճիշդ պիտի ըլլայ ըսել, երկու տարբեր գիտութիւններ: Եթէ կան երկու տարբեր գիտութիւններ, ուրեմն ի՞նչ է անոնց տարբերութիւնը: Նախ ուսումնասիրենք այդ տարբերութիւնը:

Մարդ արարած որոշ գիտութեան մը ի՞նչպէս կը տիրանայ: Կայ գիտութիւն մը, որ մարդ կը սորվի դպրոցի մէջ՝ դաստիարակուելով: Նման գիտութեան մը տէր ըլլալու համար անձը պէտք է որոշ չափով իմացականութիւն մը ունենայ: Անոնք, որոնց իմացականութիւնը դասաւանդուած նիւթը ըմբռնելու բաւարար չէ դպրոցական ուսում չեն հետապնդեր եւ ֆիզիքական գործով կը զբաղին: Բայց, անոնք ալ որոշ գիտութիւն մը կ'ամբարեն: Երկու պարագաներուն ալ մարդուն ստացած գիտութիւնը իրեն կու գայ իր հինգ զգայարանքներուն միջոցաւ: Ինք իր գիտութիւնը կը սորվի իր տեսածներէն, իր լսածներէն ինչու չէ նաեւ իր միւս մնացեալ երեք զգայարանքներէն հաւաքած տեղեկութիւններով: Իր ամբարած այս գիտութիւնները կը վերաբերին միայն արտաքին աշխարհին, որովհետեւ անոնք իր հինգ զգայարանքներուն պարզեւած արդիւնքներն են: Պէտք չէ մոռնալ, թէ մարդուն հինգ զգայարանքները միայն արտաքին աշխարհէն իրեն տեղեկութիւններ կու տան: Մարդը նաեւ իր միտքը՝ իմացականութիւնը կ'օգտագործէ այդ գիտութեան տիրանալու համար: Նոյնիսկ աշխարհի վրայի ամենագիտուն մարդուն ունեցած գիտութիւնը ճշգրիմ գիտու-

Թիւն մըն է նկատմամբ ճշմարտութեան: Որովհետեւ անիկա միայն մէկ փոքր տեսանկիւնէ ստացուած գիտութիւն մըն է: Նմանապէս զանազան անասուններ՝ միջատներ, ձուկեր եւ սողուններ աշխարհը իրարմէ բոլորովին տարբեր կ'ըմբռնեն ինչպէս նաեւ մարդուն ըմբռնածէն տարբեր, որովհետեւ բոլորին զգայարանքները իրարմէ կը տարբերին: Անոնց բոլորին տեսակէտները կը տարբերին իրարմէ եւ նաեւ մարդոց տեսակէտներէն: Մարդ ընդհանուր առմամբ իր այս ամբարած գիտութեամբ կը կարծէ թէ ինք ամէն ինչ գիտէ: Հետեւեալ համարին իմաստն ալ ճիշդ աս է.

«... Գիտութիւնն Հապարհացոյցանէ այլ «էր շինէ՛» : (Լ: Կորնթացիս Բ:1)

«Գիտութիւնը կը հպարտացնէ՝ բայց սէրը կը շինէ»:

Նաեւ պէտք է մոռնալ, թէ հպարտութիւնը մահացու մեղքերէն մին է: Ս. Գիորքի մէջի գիտութեան նկատմամբ ժխտական համարները մարդու հպարտութիւն տուող այս սահմանափակ գիտութեան համար են: Անտարակոյս նոյնիսկ մարդուն այս ամբարած գիտութիւնն անգամ Աստուծոյ շնորհքն է: Բայց մարդ անկարող է այդ ճղճիմ գիտութեամբ ճշմարտութեան ամբողջութիւնը հասկնալ: Արտաքին տեղեկութեամբ իր ամբարած գիտութեամբ մարդ կը կարծէ թէ ինք իր մարմինը եւ իր միտքն է եւ չի հասկնար թէ ինք զանոնք գործածողն է:

«Զի Տէր Կայ զիմաստութիւն. եւ յերեւաց նորա Գիտութիւնն եւ Հանճար: ... Զի ելել եկեաց իմաստութիւն 'ի միտս իո. եւ զհանճար անշին իոմ Բարի Համարեացիս լինել: Խորհուրդի Բարեաց զԳոշացին զէլե՝ եւ միտի ուրբի պահեացելն զէլե» : (Լուսկաց Բ:6, 10-11)

«Արդարեւ իմաստութիւնը Տէ՛րը կու տայ՝ գիտութիւնն

ու հանճարը անտ՛ր բերանէն են: ... Երբ խմատուծիւնը քու սիրտիդ մէջ մտնէ եւ գիտութիւնը քու անձիդ հաճելի ըլլայ, մտախոհութիւնը քեզ պիտի պահէ ու հանճարը քեզ պիտի պաշտպանէ»:

Ս. Գիրքին մէջ դրական ձեւով ներկայացուած գիտութիւնը, որ Աստուած կը շնորհէ, զգայարանքներէ եկած եւ միտքին եւ իմացականութեան կողմէ վերլուծուած արտաքին աշխարհի վերաբերեալ տուեալները չէ: Այս գիտութիւնը կը պատկանի մարդուն ներքին «աշխարհին»: Անիկա իր ճշմարիտ էութեան գիտութիւնն է: Անիկա մարմինը եւ միտքը գործածողին գիտութիւնն է: Ոչ մէկ զգայարանք կարող է այս գիտութիւնը մարդուն տալ, ոչ ալ միտքը կամ իմացականութիւնը կարող է գայն հասկնալ: Այս գիտութիւնը փորձառական գիտութիւն մըն է: Անձը կարող է միայն ու միայն անձնական փորձառութեամբ այդ գիտութեան հասնիլ: Մարդուն այդ գիտութիւնը գիտնալու համար իր կողմէ ըրած որեւէ ջանք ի գուր է: Ան Աստուծոյ շնորհքն է, որ մարդուն կը յայտնուի առանց ջանքի, ըստ Աստուծոյ կամքին: Բայց աս չի նշանակեր, թէ մարդ պէտք չէ ջանք ընէ կատարելութեան ուղիէն ընթանալու եւ ի վերջոյ արժանի ըլլալու այս շնորհքին: Այս գիտութիւնը արգիւնքն է կերտուած բարձր գիտակցութեան, որ ճշմարտութիւնը կը «տեսնէ»՝ կը հասկնայ իր ամբողջութեամբ «360°» տեսանկիւնէ, քան թէ գայն տեսնէ միայն մէկ կէտէ: Այն ատեն մարդ կը հասկնայ ամէն ինչի միականութիւնը, այն ինչ որ ինք առաջուց զանազանութիւն կը համարէր: Միթէ մարդ ինքզինք չի՞ սիրեր: Երբ ան փորձառութիւնը կ'ունենայ միականութեան, զինք կը տեսնէ ամէն բանի մէջ եւ ան կը մոռնայ իր «Ես»-ը, իր անհատականութիւնը եւ կը նոյնանայ իր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի հետ եւ իրեն համար ստացած այս գիտութիւնն ալ իր մէջ կը յայտնուի իբրեւ սէր՝ հանդէպ բոլորին: Այդ սէրը

Աստուածային սէրն է: Ընդհանուր մարդկութեան ֆիզիքական փորձառութեան մէջ եղող եւ ճշմարտութիւն կարծած զանազանութիւնը պատրանքային է: Մարդուն պատրանքը ճշմարտութիւն կարծելու սխալը կը խափանէ իր մէջ սիրոյ արտայայտութիւնը եւ զայն կը խեղաթիւրէ: Մարդ ալ կը կարծէ թէ ինք սէր ունի: Խենդի պէս կը սիրահարուի առանց հասկնալու ճշմարիտ սիրոյ տուած երանութիւնը: Ինք անոր ճղճիւմ մէկ արտայայտութեամբը կը գոհանայ: Ինք կը կարծէ, թէ իր այդ յայտնաբերած սէրն ալ իրեն «մեծ երջանկութիւն» կու տայ եւ անով կ'ուրախանայ եւ կը բաւարարուի, որովհետեւ ինք տակաւին երանութեան փորձառութիւնը բնաւ չէ ունեցած:

Աստուածային այդ գիտութիւնը եւ սէրը կը թուին նոյն բանը ըլլալ: Նոյնիսկ «փորձառութիւն ունենալ» ըսելն անգամ սխալ է, որովհետեւ մարդ ինք արդէն Այդ է, բայց ինք իր ձեռքով կը խափանէ այս իրողութեան յայտնութիւնը՝ գիտութիւնը: Երբ «փորձառութիւն» բառը կը գործածենք մեր ըսել ուզածը պարզապէս «անդրադաձ» մըն է:

«Եւ եթէ ունիցիմ պարգարեութիւն, եւ Գրիգորիւմ պարգարեութիւն Դաւիթիւմ, եւ պարգարեութիւն Գրիգորիւմ. եւ եթէ ունիցիմ պարգարեութիւն Դաւիթիւմ՝ մինչեւ պարգարեութիւն Գրիգորիւմ, եւ սէր ոչ ունիցիմ, ոչինչ էմ»: (Լ. Արեւշատի ԺԳ: 2)

«Եւ եթէ մարգարեութիւն ունենամ ու հասկնամ ամէն խորհուրդները ու ամէն գիտութիւնը եւ եթէ ունենամ ամէն հաւատքը մինչեւ լեռները տեղափոխելու ու սէր չունենամ, ոչինչ էմ»:

Ուրեմն ի՞նչպէս արժանանալ այս Աստուածային գիտութեան, որ նաեւ սէր է: Ասոր համար պէտք է կատարելութեան ուղիէն ընթանալ, այսինքն կատարել միայն Աստուծոյ կամքը եւ անընդհատ աղօթել: Այս

երկուքին նպատակն ալ բարձր գիտակցութիւն կերտել է: Այս հարցով կան մարդիկ որոնք կ'ըսեն. «Ի՞նչպէս անընդհատ աղօթեմ, ես պատասխանատուութիւններ ունիմ, ընտանիք ունիմ, պէտք է գործի երթալ, դրամ չահիլ ..., կարող չեմ անընդհատ աղօթել» ինչպէս նաեւ կ'ըսեն. «Ի՞նչպէս գիտնամ Աստուծոյ կամքը»: Այս երկու միջոցները, իրարու հետ սերտ կապ ունին: Զանոնք մէկ առ մէկ ուսումնասիրենք:

Նախ հասկնանք իմաստը «Աստուծոյ կամքին»: Մարդ կը կարծէ թէ Աստուած մարդու «պատկերով» ծերունիի մը նմանութեամբ անձնաւորութիւն մըն է «վերը»՝ «երկինք»-ը նստած աշխարհ կը դիտէ եւ իր կամքին համաձայն զանազան փափաքներ ունի, որ մարդիկ պէտք է իրականացնեն: Երբ անոնք Աստուծոյ այդ կամքը կը կատարեն Աստուած ալ զիրենք կը վարձատրէ, իսկ երբ մարդ Աստուծոյ կամքը կ'անտեսէ եւ միայն իր կամքը կը կատարէ, Աստուած ալ զայն կը պատժէ: Անտարակոյս այս տեսակէտը սխալ է: Աստուած ոչ նստած է, ոչ ալ ոեւէ մէկը կը դիտէ, ոչ ալ ոեւէ մէկը կը վարձատրէ կամ կը պատժէ: Ուրեմն ի՞նչ է իմաստը Աստուծոյ պատիժին եւ վարձատրութեան, որոնց մասին յաճախ կը խօսինք եւ Ս. Գիրքի թէ՛ Հին եւ թէ՛ Նոր Կտակարաններուն մէջ բազմիցս գրուած է: Ասոր պատասխանը Յիսուս տուաւ.

«Եւ ամենայն որ ասէ Բան պորդոյ մարդոյ,
Խոշոյն նմա. Բայց որ զԸճԻՆ սորք Լայճոյնցէ,
մի Խոշոյն նմա: (Ղուկաս ԺԲ: 10)

«Ամէն ով որ Որդի մարդոյ դէմ բան ըսէ, պիտի ներուի անոր, բայց ան որ Սուրբ Հոգիին դէմ հայհոյութիւն ընէ, պիտի չներուի անոր»:

Ս. Հոգին Աստուծոյն բղիւսած «Աստուծոյ զօրութիւն»-ն է: Ամէն զօրութիւն զինք կառավարող օրէնքներ ունի: Աստուծոյ զօրութիւնն ալ Հայր Աստուծոյ դրած օրէնք-

ներուն համաձայն կը գործէ: Այդ օրէնքները կ'ըլլան Աստուծոյ կամքը, որովհետեւ բոլոր տիեզերքը կառավարող Ս. Հոգիին զօրութեան օրէնքները ինք որոշած է: Երբ մարդ կը գործէ Ս. Հոգիի օրէնքներուն ներդաշնակ ամէն ինչ լաւ կ'ընթանայ եւ կ'ըսենք Աստուած զինք վարձատրեց: Իսկ երբ մարդ կը գործէ Ս. Հոգիի տիեզերական օրէնքներուն դէմ, ինք յաճախ կը ձախողի եւ կ'ըսենք Աստուծոյ պատիժին ենթարկուեցաւ: Դժբախտութիւնը այն է, թէ մարդ իր խաւարամտութեան հետեւանք տեղեակ չէ այդ օրէնքներուն մեծամասնութեան: Ան երբեմն կը գործէ այդ օրէնքներուն ներդաշնակ եւ երբեմն ալ հակառակ: Այս հիման վրայ ինք ալ իր կեանքի ընթացքին յաճախ կ'ենթարկուի լաւ եւ վատ պատահարներու՝ երջանկութեան եւ տխրութեան պահերու (Տես նաեւ «Հոգեւոր Խորհրդածութիւններ» վերնագիրով գիրքիս մէջ «Աստուծոյ Կամքը եւ ձակառակիրը» խորագրեալ գրութիւնը): Եթէ ըստ Աստուծոյ կամքին ապրիլ, Ս. Հոգիի տիեզերական օրէնքներուն ներդաշնակ ապրիլն է, ի՞նչպէս գիտնանք այդ օրէնքները: Այդ օրէնքները կը յայտնուին այն մարդոց, որ բարձր գիտակցութիւն կը կերտեն իրենց մէջ: Պէտք չէ մոռնալ, թէ մարդուն գիտակցութիւնը, իր մէջ Աստուծոյ՝ Քրիստոսի ներկայութիւնն է: Իսկ իր կերտած բարձր գիտակցութիւնն ալ իր մէջ Աստուծոյ՝ Քրիստոսի յայտնութիւնն է: Միթէ Յիսուս չըսա՞ւ.

«Ո՛չ է աշակերդ լա՛ւ – ի՛նչն զվարդապետ ի՛նչ,
ամենայն կադարեալն՝ եղիցի ի՞շբեւ զվարդապետ
ի՛նչ»: (Դ.աւսա 9:40)

«Աշակերտը իր վարդապետին գերիվեր չէ. բայց ամէն կատարեալ աշակերտ՝ իր վարդապետին պէս պիտի ըլլայ»:

«Լ՛ըդ եղերո՛ւ – ի՛նչ դո՛ւ ի՛նչ կադարեա՛ւ ի՛նչ, որդե՛ս եւ Հայրըն՝
յերն յեր երկնաւոր կադարեա՛ւ է»: (Մատթեոս 17:48)

«Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս ձեր երկնաւոր
Հայրը կատարեալ է»:


Ուրեմն մեր պարտականութիւնն է նմանիլ մեր վար-
դապետին՝ Յիսուս Քրիստոսի եւ մեր երկնաւոր Հօր
նման կատարեալ ըլլալ, որ կարելի է միայն բարձր
գիտակցութեամբ: Իսկ բարձր գիտակցութիւն կերտե-
լու միջոցն ալ անընդհատ աղօթելն եւ կատարելու-
թեան ուղիէն ընթանալն է:

Այս երկու միջոցները, որոնք կը թուին
ամբողջովին իրարմէ զատ եւ անկապակից ըլլալ,
խակութեան մէջ նոյն բանն են:

Նախ ուսումնասիրենք, թէ ի՞նչ է աղօթքը (Տեա նաեւ
«Լոյս Ի Լուսոյ (Ա.)» գիրքի մէջ «Ի՞նչ է Աղօթքը» խորագրեալ Ի.
գլուխը, էջ 159: Տեա նաեւ «Խոկում» վերնագրեալ գիրքս):
Ճշմարիտ աղօթքը մի քանի վայրկեան կամ նոյնիսկ
ժամերով ծունկի գալ երկու ձեռքերը միացնել եւ Աս-
տուծմէ աս կամ ան խնդրել չէ: Ան նաեւ եկեղեցական
արարողութիւններու մասնակցիլն ալ չէ: Անտարակոյս
անոնք բոլորն ալ իրենց արժէքը ունին եւ կարեւոր են
անհատը փոխելու եւ ձեւակերպելու համար: Բայց
ճշմարիտ աղօթքը կենցաղ մըն է, ապրելակերպ մըն է,
մտածելակերպ մըն է: Անիկա միշտ դրական խորհուրդ-
ներ ունենալ եւ ուրիշներու բարելաւումը ցանկալ եւ
փափաքիլն է: Անիկա, բարեկամի մը կամ օտարի մը
տրուած սիրոյ արտայայտութեան ողջագուրումն է:
Անիկա, ընտանեկան անդամ մը կամ օտար մը կերակ-
րելու համար սիրով ճաշ մը եփելն է: Անիկա, ճամբոր-
դողի մը «բարի ճանապարհ» մաղթելն է: Անիկա,
կարօտեալին օգնել՝ ժամանակդ եւ տաղանդդ տալն է:
Անիկա, ընդհանուր ստեղծագործութիւնը խնամելն է:
Անիկա բոլորին կարեկից ըլլալն է: Անիկա, ուրիշին
տիրութիւնը կիսել եւ ուրախութիւնը բազմապատկելն
է: Անիկա, ամբողջութեամբ ներողամիտ ըլլալն է:
Աղօթքը քու գորութեան «մարմնիդ» թրթռացումի

յաճախականութիւնն է: Անիկա, զգացում մըն է: Անիկա, խորհուրդ մըն է: Անիկա, սիրոյ ձայնն է: Անիկա, անկեղծ ընկերութեան վերաբերմունքն է: Աղօթքը մեր լուռ էութեան արտայայտութիւնն է: Երբ Քրիստոսը կը տեսնենք որպէս ամէն անձի, ներառեալ մեր թշնամիներուն, ճշմարիտ էութիւնը, բոլորին հետ նման հայեացքով վարուիլն ալ կ'ըլլայ մեր աղօթքը:

Միթէ աս չէ՞ր, որ Յիսուս մեզի սորվեցուց իբրեւ կատարելութեան ուղի: Միթէ աղօթքը եւ կատարելութեան ուղին նոյնը չէ՞ն: Եթէ նման հայեացքով եւ հասկացողութեամբ կերտենք մեր կենցաղը մեր ընդհանուր կեանքն ալ կ'ըլլայ շարունակական աղօթքի պահ մը: Մարդ կարող է հրաշքներ գործել, ուրեմն կարող է նաեւ թէ՛ աշխատիլ իր մարդկային պարտականութիւնները կատարել եւ նաեւ կարող է անոնց բոլորը աղօթքի վերածել: Միտքը անընդհատ ներհայեցողութեամբ կեդրոնացած իր ներքին Քրիստոսի վրայ՝ խոկումով, կը կարողանայ բարձր գիտակցութիւն կերտել:





Զ

ՅԱՌԱԶԱՅՈՒՄ



ՅԱՌԱՋԱՑՈՒՄ

Այս գլուխին մէջ, թէ այս գիրքին նախկին գլուխներէն եւ թէ ալ իմ առաջուց հրատարակած գիրքերէս առնուած եւ մէջբերուած կրկնութիւններ պիտի ըլլան:

Ինչպէս նախապէս գրուած էր, կատարելութեան ուղիին առաջին աստիճանին վրայ շատ անձեր կը գտնուին: Կարեւորը կատարելութեան ուղիին մինչեւ վերջին աստիճանը հասնիլն է: Անտարակոյս, աս կը կարօտի պատշաճ յառաջդիմութեան մը: Նոյնիսկ յառաջացման սկզբնական քայլերուն յաջողութեան համար անձը պարտ է նախ սկսի խորհրդածել եւ ինք իրեն հարց տայ, թէ.

ա- Ինչո՞ւ ծնայ:

բ- Կեանքին իմաստը եւ նպատակը ի՞նչ է:

գ- Ինչպէ՞ս կրնամ ծառայել:

Այս հարցումներուն պատասխանը լրջօրէն գտնելու համար անձը որոշ ինքնափոփոխութեան մը կը կարօտի: Այս ինքնափոփոխութիւնը կարելի կ'ըլլայ միայն երբ ինք կը յաջողի հետեւեալները իւրացնել եւ կատարել:

ա- Ինքնաքննութիւն- Առանց ինքնաքննութեան կարելի չէ սխալները գտնել եւ զանոնք սրբագրել: Ինքնաքննութեան հետեւանք է որ անձը իր մէջ հետեւեալ յատկութիւնները՝ համեստութիւն, արժանապատուութիւն, ուղղամտութիւն, պատիւ, յարգանք, ներդաշնակութիւն կամ համաձայնութիւն, յարատեւութիւն եւ համբերութիւն պիտի կերտէ: Կը նշմարենք թէ բոլորն ալ Ս. Հոգիի շնորհներն են: Ինքնաքննութիւնը անձին իր Հոգիին՝ Քրիստոսին, համարատուութիւնն (accountability) է:

բ- Աղօթել- Աղօթքը անձին իր Հոգիին՝ Քրիստոսին՝ Աստուծոյ, հետ հաղորդակցութեան բանալին է:

Աղօթքը անձը զօրութեան ազդեցութիւնն հետ հաղորդակցութեան մէջ կը դնէ: Աղօթքը առաջուց սորվուած բառերու թուրքակօրէն արտասանութիւնը չէ, այլ ան Աստուած ճանչնալու եւ ինքնաճանաչման սրտաբուխ տենջանքն ու միջոցն է: Աղօթքը պէտք է մեզ արտաքին ազդեցութիւններէ ձերբազատէ: Ան գիտակցութեան մակարդակի փոփոխութիւն մը պէտք է յառաջ բերէ: Որպէսզի անձը ինքնամփոփուի պարտ է յարատեւ աղօթել՝ այսինքն իր բոլոր կեանքը աղօթք մը ըլլալ: Աղօթքը պէտք է իր մէջ անձին օրուայ ունեցած խորհուրդ, խօսք եւ գործքերուն անդրադարձը պարունակէ: Ժշմարիտ աղօթքը բարձրաձայն խօսելով խնդրել չէ, այլ ան կ'ըլլայ լռութեան մէջ: Միայն լռութեան եւ խաղաղութեան մէջ է որ անձը կը գիտակցի Աստուծոյ ստացած շնորհներուն եւ դարձեալ միայն այդ լռութեան մէջ է որ կը կարողանայ հաղորդուիլ՝ միանալ Անոր:

դ- Խոկումը– Խոկումը մտքի կեդրոնացումն է իր ճշմարիտ էութեան՝ իր հոգիին՝ Քրիստոսի՝ Աստուծոյ վրայ: Այս ալ արդիւնքն է ապաշխարութեան եւ մտայնօրէն հեռացումը աշխարհիկ հետապնդումներէ: Ասիկա իր կեանքի բոլոր պարտականութիւնները անտեսել եւ ոտքերը ծալած նստիլ չի նշանակեր, այլ՝ պարտականութիւնները կատարել ամենալաւ կերպով, բայց կապուած չըլլալ անոնց արդիւնքներուն: Աստուծոյ վրայ կեդրոնանալ կը նշանակէ զինք տեսնել ամենուրեք եւ ամէն անձի մէջ եւ նման հայեացքով վարուիլ ամէն մի անհատի հետ: Այդ վարուելակերպը պէտք է ըլլայ այնպէս, ինչպէս պիտի ըլլար եթէ Յիսուս Քրիստոս ինք Ֆիզիքապէս ներկայ ըլլար մեր առջեւ:

դ- Կարգապահութիւնը– Կարգապահութիւնը ամէն տեսակի արարքի յաջողութեան համար անհրաժեշտ է: Անձը նաեւ կարգապահ պէտք է ըլլայ իր հոգեկան

կեանքի մէջ ալ: Կարգապահութիւնը կը պահանջէ որ անձը իր ցանկութիւնները, իղձերը եւ փափաքները զսպէ, քան թէ անոնց անմիջական գոհացում տայ: Առանց այդ կարգապահութեան ցանկութիւնները եւ իղձերը շտապով կը բազմանան եւ անհատին միտքը գրաւելով յաջողութիւնը կը խափանեն:

ե- Սէր- Սէրը Աստուծոյ ներկայութիւնն է՝ ինչպէս նաեւ անձին միջոցաւ Անոր արտայայտութիւնը: Միրոյ արտայայտութիւնը յայտնի կ'ըլլայ անձին ցուցաբերած ծառայութենէն, գութ ու ողորմածութենէն, բարեպաշտութենէն, բարեսիրութենէն եւ Աստուածասիրութենէն ու Աստուածապաշտութենէն: Մանաւանդ այս երկու վերջինները միայն բոլոր ստեղծագործութիւնը, ներառեալ մեր թշնամիները, տարբեր կրօնքներու պատկանողները եւ մեղաւորները, սիրելով կարելի կ'ըլլայ: Աստուածասիրութիւնը ու Աստուածապաշտութիւնը պարզապէս «ես Յիսուս Քրիստոսը կը սիրեմ» ըսել չէ: Անտարակոյս Յիսուսը կը սիրենք, ի՞նչպէս չսիրել մեր վարդապետը: Անտարակոյս Յիսուս Քրիստոս մեր Աստուածն է, ինչպէս չսիրել մեր Աստուածը: Բայց եթէ նոյնիսկ մէկ հոգի մը՝ անձ մը չսիրենք, մեր Աստուածասիրութիւնը կեղծ կ'ըլլայ, քանի որ Քրիստոս այդ անձին ալ մէջն է:

Այս բոլորին յաջողութեան համար անհատը կը կարօտի «վերստին ծնունդի»: Միթէ Յիսուս նոյնը չէ՞ր ըսած Նիկողեմոսին: Վերստին ծնունդն ալ միտքի ուղղութեան փոփոխութիւնն է: Որպէսզի վերստին ծնունդը յաջող ըլլայ անհատը նախ պէտք է գիտնայ թէ ինք երկու զատ էութիւններու տէր է:

ա- Մարդ թէ՛ «արտաքին» էութիւն մը եւ թէ՛ ալ «ներքին» էութիւն մը ունի:

բ- «Ներքին» էութիւնը յաւիտենական է:

գ- «Ներքին» էութիւնը «Խորհուրդ մեծ»ն է:

դ- «Ներքին» էութիւնը Աստուծոյ որդին է:

ե- Դժոխքը՝ արտաքին էութեան հետ նոյնանալուն մէջն է, ըստ «Ես»ին կամքին ապրիլն է:

զ- Դրախտը՝ «Ներքին» էութիւնը գտնելու եւ զայն յայտնելու մէջն է:

է- Աստուծոյ Որդին՝ Քրիստոս մեր հոգին ըլլալով հանդերձ, Հօրը հետ մէկ է:

Հետեւաբար անհատը պարտ է իր միտքի ուղղութիւնը իր արտաքին էութենէն դէպի իր ներքին էութիւնը՝ Քրիստոս փոխել: Այս հանգրուանը յառաջացման համար ինքնապատրաստութիւն կը ներկայացնէ: Կատարելութեան ուղին՝ յայտնութեան ճամբան կը բացուի մեր առջեւ, երբ մենք.

ա- Կը ստանանք իմաստութիւն, որ է Աստուածային գիտութիւն:

բ- Կը կարողանանք ճիշդը կամ սխալը պատշաճ կերպով դատել եւ զատել:

գ- Կ'անդրադառնանք մեր բոլոր գործած սխալներուն:

դ- Կը զղջանք մեր բոլոր գործած սխալներուն համար:

ե- Ապաշխարութեամբ կը մաքրենք մեր սիրտերը եւ միտքերը:

զ- Այնուհետեւ կը վարենք Աստուածահաճոյ կենցաղ մը:

է- Միայն Աստուծոյ խօսքը լսելով չենք բաւականանար, այլ զայն գործադրելով կ'ապրինք:

Երբ այս բոլորը յաջողութեամբ կը կատարենք, պատրաստ կ'ըլլանք ամենավեհ աղօթքով ջանալ մեր ճշմարիտ էութեան Քրիստոսի հետ հաղորդուելու: Իսկ, յաջող խոկումի եւ մտախոհութեան պտուղները հետեւեալներն են.

ա- Խաղաղութիւն մը, որ փոփոխութեան

ենթակայ չէ: Յիսուս Քրիստոս ըսաւ.

«Խաղաղութիւն ընդո՞ւմ չե՞ս. զխաղաղութիւն զե՞ս աս չե՞ս. ոչ որպէս աշխարհս ասոյ՝ ասո՞ւմ էս չե՞ս: Մի խռովեացին սիրոյ՞ չե՞ր, եւ մի զանգիտեացին:» (Յովհաննէս ԺԴ:27)

«Խաղաղութիւն կը թողում ձեզի, իմ խաղաղութիւնս կու տամ ձեզի, ո՛չ թէ ինչպէս աշխարհս կու տայ՝ ես ձեզի կու տամ: Սրտերնիդ չխռովի ու չվախնայ:»

բ- Գոհունակութիւն մը, որ անգուգական է: Ինքնաճանաչման գոհունակութիւնն է: «Կորսուած» էութիւնը (ներքին գանձը) գտնելու գոհունակութիւնն է:

գ- Երանութիւն, որ յաւիտենական երջանկութիւն է:

Հետեւեալները, հոգեւոր ճանապարհին մէջ, յաջողութեան չափանիշը կը ներկայացնեն:

ա- Նրբամտութեամբ չափազանց գիտակից ըլլալ բոլոր զգացումներուն՝ թէ՛ Ֆիզիքական եւ թէ՛ զգացական:

բ- Խորհուրդներու, ցանկութիւններու նուազացման քանակը, յաջողութեան չափանիշ մըն է:

գ- Ընդունիլ կեանքի բոլոր պատահարները:

դ- Գիտակից ըլլալ այս իրողութեան, թէ կեանքը մարմնին ամէն մէկ բջիջին մէջն ալ է, հեռու մնալ կեանքին վնասակար բոլոր վատ սովորութիւններէ՝ որկրամոլութիւն, ծխել ...:

Այս բոլորին առընթեր պէտք չէ մոռնալ, թէ կատարելութեան ուղին խոչնդոտներով՝ «փուշերով» լեցուն է: Ճիշդ ասոր համար, ան կոչուած է նաեւ «նեղ ճամբայ»: Այս «փուշերը» նպատակաւոր են փորձելու համար անհատին հաւատքը, վճռականութիւնը, համբերութիւնը, յարատեւութիւնը, անկեղծութիւնը եւ ամէն

ինչի ընդունակութիւնը: Երբեմն մեր կեանքի վատ պատահարները յուսահատութեան եւ վարանումի պատճառ կրնան ըլլալ: Այս ընթացքին ձախողութեան պատճառները շատ են: Եթէ այդպէս չըլլար, այսօր համայն մարդկութիւնը սրբացած կ'ըլլար: Նոյնիսկ անոնք, որոնք կը յաջողին մինչեւ վերջի մի քանի աստիճանին հասնիլ կրնան ձախողիլ:

Խոկումի միջոցին միտքը խաղաղեցնելու եւ սրբացնելու շատ մը արգելքներ յառաջ կու գան: Հետեւեալները ասոնցմէ ամենէն կարեւորներն են. այս ցանկին մէջի առաջին երկու պատճառաբանութիւնները կրնան արգելք ըլլալ, որ անձը նոյնիսկ խոկումի չսկսի:

ա- Ինքնաքննութեան վարանում- Աս ալ կատարելութեան ուղիին սկզբնական շրջանի ամենակարեւոր արգելքն է: Մարդ կը վարանի ինքզինք ինքնաքննութեան ենթարկել, որովհետեւ իր տկարութիւններուն ու մեղքերուն հետ դէմ-առ-դէմ գալէ չ'ախորժիր:

բ- Մաղրանք ու նախատինքի ենթարկուիլ- Անոնք, որոնք իրեն նման չեն հաւատար կարելի է որ զինք ծաղրեն կամ նոյնիսկ նախատեն: Միթէ աշխարհահռչակ Լիբանանցի գրող Խալիլ Ճիպրան իր հաւատքին եւ գրածներուն համար իր պատկանած եկեղեցիէն չվտարուեցա՞ւ:

գ- Քուռ, քնանալ- Ճիշդ է թէ խորունկ քունի մէջ բոլոր խորհուրդները կը դադրին, բայց ինչ օգուտ: Անձը արթուն չէ, որպէսզի ճշմարտութեան փորձառութիւնը ունենայ:

դ- Անհանգիստ միտք- Միտք մը, որուն խորհուրդները չեն զսպուիր: Անձը շատ վիշտ կամ ակնկալութիւններ ունի:

ե- Մտային հակումներ- Հակումներ, որոնք անձը կերպով մը սանձած է, բայց անցեալին այդ հակում-

ներսն անհետացման համար հարկաւոր լուծումներ չեն գտնուած: Ասոնք, խոկումի պահուն, յանկարծ ի յայտ կու գան:

զ- Յարատեւութեան պակաս- Անձը կը կարծէ թէ կարճ ժամանակի մը մէջ պիտի յաջողի, իսկ եթէ խոկումէն անմիջական արդիւնք չառնէ, կը յուսահատի եւ կը դադրի յարատեւելէ: Միտքը սրբացնելը ամբողջ կեանքի մը տեւողութեան յարատեւօրէն կատարուելիք գործունէութեան մը հունձքն է: Յիսուս, իր փափաքած մակարդակին հասնելու համար, երեսուն տարի յարատեւած է:

է- «Գերմարդկային» կարողութիւններ- Երբ միտքը զսպուի, անձը կրնայ որոշ կարողութիւններ՝ յստակատեսութիւն, հեռաշարժութիւն նշմարել, որոնց գոյութեան գիտակցութիւնը եւ անոնցմէ օգտուելու կարողութիւնը նախապէս չունէր: Ասոնք ալ իրենց կարգին արգելք կրնան հանդիսանալ միտքը սրբացնելու: Անձը պէտք չէ տարուի ի յայտ եկած այս կարողութիւններէն եւ շարունակէ իր միտքի կեդրոնացումը բուն նպատակակէտին վրայ՝ առանց շեղումի:

ը- Առարկայացնել փորձառութիւնը- Աս կատարելութեան ուղիին վերջաւորութեան ամենակարեւոր արգելքն է: Երբ անձը կ'առարկայացնէ խոկումի արդիւնք եղած խաղաղութիւնը եւ երանութիւնը, դարձեալ երկուութիւն յառաջ կու գայ: Երկուութեան հետեւանք «Ես»ը իրեն կու տայ յաջողութեան հպարտութիւնը: Անձը պէտք է միշտ ուշիմ եւ արթուն ըլլայ, անընդհատ հսկէ, որպէսզի որեւէ փորձառութիւն չառարկայանայ:

Ինչպէս նախապէս շեշտուած էր կատարելութեան ուղիին մէջ պատշաճ կերպով յառաջանալու համար անընդհատ աղօթելը անհրաժեշտ է: Այս աղօթելը անհատին կենցաղն է, անոր խորհելակերպը, խօսքերը եւ

արարքները: Այդ կենցաղին Աստուածահաճոյ ըլլալուն համար ալ Յիսուս մեզի սորվեցուց ինչ ընել երբ Ան մեզի տուաւ աղօթելու ձեւը: Յաջորդ էջի վրայի պատկերը, կատարելութեան ուղիին մէջ աստիճան-առ-աստիճան յառաջանալու համար Յիսուս Քրիստոսի մեզի սորվեցուցած աղօթելու ձեւին՝ կենցաղի փոփոխութեան զանազան պատշաճ հանգրուանները ներկայացնող ամփոփումն է: Յիսուս Քրիստոս մեզի սորվեցուց աղօթելու ձեւը, այն ինչ որ Տէրունական աղօթք կը կոչենք եւ յաճախ կը կրկնենք: Աւելի լաւ պիտի ըլլայ, եթէ կրկնելու տեղ զայն գործադրենք: Առաջին չորս աստիճանները կը ներկայացնեն անհատին ինքնապատրաստութիւնը: Իսկ յաջորդ երեք աստիճաններն ալ կը ներկայացնեն յաջող ինքնապատրաստութեան հետեւանք անհատին ստացած Աստուծային շնորհները եւ ստացած բարձր գիտակցութեան տուած հասկացողութիւնները եւ ունեցած փորձառութիւնները: Մնացեալ երեք աստիճաններն ալ գիտակցաբար Միականութեան մաս կազմել՝ Աստուծոյ «մէջ լուծուիլ»՝ Աստուծոյ հետ մէկ ըլլալն է:

Ստորեւ ամէն մի աստիճանի նկատմամբ պատշաճ տեղեկութիւն պիտի տրուի: Այս տեղեկութիւնը նախապէս գրուած էր նախորդ գիրքերու մէջ եւ պատշաճ կը նկատուի անոնք հոս ալ ներկայացնել: Ահա՛ աս էր, որ Յիսուս Քրիստոս իր լերան քարոզով մեզի սորվեցուց:

Ի՞նչ էին լերան քարոզին սորվեցուցածները:

Լերան քարոզին մէջ, Յիսուս Քրիստոս այն մարդկային յատկութիւնները, որ անհրաժեշտ են հոգեւոր կեանքի մէջ յաջողելու համար, իր ըսած եօթը «երանի»ներովը ներկայացուց, իսկ յաջողութեան միջոցն ալ, իր ներկայացուցած աղօթելու ձեւով: Մարդ ինչո՞ւ երանելի է, երբ այդ յատկութիւնները իր մէջ կը յառաջացնէ: Ան երանելի է, որովհետեւ Աստուծայայտ-

Է

10 Հայր մեր

9 որ յերկինս

8 Սուրբ եղիցի
անուն քո

7 եկեսցե
արքայութիւն քո

6 եղիցին կամք քո որպէս
յերկինս եւ յերկրի

5 զիաց մեր հանապազորդ՝
տուր մեզ այսօր

4 եւ քող մեզ զպարտիւն մեր որպէս
եւ մեր քողունք մերոց պարտապանաց

3 եւ մի տանիր զմեզ ՚ի
փորձութիւն

2 Այլ փրկեալ զմեզ ՚ի չարէն

1 Չի քո է արքայութիւն եւ զօրութիւն
եւ փառք յափտեալս յափտենից


նույն ժամանակ՝ Քրիստոսի յայտնութիւնը իր մէջ իրականացնելու կարելիութիւնը ունի: Ուրեմն ի՞նչ են այդ եօթը երանելի յատկութիւնները: Անոնք «Հոգևով աղքատ», «սգաւոր», «Հեզ», «անօթի ու ծարաւ», «ողորմած», «սըրտով մաքուր», «խաղաղարար» եւ «արդար» ըլլալն են: «Աղքատ»-ութիւնը պակասութեան մը արդիւնքն է: Երբ անձ մը դրամ չունի իր առօրեայ կարիքները հոգալու, ինքզինք աղքատ կը նկատէ: Այս պարագային, Յիսուսի ակնարկը հոգեւոր կեանքի մէջ յառաջացման պակասին համար է: Երբ մարդ այս պակասը զգայ այն ատեն է, որ իր հոգևով աղքատ ըլլալուն կ'անդրադառնայ: Այս անդրադարձը անհրաժեշտ է ապագայ յաջողութեան համար եւ հոգեւոր ճանապարհին մէջ առաջին քայլը: Ի՞նչ է իմաստը «սգաւոր» ըլլալուն: Մարդ սգաւոր կ'ըլլայ երբ ան ընտանեկան անդամի մը կամ սիրելիի մը, երբեմն նոյնիսկ անասունի մը մահովա՞մբ, անոնց կորուստին համար կ'ողբայ: Այս պարագային Յիսուսի ըսած սգաւորը այն անձն է, որ իմացականօրէն գիտնալով հանդերձ թէ Քրիստոս իր մէջ, իր ճշմարիտ էութիւնն է, Անոր ներկայութեան փորձառութեան կորուստին համար է որ կ'ողբայ եւ սուգ կը բռնէ: Ինչո՞ւ «Հեզ»-երը երանելի են: Անոնք որոնք Հեզ եւ խոնարհ են, անտեսած են իրենց «Ես»-երը: Երբ «Ես»-ը Աստուծոյ գահին վրայ նստած ըլլայ անձն ալ հոգեւոր կեանքի մէջ յառաջանալու կարելիութիւնը չ'ունենար: «Ես»-ը հպարտութիւն կու տայ: Իսկ հեզութիւնը կարելի է միայն այն ատեն երբ հպարտութիւնը գոյութիւն չ'ունենար: Պարզ է հասկնալ թէ ինչ է անօթի եւ ծարաւ ըլլալ: «Անօթի՝ սովահար եւ ծարաւ» մարդու մը համար, որ մահուան սեմին է, բացի պատառ մը հաց կամ կաթիլ մը ջուրէն ոչինչ կ'արեւորութիւն ունի: Նմանապէս հոգեւոր կեանքի մէջ ալ անձը պարտ է նոյն չափով, նոյն աստիճանով ուզէ՝ տենջայ

Քրիստոս իր մէջ յայտնաբերել: «Ողորմածութիւնը» ճշմարիտ պաշտամունքն է, ան Քրիստոս «տեսնել» է ամէն անձի եւ ամէն ինչի մէջ եւ իր կարողութեան համաձայն ալ բոլորին օգնելն է: Ան ինչ որ կու տանք, կու տանք Քրիստոսին: Ի՞նչ է իմաստը «սրտով մաքուր» ըլլալուն: Արամերէն լեզուի մէջ, որ Յիսուս կը խօսէր, «միտք» բառին համապատասխան բառ գոյութիւն չունի, այլ միայն «սիրտ» բառը կը գործածուի, թէ՛ «միտք» եւ թէ՛ ալ «սիրտ» իմաստներով: Հետեւաբար «սուրբ սիրտ»-ը կը ներկայացնէ խորհուրդներէ, զգացումներէ եւ յուզումներէ սրբուած, մաքրուած միտք մը: Նման միտք մը առանց խանգարումի, մարդուն իր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի վրայ կեդրոնանալու կարելիութիւնը ունի: Մարդուն գիտակցութիւնը իր ներքին Քրիստոսի գիտակցութիւնն է՝ յայտնուած մարդուն արտօնած մակարդակով: Երբ գիտակցութիւնը մարդու մտային զանազան խորհուրդներով եւ զգացումներով զբաղ չ'ըլլայ, ան կը գիտակցի Քրիստոսի ներկայութեան, անձին ճշմարիտ էութեան եւ անձը Քրիստոսի ներկայութեան փորձառութիւնը կ'ունենայ: Ճիշդ ասոր համար անոնք երանելի են, որովհետեւ «պիտի տեսնեն Աստուած»՝ Քրիստոս: Անոնք որոնք «խաղաղութիւն» կը սփռեն նաեւ երանելի են: Հակառակ որ համայն մարդկութիւնը Աստուծոյ որդիներն են, չատեր, փարած իրենց «Ես»-ին՝ սատանային, կ'ապրին նման սատանայի որդիներու: Անոնք, որոնք անտեսած են իրենց «Ես»-ը եսասիրութեամբ չեն գործեր, հետեւաբար միշտ կ'ըլլան խաղաղասէր: Ան որ եսասէր չէ չի փնտռեր իր շահը այլ ան կը հետապնդէ միայն «արդարութիւն»ը եւ ճշմարտութիւնը, նոյնիսկ ան կ'ենթարկուի հալածանքի իր բռնած ընթացքին համար:

Նման յատկութիւններ կերտող անձ մը, որ իր

ընդթր պատշաճ կերպով փոխած է, պատրաստ է աղօթելու եւ աղօթքին ալ ամենավեհ ձեւով, այն ինչ որ Յիսուս Քրիստոս սորվեցուց՝ այն ինչ որ Տէրունական աղօթք կ'անուանենք եւ յաճախ կը կրկնենք: Յիսուս աղօթք չտուաւ այլ աղօթելու ձեւը սորվեցուց: Ան նախ ըսաւ. «Եթէ պիտի աղօթես, սենեակդ մտիր ու դուռդ գոցէ»: Ասոր իմաստը փոխաբերական է եւ ոչ բառացի: Սենեակ մտնելը կը ներկայացնէ միտքի ուշադրութեան՝ կեդրոնացման ուղղութիւնը, որ պէտք է ըլլայ անձին իր ներքին Քրիստոսի վրայ եւ ոչ արտաքին աշխարհի: Դուռը գոցելն ալ կը ներկայացնէ ձերբազատումը աշխարհի շլացուցիչ հետապնդումներէն: Աս ալ մաս կը կազմէ աղօթելէ առաջ ինքնապատրաստութեան անհրաժեշտութեան:

Հետեւեալը Յիսուսի սորվեցուցած աղօթելու ձեւն է.



Այս աղօթելու ձեւը լաւ ըմբռնելու համար հոս անոր վերլուծումը պիտի ընթանայ վերջաւորութենէն դէպի սկիզբը: Զիշդ է թէ Աւետարանին մէջ վերեւի վերջին տողը չկայ, ան աւելի վերջ աւելցուած է: Բայց պատշաճ է այդ տեղեկութիւնը տալ, որովհետեւ մարդ պէտք է գիտնայ թէ Որո՞ւ է որ ինք պիտի աղօթէ:

Առաջին աստիճան-

Ընդհանուր տիեզերքը կը ներկայացնէ Աստուծոյ

Թագաւորութիւնը: Հետեւաբար «արքայութիւն»-ը կը ներկայացնէ Հայր Աստուած: Հայր Աստուած ամէն ինչի ծայրագոյն թագաւորն է: «Զօրութիւն»-ը կը ներկայացնէ Հայր Աստուծոյ բղխած զօրութիւնը՝ Ս. Հոգին: Իսկ այդ զօրութեան նիւթեղէն արտայայտութիւնը, Աստուծոյ Որդին՝ Քրիստոսն է, որ Աստուծոյ «փառք»-ն է:

Երկրորդ աստիճան-

Յիսուսի սորվեցուցած այս աղօթելուն ձեւը, Աստուծոյ աս ու ան խնդրել չէ, այլ աղօթելու ամենավեհ ձեւը, որ խոկալն է: Խոկալը մարդուն միտքին իր ներքին Քրիստոսի վրայ կեդրոնացումն է բացարձակ մտային լռութեան մէջ: Դժբախտաբար մարդուն «Ես»-ը՝ սատանան, միշտ կը ջանայ խանգարել խոկումը եւ կը գործէ ի վնաս անձին: Ան չ'ուզեր իր անձին վրայ ունեցած իշխանութիւնը կորսնցնել: Նախ անձը պէտք է ինքզինք ձերբազատած ըլլայ իր «Ես»-էն եւ ահա, աս է իմաստը «չարէն փրկուելուն»:

Երրորդ աստիճան-

Անտարակոյս, նոյնիսկ անոնք, որոնք որոշ չափով յաջողած են իրենց «Ես»-ը անտեսել, միշտ անկէ փորձուելու վտանգին մէջն են, ուրեմն միշտ պէտք է ուշիմ ըլլալ եւ իրենք զիրենք հսկել, որպէսզի «Ես»-ը դարձեալ իր «գլուխը» չբարձրացնէ: Անձը նաեւ ուշադիր պէտք է ըլլայ, որ չփորձուի աշխարհիկ ցանկութիւններէ եւ հետապնդումներէ:

Չորրորդ աստիճան-

Անձը պէտք է պատրաստ ըլլայ ընդունելու իր կեանքի բոլոր պատահարները թէ՛ լաւ, թէ՛ ալ վատ եւ վատերուն համար չմեղադրել որեւէ ուրիշ անձ կամ նոյնիսկ Աստուած, որովհետեւ անոնք բոլորն ալ իր պարտքերն են որ պարտ է ինք ուշ ու կանուխ վճարել: Անձը պէտք է ընդունի թէ ինչ որ ինք կը «քաղէ» իր

«ցանածներն» են: Հետեւաբար պէտք է միշտ լաւ ցանէ:
Հինգերորդ աստիճան-

Երբ անձը կը յաջողի վերոյիշեալներուն բոլորը լիովին կատարել ու իր միտքը լրիւ կը կեդրոնացնէ, առանց զանազան խորհուրդ ու զգացումներու, իր ներքին Քրիստոսի վրայ, այն ատեն ինք կը ստանայ Ս. Հոգիի յաւելեալ զօրութիւն, որ իր «Հանապազորդ հաց»-ն է: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ դուռը»: Անձին ներքին Քրիստոսն է, որ կը բանայ մարդուն խակրաները՝ զօրութեան կեդրոնները, որպէսզի անոնք ընդունակ ըլլան Ս. Հոգիի զօրութեան: Երբ անհատը կը ստանայ Ս. Հոգիի յաւելեալ զօրութիւն, իր գիտակցութեան մակարդակն ալ կը բարձրանայ:

Վեցերորդ աստիճան-

Բարձր գիտակցութեան մակարդակն ալ իրեն կը յայտնէ տիեզերական օրէնքները եւ անձն ալ այդ օրէնքներուն համաձայն ներդաշնակ կը յօրինէ իր կենցաղը: Ինք ապրած կ'ըլլայ ըստ Աստուծոյ կամքին փոխանակ իր «Ես»-ին կամքին: Ընդհանուր ստեղծագործութիւնը կ'ընթանայ ըստ Աստուծոյ կամքին՝ ըստ տիեզերական օրէնքներուն եւ ահա՛, աս է իմաստը «յերկինս»-ին եւ իր կենցաղն ալ ներկայացուած է «յերկրի» բառով, որովհետեւ ինք տակաւին երկրի վրայ է:

Եօթերորդ աստիճան-

Երբ մարդ կ'ապրի ըստ Աստուծոյ կամքին, միտքը կեդրոնացած Քրիստոսի վրայ եւ անտեսած արտաքին աշխարհը, ինք փորձառութիւնը կ'ունենայ ամէն ինչի միականութեան, ինք կը տեսնէ Քրիստոս ամէն հոգիի եւ ամէն ինչի մէջ եւ ահա՛, աս է Աստուծոյ «արքայութեան» փորձառութիւնը: Միթէ Յիսուս Քրիստոս չէ՞ ըսած. «Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսիդին է»:

Ութերորդ աստիճան-

Երբ անձը այս փորձառութիւնը կ'ունենայ այն բոլոր անունները որ կը ներկայացնեն ստեղծագործութեան զանազանութիւնները իրեն համար սուրբ կ'ըլլան, որովհետեւ ինք կը հասկնայ թէ բոլորն ալ Քրիստոսի զանազան երեւոյթներն են:

Իններորդ աստիճան-

Ինք նաեւ կ'անդրադառնայ թէ «յերկինս»՝ երկինքը զատ տեղ մը չէ այլ գիտակցութեան աստիճան մըն է, Քրիստոսի հետ մէկ ըլլալ եւ Անոր մէջ լուծուիլն է:

Տասներորդ աստիճան-

Այն ատեն ինք բացարձակ «հաւատքով» կը խոնարհի իր Հօր առջեւ եւ կ'ըսէ. «Ես եւ Հայր իմ մի ենք»: ԱՄԷՆ





Ո՞Վ

Ո՞վ եմ ես

Ո՞վ ես դուն,

Պարզ է կարծես

Այս գիտություն:

Պատասխանը յայտնի է

Մեր անունն է որ կ'ըսենք,

Բայց «ի՞նչ է անունը» չէ

Այն Հարցումը որ կը ըսենք:

Ես մի բան կը յիշեմ

Փիլիսոփայի մը ըսածը,

«Այդ խորհիմ Հետեւաբար Եմ»

Կը պատասխանեմ նմանը:

Բոլոր խորհուրդները

Կու գան ու կ'երթան,

Հակառակ ըսուածները

Ա՛նոնք չեն յաւերժական:

Կը դժուարանայ Հարցը,

Մեծ շփոթութեան մէջ

Կ'ըսենք մեր արհեստը

Աս ալ չ'ըլլար մի վերջ:

Ճարահատ կը խորհինք

Թէ մենք մեր զգացումներն ենք

Բայց Հարցը ետք կու գայ ինք

Յայտնելով թէ մենք անոնք չենք:

Լոյս մը կը ծագի ցարդ-

Եւ մեր մարմինը ցոյց կու տանք:

Ներքին ձայնը կ'ըսէ «Ո՞վ մարդ,

Խորհէ՛ ելլեսոյ տուր պատասխանք»:

Միլիոնաւոր բջիջներ

Կու գան ու կ'երթան ամէն օր,

Փոփոխութեան կ'ենթարկուէր

Այդ մարմինը նաեւ Հզօր:

Պարզ չէ եղեր այս գիտություն

Պատասխանը այդ Հարցումին,

Ան կը գրաւէ մեր էութիւն

Կ'ըլլայ դժուարութիւն մեր մտքին:

Ո՞վ է գիտակից մեր խորհուրդին

Եւ թափանցած մեր մարմին,

Ականատես մեր զգացումին,

Որ է Հասարակ բոլորին:

Գիտակցութիւնն է ան

Ամէն մի ողջ էակին,

Որ է միշտ անապական

Այդ Լոյսը Աստուածային:

Կեանքն է ան ամէն անհատի

Անմահ Կեանքը Քրիստոսի:

Ուստի պատասխանն է Հարցումի

«Ան եմ ես, Ան ես դուն» երանելի:

Վ. Ս.



Է

ԵՐԱՆՈՒԹԻՒՆ



ԵՐԱՆՈՒԹԻՒՆ

Երանութիւնը կատարելութեան ուղիին նպատակն է: Այս գլուխին պարունակութեան մեծ մասը կրկնութիւն մըն է առնուած «Մահուան Երանութիւնը» խորագրեալ գիրքէս:

Արդեօք կարելի է՞, որ մարդ արարած, երբ Աստուծոյ հետ ըլլալու փորձառութիւնը ունենայ եւ Աստուծոյ մէջ լուծուի, երանելի չըլլայ եւ Աստուածային երանութիւնը չի վայելէ:

Բուն երանութիւնը հասկնալէ առաջ, նախ նկատողութեան առնենք մեր փորձառութեան մաս կազմող երջանկութիւնը եւ անոր պատճառները:

Ըստ Պօստոնի մէջ 85 (1938-2023) տարուայ տեւողութիւն ունեցող ուսումնասիրութեան, որ նկատողութեան առած է երեք սերունդներ, յառաջ բերած արդիւնքներուն, երջանկութեան պատճառները ի յայտ բերուած են: Հետեւեալ տեղեկութիւնը քաղուած է բժշ. Մորիսիօ Վայնկարդըն (Mauricio Wajngarten)–ի գրութենէն: Երջանկութեան համար գտնուած են երկու գլխաւոր ազդակներ: Անոնցմէ մին առողջութիւնն է եւ երկրորդն ալ՝ ուրիշ անձերու հետ իմաստալից ու մտերիմ յարաբերութիւններ՝ բարեկամներ, ունենալը: Զանազան ուրիշ ազդակներ ալ նկատողութեան առնուած են, բայց այս ներկայացուած երկու ազդակները կարեւորներն են: Միւս ազդակներէն մին, գործի մէջ յաջողութիւնն է: Ճիշդ է թէ այս ազդակը գոհունակութիւն տուած է, բայց ոչ երջանկութիւն: Որոշ չափով ուսումն ու կրթութիւնն ալ իրենց ազդեցութիւնը ունեցած են իբրեւ դրական ազդակներ, բայց եւ սակայն կը թուի միայն 1960–էն ետք եւ այդ ազդեցութիւնը անհատին պատշաճ առողջապահական օրէնքներուն հետեւելու արդիւնք եղած է: Կը թուի թէ բժշկական գիտութիւնը

աւելի յառաջանալուն եւ հիւանդութիւններու պատճառները աւելի լաւ որոշուած ըլլալուն ուսեալները աւելի հմուտ եղած են այդ գիտութեան եւ զանոնք կիրարկած իրենց կեանքին մէջ:

Նոյն գրութեան մէջ նաեւ տեղեկացուած է, թէ անոնք որոնք չեն պայքարած իրենց միջավայրը փոխելու համար միշտ դրական եւ լաւ պատահարներու ենթարկուած են: Կը թուի թէ մեր կեանքի պայմաններու ընդունակութիւնը մեզի համար աւելի դրական ազդեցութիւն կ'ունենայ: Իսկ անոնց համար որ կը կարծեն թէ ամէն ինչ իրենք լաւագոյնս գիտեն՝ ճիշդ հակառակը եւ յայտնի կ'ըլլայ թէ սխալած են:

Այս երջանկութեան նկատմամբ ներկայացուած կարճ տեղեկութենէ ետք ջանանք ուսումնասիրել երանութիւնը, որ տակաւին մեր փորձառութեան մաս չի կազմեր:

Ինչ է երանութիւնը: Ըստ «Մալխասեան բառարան»-ի հետեւեալ բացատրութիւնը տրուած է. «Երանելի վիճակ, գերագոյն երջանկութիւն, կատարեալ բարօրութիւն», իսկ՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ի մէջ ալ հետեւեալը. «Երջանկութիւն ծայրագոյն. պարառութիւն ամենայն բարեաց. բարեբաւստութիւն կատարեալ՝ բաղձալի եւ նախանձելի. սրբանուէր վիճակի առաջնորդաց»:

Ինչպէս նախորդ գլուխներուն մէջ գրուած է ստեղծագործութեան մէջ ամէն ինչ երկուութեան ենթակայ է: Մարդ, իր կեանքի ընթացքին կրնայ ունենալ թէ՛ ուրախութեան եւ թէ՛ ալ երջանկութեան պահեր: Բայց ժամանակի դրութեան մէջ ամէն ինչ ժամանակաւոր է, հետեւաբար, անխուսափելիօրէն այդ ուրախութեան եւ երջանկութեան կը յաջորդեն տխրութեան եւ տաժանքի պահեր: Երբ իրարու սիրահարուած երկու անձեր միասին ժամանակ անցնեն, իրենք զիրենք բացարձակ

երջանիկ կը զգան: Անոնք, որովհետեւ երանութեան փորձառութիւնը չեն ունեցած, կը կարծեն թէ իրենց զգացածը երջանկութեան զագաթնակէտն է: Բախտաւոր մամբ երանութեան իրենց երջանկութիւնը ճղճիմ զգացում մըն է: Ըստ վերեւ նշուած բացատրութիւններուն, հետեւեալ ածականները օգտագործուած են. «գերագոյն», «կատարեալ», «ծայրագոյն», «բաղձալի», «նախանձելի» ինչպէս նաեւ «պարառութիւն ամենայն բարեաց»: Երանութիւնը անհուն սիրոյ արտայայտութեան եւ փորձառութեան զգացումն է: Ան նաեւ անհուն բարութեան դրսերեւումն է: Երբ Յիսուսին «բարի վարդապետ» կոչեցին, Յիսուս հետեւալ պատասխանը չէ՞ր տուած.

«Եւ Յիսուս՝ ասէ ցնա. Զի՞ ասէս զիս

բարի, չի՞նք ոչ բարի՝ Բայց մի Աստուած է»

Հայր»: (Մարկոս Ժ:18)

Յիսուս ըստ անոր. «Ինչո՞ւ բարի կը կոչես զիս. մէկէն՝ զատ բարի չկայ՝ որ Աստուած է»:

Երանութիւնը երկուութեան ենթակայ չէ, որովհետեւ ան Աստուծոյ ներկայութեան փորձառութիւնը ունենալն է: Միթէ ըստ Յիսուսի այս խօսքին Աստուած «պարառութիւն ամենայն բարեաց» չէ՞: Նաեւ չէ՞ գրուած. «Աստուած սէր է»:

Արդեօք կարելի է՞, որ մարդ արարած երանութեան փորձառութիւնը ունենայ: Անտարակոյս Յիսուս ճիշդ աս էր, որ մեզի սորվեցուց: Ինչպէս այս գիրքին նախորդ էջերուն մէջ գրուած էր, նախ անհատը պէտք է իր կեանքը իմաստաւորէ, իր կեանքին նպատակը հասկնայ եւ զայն իրականացնելու համար ալ որեւէ ջանք չի նայէ: Անհատը պարտ է այս գիրքին նախորդ գլուխներուն մէջ նշուած յատկութիւնները իր մէջ յառաջացնէ: Յիսուս իր լերան քարոզով եւ «Տէրունական

աղօթք»ով երանութեան հասնելու միջոցը մեզի սորվեցուց, որ նախորդ գլուխին մէջ ներկայացուած էր:


Իբրեւ անփոփում հետեւեալները կը ներկայացընեն երջանկութեան-երանութեան հասնելու միջոցառումները, որ մարդ արարած պարտ է իր կեանքին մէջ կիրարկել:

ա- Բարոյական առաքինութիւններ կերտել, որ պէտք է ունակական՝ սովորութիւն ըլլայ, այսինքն անձին բնոյթին մաս կազմէ, այսինքն բնոյթը փոխէ:

բ- Խնամել ընդհանուր բնութիւնը, այսինքն չապականել հողը, ջուրը եւ օդը: Սէր, ողորմութիւն ու կարեկցութիւն ցոյց տալ բոլոր բոյսերուն, անասուններուն եւ համայն մարդկութեան: Վարուիլ ուրիշի հետ, այն ինչ, որ ինք կ'ուզէ ուրիշը վարուի իր հետ:

գ- Խոկալով կերտէ հայեացք մը, որպէսզի իմաստութեամբ ճանչնայ ճշմարտութիւնը եւ զայն տեսնէ թէ՛ բնութեան մէջ եւ թէ՛ ամենուրեք եւ ճանչնայ Աստուածային միականութիւնը ու Աստուած տեսնէ ամէն ինչի մէջ:

Երանութիւնը Աստուծոյ ներկայութեան փորձառութիւնը ունենայն է:





Ը

ԻՆՉ Է ՉԱՐԸ



ԻՆՉ Է ՉԱՐԸ

Ինչ է՞ չարը: Չարը գոյութիւն ունի՞: Նա՛ մանաւանդ, իբրեւ երկրորդ հարցումին պատասխան, մարդկութեան ջախջախիչ մեծամաստութիւնը դրական պատասխան պիտի տայ: Անոնք իրենց տեսակէտը շատ դիւրութեամբ պիտի արդարացնեն ցոյց տալով աշխարհի ներկայ վիճակը՝ գողութիւններ, դաւաճանութիւններ, ատելութիւններ, մարդասպանութիւններ ... եւ ասոնց ամենէն ահռելին պատերազմներ եւ ցեղասպանութիւններ, ուր հազարաւոր եւ միլիոնաւոր «անմեղ» անհատներ իրենց կեանքերը կը կորսնցնեն: Եթէ այս բոլորը «չարութիւն» չեն, ի՞նչ են: Նոյնիսկ վերջին 110 տարուայ ընթացքին աշխարհի վրայ առ նուազն հինգ ցեղասպանութիւններ տեղի ունեցած են:

Արդեօք կարելի է՞, որ այս հարցումը նաեւ ունենայ տարբեր բացատրութիւն մը եւս: Հարցը լաւ հասկնալու համար նկատողութեան առնենք հետեւեալ կարճ պատմութիւնը:

Մարդ մը իր տան մէջ իր ներկայ կատարած գործին համար անհրաժեշտ որոշ գործիք մը կը փնտռէ: Կինը կ'ըսէ, թէ տանիքին տակի աւելորդ կարասի եւ գործիքները պահուած սենեակին մէջ է: Մարդը կ'ելլէ վերի յարկը, սենեակին դուռը կը բանայ եւ ներս կը մտնէ: Դժբախտաբար ետեւէն դուռը ինքին կը գոցուի: Այդ սենեակին մէջ դժբախտաբար լոյս չկայ, միայն պզտիկ պատուհան մը, որ առջեւը դրուած կարասիով բոլորովին ծածկուած է: Սենեակը խոր մթութեան մէջ է: Ինք քայլ մը կ'առնէ եւ կոնքը սեղանի մը անկիւնին կը զարնուի ու մեծ ցաւ կը պատճառէ: Մէկ երկու հայհոյանք ըսելէ ետք կ'որոշէ լուցքի մը վառել: Լուցքիին սփռած լոյսով, քիչ մը անորոշ, բայց որոշ կարասիները կրնայ զանազանել: Իր փնտռած գործիքն ալ

սեղանի մը վրայ կը տեսնէ: Երբ ան դէպի այդ սեղանը կը յառաջանայ, յանկարծ գետինը կեցող հաստը չուանը կը տեսնէ, բայց լուցքի լոյսին տկարութենէն այդ չուանը ինք օձ կը կարծէ եւ սենեակէն արագ մը դուրս փախելու համար աճապարանքի ընթացքին լուցքին կը մօրի, ոտքը սեղանի մը կը զարնուի եւ ինք կ'իյնայ եւ գլուխը պատին կը զարնուի: Վերջապէս դուռը կը գտնէ, կը բանայ եւ ինքզինք սենեակէն դուրս կը «նետէ» առանց իր փնտռած գործիքը առնելու: Երբ դուրս կ'ելլէ կը տեսնէ, որ տաբատը արիւնոտ է եւ կ'եզրակացնէ, թէ կոնքը, որ տեղ մը զարկած էր, վնասուած է եւ կ'արիւնի: Երբ ինք տանիքի յարկէն վար կ'իջնէ, կ'ինը զինք կը տեսնէ եւ հարց կու տայ թէ ինչո՞ւ իր ճակատը սեւցած է: Ինք կը պատասխանէ ըսելով թէ սենեակը, գետինը օձ մը կար եւ դուրս փախած ատենը ինկած էր եւ գլուխը պատին զարկած: Կ'ինը կ'ըսէ թէ հոն օձ չկայ, իրեն օձ կարծածը հաստ չուան մըն է: Պատշաճ դարմանումները կատարելէ վերջ կ'որոշէ յաջորդ անգամին պզտիկ ելեկտրական ջահ (flashlight) մը իր հետը վերի սենեակը տանիլ:

Ուսումնասիրենք այս անհատին ենթարկուած վատութիւնները: Ան կոնքը ցաւցուց եւ նոյնիսկ արիւնեցաւ, տաբատը արիւնով աղտոտեցաւ, հայհոյեց, գլուխը ցաւցուց եւ ճակատին մորթին մէջ ալ արիւնահոսութիւն եղաւ: Բարեբախտաբար ոչ մեռաւ եւ ոչ ալ շատ աւելի լուրջ վնասներու ենթարկուեցաւ: Եթէ իր կրած վնասները ուրիշ անձի մը կողմէ ստացած ըլլար, անտարակոյս ինք այդ անձը «չար» պիտի համարէր: Բայց այս պարագային, ո՞վ կամ ո՞ւր էր չարը: Չարը գոյութիւն չունէր, բայց հակառակ այս իրողութեան վատ արարքներ իրեն պատահեցան: Ո՞վ էր յանցաւորը: Կարելի է, որ ինք ըսէ, թէ յանցանքը սենեակին մութ ըլլալն էր: Նման տեսակէտ մը մեր

առջեւ շատ աւելի լուրջ եւ աւելի մեծ հարց մը կը ստեղծէ: Արդեօք «մթութիւն» ըստած բան մը գոյութիւն ունի: Անտարակոյս շատեր «այո» պիտի ըսեն: Բայց եթէ լաւ խորհինք, «մութ»ը ինքնին գոյութիւն չունի, ան միայն լոյսին պակասն է: Լոյսը դրական գոյութիւն մը ունի, բայց ոչ մութը: Հետեւաբար այս հիման վրայ կ'ըսենք, թէ մութը ժխտական է: Անկարելի է, որ մութը ինք յայտնուի երբ լոյսը հոն գոյ է: Հետեւաբար վերեւ ներկայացուած մարդուն պատահածները ինչո՞ւ տեղի ունեցան: Որովհետեւ մարդը իր հետ լոյս չէր տարած: Բայց ինք պատահածներէն իր դասը սորվեցաւ եւ որոշեց յաջորդ անգամին իր հետը լոյս սփռող ջահ առնել: Իր կրած վնասները ուրկէ՞ եկան: Կարելի է՞ ըսել. սեղանը, չուանը կամ հոն գտնուող ուրիշ կարասիները չար են: Յուսամ նման գաղափարի մը տէր չենք ըլլար:

Այս պատմութեան տուած տեղեկութեան գիտութեամբ, վերադառնանք մեր բուն հարցին: Ի՞նչ է «չար»ը եւ «չար»ը գոյութիւն ունի, թէ ոչ: Ինչպէս «մութ»ը ինք գոյութիւն չունի, բայց միայն լոյսին պակասն է, նմանապէս «չար»ը գոյութիւն չունի, այլ ան սիրոյ պակասն է: Արդեօք կարելի է՞, որ մարդ իր սիրածը որեւէ կերպով վնասէ: Սէրը դրականն է, իսկ «չար»ը՝ ժխտականը: Ուրեմն պատշաճ հարցումը պէտք է ըլլայ. ի՞նչու մարդոց մէջ սէրը կը պակսի: Որովհետեւ մարդ իր հետ «լոյս սփռող ջահ» չ'ունի: Այս պարագային «լոյս սփռող ջահ»ը մարդուն գիտակցութեան մակարդակը կը ներկայացնէ: Յայտնաբերուած ցած գիտակցութեան մակարդակն ալ մարդուն խաւարամտութիւնը կը ներկայացնէ: Միթէ «խաւար»ը եւ «մթութիւն»ը նոյն բանը չ'են: Միթէ Յիսուս Քրիստոս մեզի չ'սորվեցո՞ւց. «Աստուած սէր է» եւ Քրիստոս չ'ըսա՞ւ. «Ես եմ աշխարհի Լոյսը»: Քրիստոսի այս ըսած

Լոյսը մարդուն գիտակցութիւնն է: Ի՞նչ որակով կը յայտնաբերենք Աստուծոյ սէրը եւ ի՞ր պարգեւած գիտակցութիւնը: Պարզապէս «կը վառենք լուցքի՞ մը»՝ կը յայտնաբերենք ցած գիտակցութի՞ւն մը, կամ՝ պատշաճ «լոյս արցակող ջահ մը»՝ բարձր որակով գիտակցութիւն, որպէսզի տեսնենք ճշմարտութիւնը եւ «չուանը օձ չկարծենք»՝ պատրանքը ճշմարտութիւն չկարծենք: Վերեւ ներկայացուած պատմութեան մէջի մարդուն նման, եթէ մեր խորհուրդ, խօսք ու արարքներն ալ ըլլան խաւարամտութեամբ, արդեօք պէտք է՞ զարմանա՞նք թէ կ'ենթարկուինք չար արարքներու: Մարդ ինքն է իր ճակատագրին ճարտարապետը: Միթէ Յիսուս չըսա՞ւ. «Ինչ որ ցանես, ան կը հնձես»: Ինչպէս վերելի մարդուն պատահածներուն պատճառները կարասի չուան եւայլն էին, մեզի պատահածներուն պատճառներն ալ կրնան ըլլալ արկած մը, բնութեան աղէտ մը կամ մարդկային թշնամութիւն մը: Ճիշդ ասոր համար չէ՞ր, որ Յիսուս ըսաւ. «սիրէ քու թշնամիդ»: Յիսուս խաչին վրայէն չմեղադրեց զինք խաչողները, այլ անոնց խաւարամտութեան համար աղօթեց ու ըսաւ. «Հայր իմ ներէ անոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ինչ կ'ընեն»:

Նման բացատրութիւն մը չի վերաբերիր միայն անհատին այլ նաեւ հաւաքականութեան եւս: Երբ Ժողովուրդ կամ ազգ մը ցեղասպանութեան կ'ենթարկուի, հարց պէտք է տայ, թէ ինչո՞ւ: Ստեղծագործութեան մէջ ամէն ինչ Ս. Հոգիի զօրութեամբ յառաջ եկած է: Ամբողջական բնագիտութեան գիտունները փաստած են, թէ նիւթը զօրութենէ յառաջ եկած է եւ որովհետեւ անոնք այդ զօրութեան բնոյթը չեն գիտցած զայն կոչած են «մութ զօրութիւն»: Յիսուս մեզի սորվեցուց այդ զօրութեան Աստուծոյ զօրութիւնը ըլլալը եւ Զայն Ս. Հոգի կոչեց: Ամէն զօրութիւն զինք կառավարող օրէնքներ ունի: Նոյնն է նաեւ Ս. Հոգիի նկատմամբ: Ս.

Հոգին կառավարող օրէնքները Հայր Աստուծոյ դրած օրէնքներն են եւ Աստուած Իր դրած օրէնքներուն հակառակ չի գործեր: Որեւէ զօրութեան մը օրէնքներուն հակառակ գործել, կը նշանակէ անոնց հակազդեցութիւններուն ենթարկուիլ: Այդ հակազդեցութեան ճարտարապետը մենք ենք, բայց դժբախտաբար կը կարծենք թէ ուրիշի մը կողմէ հարութեան ենթարկուած ենք կամ մեզի պատիժ մը տրուած է: Մենք ալ ստեղծագործութեան մէջ ըլլալով, ճիշդ պիտի ըլլար ըսել, թէ մենք ալ նոյն զօրութեան արդիւնքն ենք: Ամէն զօրութիւն թրթռացում մը կը ներկայացնէ եւ այդ թրթռացումն ալ կրնայ զանազան յաճախականութիւններ (frequencies) ունենալ: Ս. Հոգիի շնորհները անընդհատ կը տեղան բոլորին վրայ անխտիր, թէ՛ բարիին եւ թէ՛ ալ չարին: Ամէն մարդ, առանց բացառութեան, այդ զօրութենէն կ'օգտուի: Եթէ Ս. Հոգիի զօրութիւնը մեր մէջ չներգործէ, մենք ալ կը մեռնինք: Բայց մենք, ի՞նչ որակով՝ ի՞նչ յաճախականութեամբ, զօրութիւն կ'արտօնենք, որ ներգործէ մեզմէ ներս: Միայն ցած յաճախականութիւնը, որ բաւ է որպէսզի մարմինը չմեռնի, այլ՝ բարձր յաճախականութիւն, որպէսզի նաեւ ստանանք Աւետարանին մէջ նշուած Ս. Հոգիի շնորհները: Երբ մարդ կը ստանայ բարձր գիտակցութիւն, իմաստութիւն, իր բոլոր խորհուրդ, խօսք ու արարքներն ալ կ'ըլլան Ս. Հոգիի զօրութեան օրէնքներուն հետ ներդաշնակ, այսինքն ըստ Աստուծոյ կամքին եւ իրեն համար ալ որեւէ հակազդեցութեան ենթարկուիլ անկարելի կ'ըլլայ:

Երբ ստեղծագործութիւնը սկսաւ, ըստ «Առակաց» գիրքին ան իմաստութեամբ եղաւ:

«Եւ իմաստութիւն չնակեցայ ՚ի խորագիրս
 Կոռնելան, զխորհուրդս եւ զգիտութիւնս կոշեցի
 յիս» : (Առակաց Ը:12)

«Եւ իմաստութիւնը, խորագիտութեան հետ կը բնակիմ,

եւ մտախոհութեան գիտութիւնը կը յայտնաբերէմ»:

«Տէր Հասարակաց պէս՝ ի սկիզբն Ճանապարհաց
իւրոց՝ ի Գործս իւր. յառաջ խան պատիւանս
Հասարակաց պէս: Իսկ շահնէ յառաջ խան պերկեր
առնել»: (Առակաց Ը:22-23)

«Տէրը զիս ստեղծեց իր ճանապարհին սկիզբը՝ իր
գործերուն համար, յաւիտենականութենէն ալ առաջ
ստեղծեց զիս: Ան զիս ծնաւ սկիզբին, երկրին
ստեղծումէն ալ առաջ»:

Իմաստութիւնը ստեղծագործութենէն առաջ ներ-
կայ էր: Ընդհանուր ստեղծագործութիւնը երկուութեան
վրայ հիմնուած է: Առանց այդ երկուութեան ստեղծա-
գործութիւնը գոյութիւն պիտի չունենար: Նոյնը կ'ըսէ
նաեւ Չինական «Թաօ» կրօնքը. «Եին եւ Եանկ»ը այդ
երկուութիւնը կը ներկայացնեն: Նոյնը կ'ըսէ նաեւ
բնագիտութիւնը. երբ առաջին նիւթը՝ ենթահիւլէական
մասնիկը, զօրութենէ կազմուեցաւ անոր հետ միասին
նաեւ «հականիւթ»ը յառաջ եկաւ: Երբ երկուքը իրար
գան երկուքն ալ կ'անհետանան: Միայն Աստուած միա-
կանութիւն է եւ երկուութիւնը, որ մենք ճշմարտու-
թիւն ըլլալ կը կարծենք միայն երազ մը՝ պատրան-
քային է: Ճիշդ ասոր համար բնագիտութիւնը կ'ըսէ, թէ
ընդհանուր տիեզերքը՝ ստեղծագործութիւնը ողջագիր
(holograph) մըն է: Այս հիման վրայ ստեղծագործութեան
մէջ երկուութիւնը կը տիրէ. արու եւ էգ, մեծ եւ
պզտիկ, երջանիկ եւ տխուր, գէր եւ նիհար, զեղեցիկ ու
տգեղ ... վերադառնալով մեր բուն նիւթին, ասոնց նաեւ
կարելի է աւելցնել բարի եւ չար, պատիժ եւ վար-
ձատրութիւն, սէր եւ ատելութիւն: Ուրեմն «չար»ը,
«պատիժ»ը եւ «ատելութիւն»ը ո՞ր կէ կու գան:

Այս հարցումին պատասխանը լաւ հասկնալու
համար անգամ մը եւս նկատողութեան առնենք վերեւ
ներկայացուած վիրաւորուած մարդը: Նոյն գիշեր ինք

անկողին կը մտնէ եւ կը քնանայ: Ինք իր քունին մէջ վախազդու երազ մը (nightmare) կը տեսնէ: Երազին մէջ թունաւոր օձերու փոսի մը մէջ կ'իյնայ եւ օձերը անընդհատ զինք կը խայթեն, ինք ցաւերու մէջ կը ջանայ փոսէն դուրս ելլել: Յանկարծ պոռալով կ'արթննայ: Աղմուկէն կ'ինն ալ կ'արթննայ եւ հարց կու տայ թէ ինչ պատահած է: Շատ հաւանական է իր առաջուց օձ կարծած չուանին ազդեցութեան տակ նման երազ մը տեսած ըլլայ: Ո՞վ ստեղծեց այդ տաժանելի երազը: Երազը յօրինողը ինքն էր, իր ենթագիտակցութեան մէջի տուեալներու ազդեցութեամբ գոյացաւ: Միայն երբ արթնցաւ, հասկցաւ թէ իր ունեցած այդ անբաղձալի փորձառութիւնը պարզապէս երազ մըն էր եւ ոչ ճշմարտութիւն: Աստուած մարդը ստեղծեց «Իր պատկերին նման», հետեւաբար մարդն ալ իր կարգին ստեղծիչ է: Ինչպէս մարդ կը ստեղծէ իր գիշերուան երազը, ան նաեւ կը ստեղծէ իր արթուն կոչած եւ ճշմարտութիւն կարծած կեանքը եւս: Ան ալ երազ մըն է: Միթէ Ս. Գիրքին մէջ չէ՞ գրուած. «Միակ ճշմարտութիւնը Աստուածն է»: Աստուած մարդուն տուաւ ազատ կամք, ապրելու ու գործելու ըստ իր կամքին: Ընդհանուր ստեղծագործութեան մէջ, նման ամէն ինչի, մարդն ալ, որ ստեղծագործութեան մէջ է, երկուութեան ենթակայ է: Իր անհատականութիւնը ունի երկու բեւեռներ, մին՝ դրականը, իր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի հետ հաղորդութեան մէջ, իսկ միւսն ալ՝ ժխտականը, իր «Ես»ը: Երբ ան կը գործէ ըստ իր «Ես»ին կամքին իր բոլոր խորհուրդ, խօսք ու արարքներն ալ կ'ըլլան ըստ Ս. Հոգիի տիեզերական օրէնքներուն հակառակ: Արդեօք պէտք է՞ զարմանք պատճառէ թէ ինք ալ կ'ենթարկուի անոնց հակազդեցութիւններուն: Միթէ Յիսուս մեզի չսորվեցո՞ւց. «Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են»: Ուրեմն այս հիման վրայ, ո՞վ է «չար»ը կամ

ո՞ւր է «չար»ը: Արդեօք պատշաճ չէ՞ ըսել թէ «չար»ին ստեղծիչը անձը ինքն է:

Վստահաբար ոմանք պիտի ըսեն, թէ իսկապէս բարի մարդիկ ալ կ'ենթարկուին չարութիւններու, հետեւաբար վերեւ ներկայացուած բացատրութիւնը պէտք է սխալ ըլլայ: Անտարակոյս նման տեսակէտ մը կը կարօտի նաեւ պատշաճ պատասխանի մը: Նկատողութեան առնենք Յիսուսի դատաւարութեան միջոցին «խաչը հանէ» պոռագողներուն նաեւ ըսած հետեւեալ խօսքը.

«Լըի-ն Դոդա՝ 'ի վերայ մէր է- 'ի վերայ

որդո՞ց մէրոց»: (Մատթէոս ԻԷ:25)

«Ատոր արիւնը թող ըլլայ մեր վրայ ու մեր գաւակներուն վրայ»

Արդեօք պատշաճ է՞ անձ մը չծնած անէծքի մը արժանանայ: Ինչո՞ւ անմեղ անձ մը, իր հօր կամ մեծհօր գործած մեղքերուն համար, պատիժի ենթարկուի: Արդեօք կարելի է՞, որ այս համարը ամբողջովին տարբեր իմաստ կամ բացատրութիւն մը ունենայ: Արդեօք կարելի է՞, որ «զաւակներուն» բառը ներկայացնէ իրենց յաջորդական վերամարմնացումները: Միթէ Հրեայ ազգը Յ.Ք. 70 թուականէն վերջ ընդհանուր աշխարհի մէջ մօտաւորապէս երկու հազար տարի ցիր-ու-ցան չե՞ղաւ եւ նոյնիսկ ցեղասպանութեան չենթարկուեցա՞ւ: Իրենք իրենց ըրածին եւ իրենք իրենց տուած անեծքին «պատիժին»՝ հակազդեցութեան չէ՞ր որ ենթարկուեցան:

Հետեւեալը առնուած է Բժշ. Անտրիւ Նիւպըրկի (Dr. Andrew Newberg) դասախօսութենէն: Ինք հոգեւոր կեանքին՝ աղօթքին եւ խոկումին, մարդկային ուղեղին վրայ ունեցած ազդեցութիւնը պրպտած եւ ուսումնասիրած է: Հետեւեալ տեղեկութիւնը հետաքրքրական ըլլալով հոս ներկայացուած է: Ինք ուսումնասիրած է ուղեղները անձերու, որ «Քիրթան Քրիեայ գունտալինի

եօկայ» (Kirtan Kriya Kundalini Yoga) անուն տեսակ մը խոկում կ'ընեն: Մեր նիւթին համար կարեւորը իր պրպտումը չէ այլ իր բացատրութիւնը, թէ ինչ է այս խոկումը եւ ինչպէս կը կատարուի: Ըստ Բժշ. Նիւպըրկի ըսածին անձը սանսգըիտ լեզուի պատկանող չորս բառեր կ'ըսէ նախ բարձրաձայն, յետոյ փսփսալով եւ յետոյ ալ անձայն եւ մի քանի անգամ կը կրկնէ: Կարեւորն ալ աս չէ, այլ՝ ըսուած բառերը: Այդ չորս բառերն են. «Սա» (Sa), «Դա» (Ta), «Նա» (Na) եւ «Մա» (Ma): Կարեւորը այս բառերուն իմաստներն են: Ըստ իր ըսածին անոնց իմաստները հետեւեալներն են. «Սա»=Մոռնալ, «Դա»=Կեանք, «Նա»=Մահ եւ «Մա»=Վերստին ծնունդ: Հետաքրքրականը այն է, թէ եթէ վերջին բառը ցանկէն դուրս հանենք եւ մնացեալ բառերը միացնենք յառաջ կու գայ հետեւեալ բառը. «սադանա», այսինքն «սատանա»: Միթէ սատանան չարը չէ՞ կոչուած: Իսկ եթէ վերջին բառը նկատողութեան առնենք, միթէ ան չի՞ ներկայացներ Յիսուսի Նիկողեմոսին ըսած խօսքը. «Եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ Թագաւորութիւնը» (Յովհաննու Գ:3), ինչպէս նաեւ. «Եթէ մէկը ջուրէն ու Հոգիէն չծնի՝ չի կրնար մտնել Աստուծոյ Թագաւորութիւնը» (Յովհաննու Գ:5): Զուրը փոխաբերաբար կը ներկայացնէ Ս. Հոգին: Իսկ մարդուն Հոգին ալ Աստուծոյ Որդւոյն՝ Քրիստոսի ներկայութիւնն է անձին մէջ եւ անոր ճշմարիտ էութիւնը: Միթէ Քրիստոս նաեւ չէ՞ ըսած. «Ես եմ դուռը»: Ուրեմն, այս հիման վրայ, չարը պարզապէս Ս. Հոգիի զօրութեան մեր մէջ ներգործելուն արգելք ըլլալն է: Ինչպէս վերեւ գրուած է Աստուած մարդուն տուած է ազատ կամք, հետեւաբար զատելու եւ դատելու կարողութիւն: Երբ մարդ կ'անտեսէ իր մէջ ունեցած ներքին դանձը՝ Քրիստոս եւ կը յարի եւ կը փարի արտաքին աշխարհի շլացուցիչ «սա», «դա» եւ «նա»երուն ինք իր մէջ յառաջ

կը բերէ սատանան՝ չարը: Այս հիման վրայ ալ պէտք է՝
ուելէ ուրիշ մէկը մեղադրել չարութեամբ: Անտարա-
կոյս այն բոլոր չարութիւնները, որ մենք մեր վրայ կը
բերենք, պէտք է կատարուին կամ բնութեան կողմէ
կամ ալ ուրիշ անձի մը կողմէ: Մեզի պատահած բոլոր
վատ պատահարներուն ճարտարապետը մենք ենք:

Շատ հաւանական է, որ այս տեսակէտը շատեր
խռովեցնէ: Անոնք կարելի են ըսել, թէ Յիսուս ալ շատ
վատ չարչարանքներու ենթարկուեցաւ, ուրեմն ի՞նչ էր
Իր մեղքը, Ինք մեղք ունէ՞ր: Ճիշդ է, թէ Յիսուս անմեղ
էր, բայց Ինք Իր վրայ բերաւ այդ բոլոր չարչարանք-
ները, ոչ մեզի պէս անգիտակցաբար, այլ՝ գիտակցաբար:
Ճիշդ անոր համար քանիցս անգամ գուշակեց իր չար-
չարանքն ու մահը: Յիսուս երբ հիւանդները կը բուժէր
«մեղքերդ ներուած են» կ'ըսէր: Բայց Ինք բացայայտ
ըսած է, թէ Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աննե-
րելի են: Յիսուս, Իր ողորմածութեամբ այդ բոլոր
մեղքերը Ինք Իր վրայ առաւ եւ այդ «պարտքերը» Ինք
վճարեց: Ճիշդ է, թէ այդ մեղքերը՝ «պարտքերը», բուժ-
ւող անձերուն համար, ներուած էր, բայց «պարտքերը»
չէին անհետացած: Միթէ Յուդայի եւ Հրեայ քահանա-
յապետներուն ըրածները ու «խաչը հանէ» ըսելնին չա-
րութիւն չէ՞ր: Անոնք միայն միջնորդներն էին կատարե-
լու համար ան ինչ որ պէտք էր ըլլալ: Միթէ Յիսուս
Գեթսեմանիի պարտէզին մէջ Հայր Աստուծոյ չաղո-
թե՞ց ըսելով. «Քու կամքդ ըլլայ եւ ոչ իմս»: Բայց
միանգամայն, միջնորդներն ալ՝ արարքները կատարող-
ներն ալ իրենց ըրածներուն պատիժներուն պիտի
ենթարկուին: Ի՞նչ եղաւ Յուդայի եւ ի՞նչ եղաւ Հրեայ
ազգին:

Ուրեմն, իբրեւ եզրակացութիւն, անձէն դուրս «չար
մը» գոյութիւն չունի: Անձը ինք իր անձնական «չար»ն
է: Ինք իր ազատ կամքով կ'որոշէ ինք իրեն բարութիւն

ընել կամ՝ չարութիւն: Երբ անձը կը չեղի կատարելութեան ուղիէն, կը յարի դէպի չարը: Այս շեղումը անձին խաւարամտութեան պատճառով սխալ դատողութեան եւ որոշումներու հետեւանքն է, ինչպէս նաեւ՝ իր կերտած դիւրամոլոր նկարագրին: Այս անբաղձալի նկարագրին պատճառն ալ պատշաճ հաւատքի պակասն է. ամբողջութեամբ Աստուծոյ ապաւինելու պակասն է. իր կեանքի բոլոր լաւ ու վատ պատահարներուն իբրեւ «Աստուծոյ կամքը» ընդունելիութեան պակասն է. վախին եւ պատահածին ցաւալի նկատելուն հետեւանքն է. իր սխալ ըմբռնումն է, թէ ինք ճշմարտութիւնը գիտէ: Ամենաբարձր իմաստութիւնը գիտնալն է, թէ ոչինչ գիտենք: Իսկ եթէ չենք գիտեր, պէտք է՞ հարց տանք թէ ի՞նչ է կեանքին նպատակը: Մարդուն կեանքին նպատակը պէտք է ըլլայ այս հարցումին պատասխանը գտնել: Նման հարցումին պատասխանը գտնելու համար ապրուած կեանքը կը կարօտի քաջութեան: Անոնք, որոնք կը խորհին, թէ իրենք իմաստուն են, մահէն կը վախնան եւ մահը կը նկատեն ժխտական արարք մը՝ չարութիւն մը ըլլալ: Շատ հաւանական է, որ ան երանութիւն մը ըլլայ:

Մարդուն կեանքը «հոգեւոր ճանապարհ» մըն է: Չարչարանքը եւ տառապանքը կեանքի դասեր են, պարտ ենք լաւագոյնս սորվիլ եւ նոյն սխալները չկրկնել: Այս հիման վրայ, մարդ արարած իր ճակատագրին համար, ան ըլլայ լաւ կամ վատ, պէտք է փառք տայ, որովհետեւ ան ունի միայն մէկ դատաւոր, ան ալ անհատը ինքն է: Ուրեմն պէտք է՞ «դատաւորը» հետապնդէ արդարութիւն: Հետեւաբար անձը նախ պէտք է արդար ըլլայ իր կեանքին, յետոյ իր անհատականութեան եւ ի վերջոյ նաեւ հաւաքականութեան՝ ընկերութեան: Արդարութիւնը ինք իր վարձատրութիւնն է: Դժբախտաբար մարդ կը կարծէ, թէ ինք իր մարմինն է եւ կը հետա-

պնդէ անոր ցանկութիւնները, կը կապուի նիւթականին, այն ինչ, որ արտաքին է եւ օր մըն ալ մարմինը կը մեռնի ինչպէս նաեւ իր անհատականութիւնը: Բայց երբ ան կը նոյնանայ ին Հոգիին հետ, որ ներքինն է, նոյնիսկ եթէ մահը գայ, ան յօժարաբար կը թողու մարմինը եւ կը մեռնի միայն «Ես»ը, իսկ իր անհատականութիւնը առանց բեւեռացումի յարութիւն կ'առնէ ու կը միանայ իր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի:

Աւետարանին սորվեցուցած հետեւեալ կէտերը յատկանշական են. «Միակ ճշմարտութիւնը Աստուածն է», «Աստուած սէր է», «Աստուած կեանքն է», «Աստուած աշխարհի Լոյսն է», «Աստուած բարի է», միթէ Որդի մարդոյ Յիսուս չէ՞ր, որ ըսաւ. «Ինչո՞ւ գիտ բարի կը կոչես, միակ բարին Աստուածն է»: Եթէ լաւ տրամաբանելով նկատողութեան առնենք այս «կէտերը», կարելի է միայն մէկ եզրակացութեան յանգիլ: Մէկ ճշմարտութիւն կայ, որ թէ՛ բարի է, թէ՛ սէր է եւ թէ՛ ալ մարդուն կու տայ անոր կեանքը եւ գիտակցութիւնը: Ուրեմն Աստուած թէ՛ մարդուն կեանքն է, թէ՛ անոր գիտակցութիւնը, հետեւաբար մարդուն կեանքը եւ գիտակցութիւնը գոյութիւն ունեցող ճշմարտութիւններ են եւ անոնք թէ՛ բարին եւ թէ՛ ալ սէր կը ներկայացնեն: Ուրեմն այս հիման վրայ մարդուն ենթարկուած բոլոր «չարութիւնները» պէտք է պատրանքային ըլլան եւ մարդուն ինք իրեն համար կատարած ստեղծագործութիւնները:



ՎԵՐՁԱԲԱՆ

Կը թուի թէ նախախնամութիւնը այս գիրքին նիւթը երկուքի բաժնած ըլլայ: Մին «կատարելութեան ուղին»՝ դրականը, իսկ միւսն ալ՝ «չարին ինչ ըլլալը»՝ ժխտականը: Մարդ ընդհանուր առմամբ այս երկուքին միջեւ կը ճօճի: Բայց Յիսուս ըսած է, թէ երկու տիրոջ չենք կրնար ծառայել: Ուրեմն համայն մարդկութեան համար առաջնակարգ հարցը ի՞նչ է: Այս հարցումին պատասխանը պէտք է նաեւ ըլլայ հարցում մը. ի՞նչ է մարդուն կեանքին նպատակը: Ուրեմն կարեւոր է այս ուղղութեամբ որոշ հասկացողութիւն մը կերտել:

Հնադարեան Յոյն փիլիսոփայութիւնը եւ դիցաբանութիւնը ցոյց կու տան թէ մարդուն կեանքին նպատակը հերոս մը ըլլալն է: Անոնց բոլոր պատմութիւնները հերոսներու կատարած արկածախնդրութիւններն են: Այս հիման վրայ ալ այդ հերոսներուն անուններն ալ անմահացած են, ինչպէս՝ Հերակլէս, Աքիլլէս, Ոդիսէս, Պերսէոս, Յասոն, Որփէոս, Կադմոս եւ Պելլերոփոն: Իրենց պայքարը եղած է միշտ արտաքին հակառակորդի մը հետ:

Նման հերոս ըլլալու գաղափարը միջնադարեան արեւմուտքի դիցաբանութեան մէջ ալ ներկայ էր: Ընդհանուր առմամբ միջնադարեան ասպետներու (chevalier) պայքարը վիշապի մը հետ եղած է: Անտարակոյս վիշապը ժխտականը կը ներկայացնէ եւ ասպետն ալ դրականը: Ասպետը, որպէսզի տիրանայ գանձի մը, պարտ է յաղթէ եւ սպաննէ վիշապը, որ գանձին գտնուած քարայրին մուտքը կը խափանէ: Դարձեալ նման դէպք մըն է նաեւ ասպետին վիշապը մեռցնելը իր սիրահարին հասնելու համար:

Յիսուս ալ մեզի սորվեցուց մեր կեանքին նպատակը, որ հեզ եւ խոնարհ ու «սուրբ» մը ըլլալն է: Սուրբ բառը սրբել բառէն կը սերի: Հետեւաբար սրբանալը

բոլոր մարդկային անպէտ խորհուրդ, խօսք ու արարքները, ինչպէս նաեւ վատ բնութիւնները սրբել, մաքրելն է: Միթէ ամենավեհ աղօթքին՝ խոկումին, նպատակն ալ «սուրբ սիրտ»՝ խորհուրդներէ եւ զգացումներէ մաքրուած եւ սրբուած միտք մը կերտել չէ՞:

Երբ կը դիտենք ներկայ մարդկութեան բռնած ընթացքը, կը թուի թէ ամէն մարդ կ'ուզէ հերոս մը ըլլալ: Անտարակոյս կան բազմաթիւ հերոսութիւններ: Ոմանք նիւթական հարստութեան տիրանալը հերոսութիւն կը նկատեն, իսկ ուրիշներ՝ գիտութիւն ամբարելը, կառավարիչ ըլլալը կամ յաջող դերասան մը ըլլալը ...:

Այս երկուքը՝ սրբանալը եւ հերոս մը ըլլալը, կը թուին իրար հակասել եւ կը ներկայացնեն բեւեռացում մը: Բայց յաճախ կը լսենք, թէ կեանքը պայքար մըն է: Ճշմարտութիւնը այն է, թէ առանց հերոս մը ըլլալու մարդ չի կրնար սրբանալ: Բայց այս հերոսութիւնը արտաքինին հետ պայքարիլ չէ, այլ ան ներքին պայքար մըն է: Նաեւ կ'ըսուի թէ սրբանալու համար անհատը ուսուցիչի մը կը կարօտի: Շատեր, «կուրու» մը՝ ուսուցիչ մը, գտնելու նպատակով, մինչեւ Հիմալայաները կ'երթան: Մարդ հոս ու հոն ուսուցիչ մը փնտռելու պէտքը չունի: Ըստ Յիսուսի սորվեցուցածին պէտք չէ ոեւէ մէկը ուսուցիչ կոչենք, միայն մէկ ուսուցիչ ունինք ան ալ Քրիստոսն է: Յիսուս նոյնիսկ չըսաւ թէ ինք մեր ուսուցիչն է, այլ՝ Քրիստոս: Ամէն անհատի ուսուցիչը իր ներսիդին է, իր ճշմարիտ էութիւնն է: Անհատին միայն կը պարտի իր ներքին լուռ ձայնին մտիկ ընել: Ուսուցիչը աշակերտին կը սորվեցնէ, միայն ու միայն երբ աշակերտը պատրաստ է եւ արժանի սորվելու: Ճիշդ ասոր համար անհատը նախ պէտք է յաղթած ըլլայ իր «Ես»ին եւ աս է իր հերոսութիւնը: Երբ անհատը պատրաստ եւ արժանի է, ինք պէտք չունի ուսուցիչ մը փնտռելու, ուսուցիչը

ինքնաբերաբար զինք կը գտնէ: Պէտք է մոռնալ թէ Քրիստոս ամէն անհատի հոգին է եւ կը սորվեցնէ ոեւէ անձի մը միջոցով: Եթէ վերեւի միջնադարեան դիցաբանութիւններուն փոխաբերական իմաստները հասկընանք, պիտի տեսնենք, որ անոնց հերոսութիւնը արտաքին պայքար մը է ալ՝ ներքին: Գանձը կը ներկայացնէ անձին իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս, որ իր մէջ կը գտնուի եւ անհատին Անոր հասնելու ճամբան ալ վիշապը կը խափանէ: Վիշապն ալ կը ներկայացնէ անհատին «Ես»ը: Նմանապէս, անհատին սիրահարը դարձեալ Քրիստոսը կը ներկայացնէ:

Վերադառնանք վերեւի բուն հարցին. «Ի՞նչ է մարդուն կեանքին նպատակը»: Պէտք է հասկնանք, թէ իբրեւ ստեղծագործութեան զագաթնակէտը, մարդուն կեանքին նպատակը պէտք է ըլլայ ընդհանուր ստեղծագործութեան նպատակը: Իսկ այս վերջինին նպատակն ալ Աստուածայայտնութիւնն է: Եթէ կը հաւատանք, թէ միակ ճշմարտութիւնը Աստուածն է, նաեւ պէտք է հասկընանք, թէ ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ յայտնութիւնն է ու մեր ճշմարիտ կարծած զանազանութիւնները բոլորն ալ պատրանքային են: Հետեւաբար ամէն մի անհատ նոյն Աստուծոյ մէկ արտայայտութիւնն է: Ուրեմն, ի՞նչ է իմաստը Աստուած յայտնաբերելուն: Աստուած մարդը ստեղծեց ազատ կամքով ու դատելու եւ զատելու կարողութիւնով: Մարդուն համար Աստուածայայտնութիւնը իր մէջ իրականացնել կը նշանակէ չարը անհետացնել: Բայց այս գիրքին վերջին գլուխին մէջ գրուած էր, թէ չարը գոյութիւն չունի, ալ ան սիրոյ պակասն է: Մարդ պարտ է իր կեանքին ընթացքին յայտնաբերել բոլոր Աստուածային յատկութիւնները եւ ահա, աս է Աստուած մեր մէջ յայտնաբերել: Այս յատկութիւններն են. ծայրահեղ սէր, ողորմածութիւն, կարեկցութիւն, հեզութիւն, խո-

նարհուլթիւն, ներողամտութիւն նոյնիսկ մինչեւ ինքնագոհողութիւն: Միթէ աս չէր, որ Յիսուս իր կենցաղով մեզի սորվեցուց: Յիսուս նախ հերոս մը եղաւ երբ ան նախ անապատին մէջ դէմ դրաւ իր «Ես»ին եւ վերջին անգամ ըլլալով ալ՝ խաչին վրայ իր ամենախոցելի վիճակին երբ անտեսեց իր ձախ կողմի խաչեալին ըսածը եւ իր «Ես»ը զոհեց խաչին վրայ: Յիսուս նաեւ իր հերոսութիւնը ցոյց տուաւ երբ Ան խարազանը ի ձեռին տաճարէն դուրս վռնտեց բոլոր վաճառականները՝ տաճարը պղծողները: Այս արարքով Յիսուս մեզի ցոյց տուաւ, թէ միակ պատերազմը, որ արտօնեալ է մեզի համար, ան ալ պայքարիլ է մեր տաճարը պղծողին դէմ: Իսկ մեր տաճարը պղծողը մեր «Ես»ն է: Միթէ Յիսուս չըսա՞ւ. «ձեր մարմինները Աստուծոյ տաճարներն են»: Երբ մարդ Աստուածային յատկութիւնները իր մէջ կը յայտնաբերէ կարելի է՞, որ չարը հոն գտնուի: Չարը կը յայտնուի երբ անձը կը չեղի կատարելութեան ուղիէն:

Ուրեմն իբրեւ եզրակացութիւն, եթէ անձը կը փափաքի իր կեանքին նպատակը լիովին կատարել պէտք չէ չեղի կատարելութեան ուղիէն: Այդ ուղիին առաջին մասը կը ներկայացնէ ինքնապատրաստութիւն, որ է հերոսանալ, իսկ մնացեալ մասն ալ՝ սրբացումը:





-Թ-

ՅԱԲԵԼՈՒԱԾԱԿԱՆ

*

Ա - ԳԷՈՐԳ Զ. ԿԱԹՈՂՈՍՈՍ

Բ - ՀՈԳԻՍ Կ'ԱՃԱՊԱՐԷ

Գ - ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆ

Դ - ԳԻԾԸ



ԳԷՈՐԳ Զ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՉՈՐԵՔՃԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Բարի ընթերցանություն:

• Աղօթքի մասին, Հայրապետը կը գրէ.

- Աղօթողին սիրտը հաւատքով, յոյսով եւ սիրով կը լեցուի, եւ ով աղօթել գիտէ՝ երջանիկ է, որովհետեւ ան դժբախտութեան վայրկեանին ունի անփոխարինելի Բարեկամ մը, որ կը լսէ զինք աղօթքով, կը մխիթարէ աղօթքով եւ կօզնէ աղօթքով: Սակայն աղօթքի այս վեհ ըմբռնումը մատչելի է անոր՝ որ աղօթել գիտէ: Աղօթքը երջանկություն կը շնորհէ անոր, որ իսկապէս կ'աղօթէ:

- Աղօթելը արուեստ մըն է, որ պէտք է սորվիլ՝ ինչպէս իւրաքանչիւր արուեստ: Եւ ինչպէս բոլոր առաքինություններուն, նոյնպէս եւ այս առաքինութեան Ուսուցիչը՝ Յիսուսն է: Անոր դիմենք եւ խնդրենք, որ մեզի աղօթել սորվեցնէ:

- Եւ ո՞վ գիտէ թէ ո՞րն է անելի արժեքատու եւ ընդունելի Տիրոջ առջեւ. ձեռագործ արձանն ըրը, որոնք յաճախ սին փառքի եւ եսասիրութեան ծնունդ են, թէ՞ Աստուծոյ սպասատրին խոնարհ աղօթքը, որ լոյսի եւ մխիթարութեան շողեր կը սփռէ ապաքախտ եւ կեանքի խորթ զաւականերու սիրտերուն մէջ:

• Տեր Յիսուսի պարգևած խաղաղության մասին, կը գրէ.

- Յիսուս է միայն ճշմարիտ խաղաղության պարգևիչը: Այո՛, աշխարհն ալ խաղաղութիւն կու տայ, սակայն կեղծ եւ խաբուսիկ: Ան մէկ ձեռքով խաղաղութեան ձիթենին կը մեկնէ քեզի, իսկ միւսով սիրտդ կը խրէ: Ան այսօր կը ժպտայ երեսիդ, իսկ վաղը՝ ակոսները կը կրճտացնէ ետեւեդ:

Ով աշխարհի պատրանքը ճաշակած է, վկայ եղած է սուտ ընկերոջ անհաւատարմութեան՝ անիկա անշուշտ համոզուած է, որ զո՛ւր է աշխարհին մէջ ճշմարիտ եւ տեսական խաղաղութիւն որոնել, այլ՝ պէտք է դիմել միայն մեզի համար խաչ ելած եւ յարութիւն առած Յիսուսին, որ խաչէն իջաւ, գերեզմանէն յաղթական ելաւ եւ Իր մտերիմներուն խաղաղութեան ողջոյն բերաւ, անոնց դառնացած եւ ընկճուած հոգիները ուրախութեամբ լեցունց:

• Մարդու խիղճին մասին կը գրէ.

- Մեր առջեւ երկու ուղի կայ. մեր խիղճը, որ թանկագին մարգարիտ է մարդուն համար՝ մաքուր եւ անարատ պահել եւ իրաւունք ունենալ մարդ կոչուելու. կամ՝ մեր խիղճը արատաւորել, կորսնցնելով մարդ կոչուելու իրաւունքը: Դժբախտաբար, երկրորդ ճամբան ընտրած ենք: Ինչո՞ւ. որովհետեւ ինքնուրաց ըլլալու, մեր անձը՝ մեր եսը, մոռնալու ընդունակութիւն չունինք:

• Կեանքի մասին, կը գրէ.

- Լրջութեամբ նայեցէ՛ք կեանքին, ինչպէ՛ս փոփոխական եւ կարճատեւ է: Սկզբնապէս ուրախ երիտասարդութեան անհոգ շրջանին, որու գեղեցկութիւնն ու փայլքը սակայն շուտով կ'անցնի: Ապա կու գայ այրական շրջանը, որ պատահականութիւններով լեցուն է՝ կորուստներ, անկատար մնացած իդէալեր, կորած յոյսեր, խաբուած փառասիրութիւններ, գոյութեան կոյի, ընտանեկան հոգեր, դաւաճանած բարեկամութիւն: Եւ վերջապէս կու գայ ծերութիւնը՝ խանգարուած առողջութեամբ եւ նուաղած ու թուլցած միտքով: Եւ այս ամէնը այնքա՛ն կարճ կը տեւէ, որ մեր մանր դիտաւորութիւնները անդադար կ'ընդհատեն. մեր չնչին երկերը, մեր ձեռքի ստեղծածը մեզմէ աւելի կ'ապրին եւ սերունդներուն կը հասնին, որոնց նոյնիսկ մեր անունը յայտնի չըլլար:

• Հաւատքի մասին, կը գրէ.

- Հաւատացեալ եղբայրներ եւ քոյրեր, ես միայն մէկ նուէր ունիմ՝ թանկարժէք նուէր մը, բոլոր հաւատացեալներուդ համար, որ կարելի չէ շուկային մէջ գնել աշխարհի ամբողջ հարստութեամբ իսկ, սակայն կարելի է ձրի ստանալ զայն ով կը ցանկայ եւ կը փնտռէ՝ բոլոր տեսակի բարիքներ Պարգեւողէն: Կենդանի հաւատքն է այդ թանկագին գանձը, եւ կը մաղթեմ Տիրոջ, որպէսզի շնորհէ այն ձեզի: Ամէն:

• Քրիստոսի Սուրբ Խաչին եւ Հայ ժողովուրդի անսարքերութեան մասին, կը գրէ.

- Սակայն կը յարգենք մենք խաչը խօսքով եւ Խաչեցեալին կը պաշտենք լոկ շրջներով: Ահա հայ ժողովուրդը՝ քաղցած ու ծարաւ. ո՞ր է սերդ հայ հարուստ: Ահա հայ ժողովուրդը՝ հիւանդ ու ախտաւոր, ո՞ր է խնամքդ հայ բժիշկ: Ահա հայ ժողովուրդը՝ թշուառ ու անմխիթար, ո՞ր է սերդ հայ հոգեւորական: Ահա հայ ժողովուրդը իրաւագօրեկ եւ անօգնական, ո՞ր է անձնուէր սերդ հայ փաստաբան: Ահա հայ ժողովուրդը սուրի եւ կրակի ճարակ, ո՞ր է սերդ հայ երիտասարդ: Միթէ՞ բոլորիս սիրտերուն մէջ ցամբած է սերը, սեր՝ որ կը գերազանցէ մարդկային սիրտի ամենէն ազնիւ զգացմունքը եւ ամենէն հանճարեղ միտքի ստղեծագործութիւնը:

Շրջապատեցէք այս խաչը, հայ եղբայրներ եւ քոյրեր, որուն փարած են ձեր պապերը, ծունկի եկէք այս խաչափայտին առջեւ, որ սիրոյ խորհրդանշան է, եւ աղօթարար ակնածութեամբ վեր նայեցէք դէպի Խաչեցեալը, որ կատարողն է ձեր խնդրանքներուն, եւ այն ատեն «ողորմութիւն եւ խաղաղութիւն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեւեանդ»:

• Աստուածաշունչի մասին, կը գրէ.

- Ուր որ Աւետարան կը քարոզուի, ուր որ կը ճաշակուի Անոր սեղանը, ուր որ Անոր սերն ու հաւատքը կը թագաւորեն եւ ուր որ սիրտի խորքէն աղօթքներ կուղղուին դէպի վեր՝ դէպի Ան, գիտցի՜ր որ Ան այդտեղ է, Իր սիրոյ հոգին կիշխէ այդտեղ եւ Անոր խաղաղութիւնը կը տիրէ:

- Այո՛, եղբայրներ եւ քոյրեր, փրկութեան միակ աղբիւրը Աստուծոյ խօսքն է, որ անանցանելի է եւ յաւիտեան կը մնայ, եթէ նոյնիսկ երկինքն ու երկիրը անցնին:

• Քրիստոնէութեան մասին, կը գրէ.

- Գործնական քրիստոնէութիւն, ահա՛ եկեղեցւոյ ներկայի նշանաբանը, խօսքի փոխարէն՝ գործ, քրիստոնէական կենցաղ, ահա Էական եւ եկեղեցւոյ ընթանալիք նոր ճամբան, որ եղած է Փրկչին առաջարկած ճամբան: Գործնական քրիստոնէութիւն. ահա քրիստոնէական եկեղեցւոյ վերանորոգութեան եւ վերակենդանութեան միակ աղբիւրն ու ուղին:

- Գործնական քրիստոնէութիւնը մեզմէ կը պահանջէ ամբողջ անձով եւ կեանքով նուիրուիլ: Ծանր եւ լուրջ պատասխանատւութիւն կ'առնէ մէկը, որ Քրիստոսին կ'աշակերտի. անկիւ յանձն կ'առնէ իր եսական բնութեան հակառակ ընթանալ:

- Կրթութիւնը, սիրելիներ, ընդունակ է միայն կազմելու, ձեւացնելու, սակայն քրիստոնէութիւնը կը կամենայ վերակազմել:

Կրթութիւնը մարդուն բնական ուժերը կը զարգացնէ, լաւ է, բայց քրիստոնէութիւնը կը կամենայ բնական մարդը մահացնել ստղծելով հոգեւոր, աստուածային մարդը, որ լաւագոյնն է:

• Հայ Եկեղեցիին մասին, կը գրէ.

- Հայ Եկեղեցին հայ ազգի գոյութեան պահպանութեան հիմքը եղած է: Հայ ազգին պատմական կեանքը անոր ստիպած է գաղթականութիւններ հանել զանազան երկիրներ: Հայ Եկեղեցին եղած է, որ իր քարոզով բուն երկրի աւանդական սովորութիւնները, ընտանիքի սրբութիւնը եւ մայրենի լեզուն պահած է, որով եւ պահպանած է հայ ազգը ձուլուելու եւ կորսուելու վտանգէն:

• Եկեղեցի երթալու մասին, կը գրէ.

- Մենք ալ եկեղեցի կու գանք՝ միասնաբար Աստուծոյ ներկայանալու: Միթէ մենք ալ պիտի չլուսաւորուի՞նք, երբ տաճարին մէջ իրապէս Աստուծոյ մօտ ըլլանք: Արդեօք մեր եկեղեցի երթալը, զգալի պիտի չըլլա՞յ մերիններուն, մեր բարեկամներուն եւ ազգականներուն համար, երբ որ տուն վերադառնանք եւ անոնց հանդիպինք: Միթէ մենք տուն, մեր գործին, մեր կոչումին պիտի վերադառնանք ըստ սովորականի՞ն, առանց որեւէ փոփոխութեան:

Աւելի վատ կշտամբանք չի՞ կրնար ըլլալ մեր տաճար երթալու մասին, քան այն, որ տաճարէն ելլելով՝ մենք նոյնը կը մնանք, եւ ամէն ինչ՝ նախկին վիճակին մէջ: Դուրսը մենք պէտք է յիշենք, որ մենք միասին տաճարին մէջ Աստուծոյ մօտ եղած ենք, միեւնոյն երգը երգած ենք, նոյն աղօթքը ըրած ենք: Մէկ հաւատք, մէկ մկրտութիւն, մէկ Աստուած եւ մէկ Հայր ունինք: Հետաւաբար, կիրակիին յաջորդող շաբթուան օրերու ընթացքին այս մէկը թող երեւի եւ երբ դարձեալ տաճար գաք ու կանգնիք՝ դուք բոլորդ, հարուստ թէ աղքատ, մեծ թէ փոքր, այր թէ կին, կրթուած թէ անուս, կարենաք իրարու ըսել, որ ամբողջ շաբթուան ընթացքին նոյն եղբայրական կապն է, որ պահած էք, ինչ որ տաճարին մէջ ձեռք ձգած էիք:

- Եղբայրներ եւ քոյրեր, եթէ մեր քրիստոնէութիւնը այս տաճարի չորս պատերով եւ ժամասացութեան ժամերով կը սահմանափակուի, մեր աստուածպաշտութիւնը կը դառնայ միմիայն դատարկ ձեւ եւ քրիստոնէութիւնը՝ կեղծ: Միայն այն ժամանակ արժէքաւոր է մեր եկեղեցի երթալը, երբ մենք այստեղ՝ տաճարին մէջ, ստացած մեր միախառնութիւնը դուրս տանինք կեանքի մէջ, եւ մեր խիղճը, որ արթնցած է այստեղ, արթուն պահենք նաեւ կեանքի մէջ:



• Բարեգործությունն ընելու մասին, կը գրէ.

- Այո, ո՛չ միայն մարդու աչքէն եւ անոր շաղակրատ լեզուէն ծածուկ, այլեւ սեփական հոգիի մեծամիտ միտքերէն ալ ծածուկ պիտի կատարուի բարի գործը, մարդու հոգիէն ազատ եւ ինքնաբերաբար պիտի բխի: Ինչպէս արեւը կը լուսատրէ եւ կը ջերմացնէ անհրաժեշտօրէն, ինչպէս ծաղիկը զարնան կը ծաղկի եւ իր բոյրը կը տարածէ իր չորս կողմը, ինչպէս անտառին առուակը ճամբորդին ծախաւը կը յագեցնէ ու կը կազդուրէ զինք, ճիշդ այդպէս նաեւ քրիստոնէայ մարդը, Յիսուսին նմանելով, ներքին պահանջ պիտի զգայ բարին գործելու, մարդու կեանքը երջանիկ դարձնելու:

Նայեցէ՛ք Յիսուսին, Ան աղբատ է, միջոցներէ զուրկ, բայց Անոր կեանքը անդադրում բարերարութիւն է: Ուր որ Ան կ'երեւի, ցան ու կարիքը կը չքանան: Աշխարհի թշուառներն ու բեռնաւորները կը հաւաքուին Անոր շուրջ եւ Անոր մօտ միփթարութիւն կը գտնեն: Մէ՛րն է Անոր աղբատիկ կեանքը հարստացնողը: Ա՛խ, եթէ մենք ալ, գոնէ փոքր չափով, ունենայինք Անոր Հոգին: Ա՛խ, այդ սովորական բարեգործութիւնը իր բազմաւնեակ արտայայտութիւններով, որքան հաճոյք կը պատճառէ բարերարողներուն, նոյնքան եւ անելի մեծ տհաճութիւն ու չարիք՝ բարերարուողներուն: Ան կը նուաստացնէ, կը խլէ մարդոց պատիւի զգացումը ու ինքնայարգութիւնը, կը սպաննէ անոր համարձակութեան ոգին եւ ասոնց փոխարէն նախանձի եւ ատելութեան ոգին կը սնուցանէ: Ան բարերարուողներուն կը պարտաւորեցնէ երախտագիտական զգացմունքով վարէն վեր նայիլ դէպի իրենց բարերարները, եւ երբ չի կատարուի այդ պահանջը, ապերախտ կը հռչակուին բարերարուողները:

• Յոյսի մասին, կը գրէ.

- Յո՛յս, կեանքի ի՛նչ մեծ ազդակ եւ, սակայն անոնց համար չես՝ որոնք միշտ աշխարհի ճոխ սեղանին առջեւ նստած են եւ պարերու, երգերու ու նուագարաններու քաղցր օրօրներով յափշտակուած՝ վայելքին մրուրը կը քամեն:

Յոյսը կիսական կեանքի ճոխութեամբ յափրացածներուն համար չէ, այլ անոնց՝ որոնք փոքրիկ ու խոնաւ խրճիթներու մէջ միշտ չոր հացի ընկեր, դռներուն եւ պատուհաններուն ճեղքերէն սուլող ցուրտ քամիէն դողդողալով ու զրնգզրնգալով կանթեղի աղօտ լոյսին առաջ չորած՝ աղօթքով եւ արտասուքով Արարիչին կ'աղերսեն, որ թերեւութիւն շնորհէ իրենց չարատանջ կեանքին:

Յոյսը այն ազգերուն համար չէ, որոնք հարստութեան եւ ուժին ապաւինած՝ ազահ աչքերը յառած են օտարի ազատութեան եւ երկիրներուն, այլ այն ազգերուն՝ որոնց երկիրը սուրի եւ կրակի ճարակ դարձած է, երիտասարդ սերունդը թաւալզլոյր ինկած:

• Միրոյ մասին, կը գրէ.

- Մեր մարդկային սիրոյ գործերուն մէջ աստուածային սերը կ'ապրի: Քրիստոնեայ եղբայրներ, սիրեցէ՛ք զիրար ազնիւ եւ ջերմ սիրով եւ կըմբռնէք աշխարհի գոյութեան եւ մարդու կեանքին արժէքն ու նպատակը:

- Գործով սեր դէպի մերձաւորը, լայն սիրտ եւ մարդասիրութիւն դէպի մարդը. ահաւասիկ է կեականը:

- Ի՞նչ է սերը, եթէ ոչ տանջանքին վրայ տարուած յաղթանակ: Երբ ռեւէ մէկուն վիշտը, տանջանքը կը թեթեւցնէս, դուն ո՛չ միայն քու սերդ կ'արտայայտես անոր նկատմամբ, այլ՝ անոր սիրոյ առաքկան կը դառնաս: Իսկ երբ ուրիշներուն տանջանքները թեթեւցնելու համար քու անձդ չ'ես խնայեր, դուն կը դառնաս անոնց սիրոյ կուրքը, անոնց աստուածը:

• Աւարտենք Հայրապետին աղօթախառն մտածումներով.

- Միակ ցանկութիւնս կըլլար, որ մենք բոլորս ալ այսօր, սրտագին խօսք մը ուղղէինք մեր Փրկիչին, ի խորոց սրտի դառնայինք դէպի Ան՝ ըսելով. «Ի՛մ Փրկիչս, ես ալ Պետրոսի նման երբեմն ուրացած եմ Քեզ: Միաբով՝ եսականութեանս եւ աշխարհասիրութեան հաճոյանալով: Խօսքով՝ անտարբերութեամբս եւ անհամարձակութեամբս, գործով՝ փառասիրութեամբս եւ մարդավախութեամբս: Դուն, ո՛վ սրտագէտ Աստուած, գիտես ու կը ճանչնաս սիրտս. գիտես, որ սիրով եւ հաճութեամբ կը կամիմ ծառայել Քեզի, սակայն տկար եմ եւ անկման տրամադիր. խնայէ՛ զիս եւ պահպանէ՛ հոգիս: Ամբաց՛ իր հաւատքս եւ զօրութի՛ւն տուր, որ Քու անունդ չուրանամ աշխարհի եւ մարդոց առջեւ, այլ՝ բոլոր սիրտով սիրեմ ու ճանչնամ Քեզ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն»:

- Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Դուն Ինքդ կենդանի օրինակն ես խօսքերուդ: Դուն մեզի նման մարմինով եւ արինով ապրեցար մեր մէջ եւ մենք Քեզ այդպէս պարգուրեամք ալ կընդունինք: Քու գերմարդկային դէմքը չէ, որ կը փնտռենք, ո՛չ ալ սուրբերու լուսեղէն պսակով զարդարուած գլուխդ, որպէսզի Քեզ Աստուծոյ ճշմարիտ վկան եւ առաքեալը համարենք: Ո՛չ, այլ՝ մենք կը նայինք Քեզի որպէս անպաճոյճ եւ պարզ մարդու, բայց ճիշդ այդտեղ կը տեսնենք Քու մարդկային մեծութիւնդ՝ Քու գերմարդկայնութիւնդ, կը տեսնենք Քու սիրտդ բխող հարուստ եւ անսպասող սէրը. ու կը զարմանանք եւ կը պաշտենք Քեզ: Եւ որպէս այդպիսին՝ Աստուծոյ ճշմարիտ Վկան եւ մեզի համար, եւ ի դէմս Քեզ՝ մենք Անտեսանելին կը տեսնենք, Որուն՝ Աստուած կը կոչենք:

Երանի՛ թէ մեր մէջ ալ կենդանանար Քու Հոգիդ եւ Քու սերդ, որպէսզի նաեւ մեր կեանքն ու գործերը վկայէին, որ տիեզերքի մէջ Աստուած կ'ապրի, որպէսզի նաեւ մեր գոյութիւնը ապացոյց ըլլար Աստուծոյ գոյութեան: Ամէն:

ՎԱՐԱՆԴ ՔՈՐԹՄՈՍԵԱՆ



ՀՈԳԻՍ Կ'ԱՃԱՊԱՐԷ

Տարիներս հաշուեցի, անդրադարձայ, թէ քիչ ժամանակ մնացած էր ապրելու քան ապրած էի մինչեւ հիմա:

Անցեալը աւելի էր քան ապագան: Ձեռքը աման մը կեռաս ունեցող մանուկի մը պէս զգացի. ան նախ լափեց զանոնք բայց երբ տեսաւ, թէ քանի մը հատ մնացած էր, սկսաւ աւելի կամաց ու եռանդով համտեսել:

Անվերջ ժողովներու, օրէնքներու եւ կանոններու մասին վիճաբանութիւններ մտիկ ընելու ժամանակ չունիմ, մանաւանդ գիտնալով թէ անոնք պիտի չկատարուին:

Այլեւս ժամանակ չունիմ անիմաստ մարդոց հանդուրժելու, որոնք հակառակ իրենց տարիքին դեռ չեն հասունցած:

Ժամանակ չունիմ մաքառելու, ինքզինքս արդարացնելու եւ զուարճացնելու ապուշ մարդիկ, որոնք վախկոտ ձեւով պահած են ինքզինքնին կատակներու ետին:

Ժամանակ չունիմ պոռոտախօս եւ հաւակնոտ մարդոց հետ զրուցելու:

Չեմ հանդուրժեր իրենց կամքը պարտադրողներուն եւ պատեհապաշտներուն:

Ձանձրացայ նախանձ անձերէ, որոնք կ'ուզեն ուրիշներու դիրքին, յաջողութեան եւ տաղանդին տիրանալ:

Ժամանակս շատ կարճ է պարապելու անիմաստ եւ անձնասէր մարդոց հետ:

Նպատակս անհրաժեշտ բաներու վրայ է, որով հոգիս կ'աճապարէ, շատ ժամանակ չունիմ: Կը փափաքիմ մարդկային կենցաղ ունեցող անձերու մօտ եւ հետ ապրիլ:

Մարդկային կենցաղ ունեցող անձեր կը ծիծաղին իրենց տկարութիւններուն վրայ, երբեք համարում չունին իրենց յաջողութիւններուն մասին եւ ինքզինքնին երբեք չեն սեպեր առանցնաշնորհեալ:

Մարդկային կենցաղ ունեցող մարդիկ պատասխանատուութիւն ունին եւ կը պաշտպանեն արժանապատուութիւնը, ճշմարտութիւնը եւ պարկեշտութիւնը:

Այս է, որ կ'արժէքաւորէ կեանքը եւ այսպիսի կեանք մը ապրիլ կ'արժէ:

Կ'ուզեմ շրջապատուիլ այնպիսի անձերով, որոնք կը հասկնան ինչպէս հասնիլ եւ օգնել ուրիշներու ու դպչիլ անոնց սրտերուն:

Կեանքի դժուար պատահարները ճաշակող անձերը սորված են իրենց հոգիին նրբութիւնը զգալ:

Այո, կ'աճապարեմ:

Կ'աճապարեմ ապրիլ ամբողջ, լման, հասունցած, չեմ ուզեր վատնել մնացած օրերս: Վստահ եմ, որ անոնք աւելի գեղեցիկ ու սիրուն պիտի ըլլան քան այն օրերը որոնք անցան:

Նպատակս վերջաւորութեան հասնիլ է գոհացած, խաղաղութեամբ թէ՛ անձիս հետ, թէ՛ սիրելիներուս եւ թէ՛ խղճիս հետ:

Երկու կեանք ունինք: Երկրորդը կը սկսի, երբ կ'անդրադառնանք այն ճշմարտութեան, թէ միայն մէկ կեանք կայ:

Ազատ թարգմանութիւն Մարիօ տէ Անտրատէ (Mario de Andrade)



ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆԸ

Կատարելութիւնը ենթակայական է եւ ոչ առարկայական, ան կը հակասէ անհատական եւ մշակութային փոփոխակի հասկացողութեանց:

Բոլորս ալ ծնած ենք այն ինչ, որ պէտք է ըլլանք՝ «կատարեալ» մեր կենցաղին եւ կեանքի նպատակին համաձայն:

Պէտք է ջանանք ըլլալ, մեր կարողութեան ամենալաւագոյնը՝ սիրող, ներողամիտ եւ կարեկից:

Թռչուն մը երբեք չի կրնար կատարեալ ձուկ մը ըլլալ, իսկ ձուկ մըն ալ՝ կատարեալ թռչուն: Եթէ կը յուսանք, որ ձուկը պիտի թռչի, յուսախափ կ'ըլլանք. եւ ահա՛ այդ է կատարելութիւնը:

Միանգամայն, կատարելապաշտ մարդիկ կ'ըլլան զօրաւոր եւ կեդրոնացած, պաշարուած Աստուածատուր վարպետութեամբ:

Անոնք կ'ըլլան պահանջկոտ թէ՛ իրենք իրենց եւ թէ՛ ուրիշներու, որպէսզի կարողանան բարելաւել աշխարհը իրենց առաքինութեամբ եւ յայտնաբերումներով:

Դուն ալ անոնցմէ մէկն ես:

Բոլորս ալ բնութեան մէջ մեր տեղը ունինք եւ ստեղծագործութեան մաս կը կազմենք:

Միայն Աստուած կատարեալ է:

Ազատ թարգմանութիւն

Ոմն



ԳԻԾԸ

Մարդ մը իր ընկերոջ յուղարկաւորութեան դամբանական մը կը կարդայ: Շիրմաքարին վրայ փորագրուած թուականներուն կ'անդրադառնայ: Նախ կը յիշէ ծննդեան թուականը, յետոյ խօսակցութիւնը կը շարունակէ արցունքներով:

Ան կ'անդրադառնայ, թէ երկու թուականներու մէջտեղի գիծը ամենակարեւորն է եւ այդ կը ներկայացնէ անոր աշխարհի վրայ ապրած կեանքը՝ իր կենցաղը: Անոնք, որոնք սիրած են զինք եւ իր կենցաղը, կը հասկնան այդ գիծին իմաստն ու արժէքը:

Կարեւորութիւն չունին մեր ստացուածքները՝ ինքնաշարժ, տուն, դրամ ..., կարեւորը այն է, թէ ինչպէս ապրած ենք մեր «գիծ»ը եւ որքան՝ սիրած:

Ուրեմն երկար եւ լաւ խորհէ այս մասին, արդեօք կա՞նք բաներ, որ կ'ուզես փոխել: Չես գիտեր, թէ որքան ժամանակ մնացած է բարեփոխութիւններու համար:

Նուազ բարկացող եղիր, աւելի գնահատող եղիր, ծայրայեղ սէր ցոյց տուր բոլոր անոնց որոնց կը հանդիպիս կեանքիդ ընթացքին:

Յարգանքով ու ժպտերես վարուինք իրարու հետ յիշելով, թէ այդ յատուկ գիծը որքան կարճ ժամանակով կրնայ տեւել:

Հետեւաբար երբ քու դամբանականդ կարդան եւ կեանքիդ գործունէութիւններուդ վերաքաղը ընեն, արդեօք հպարտ պիտի ըլլա՞ս ըսուածներուն համար՝ այդ քու ապրած «գիծ»ին մասին:

Ազատ թարգմանութիւն

Լինտա Էլլիս (Linda Ellis)



ԼԱՅՆ ՃԱՄԲԱՆ ԵՒ ՆԵՂ ՃԱՄԲԱՆ



ՏԵՐ ՀՈՎՈՒԵԱՅԷ ՉԻԱ, ԵՒ ԻՆՁ ԻՆՁ ՈՉ ՊԱԿԱՍԵԱՅԷ:



**ԹԷՊԷՏ ԵՒ ԳԱԱՅԻՅ ԵԱ Ի ՄԷՉ
ԱՏՈՒԵՐԱՅ ՄԱՀՈՒ, ՈՉ ԵՐԿԵԱՅՉ
Ի ՉԱՐԷ ՉԻ ԴՈՒ ՏԵՐ ԸՆԴ ԻԱ ԵԱ:**

